



Բնագիտություն

ԷՍՍԵԳԻՐ

Գրականություն
և Կրթություն

Է



ԺԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ 11

ՆՈՅԵՄԲԵՐ 1974

digitised by A.R.A. @

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

* * *	Յոթելեան՝ Մ. Իշխանի
Մ. ԻՇԽԱՆ	Փոսը
Բ. ՓԱՓԱՋԵԱՆ	Մ. Իշխան՝ հյանցիկ ակնարկով
ԵՊ. ՊՕՅԱՃԵԱՆ	Բանաստեղծը
Մ. ԻՇԽԱՆ	Նոր շինուող տունը
Պ. Ս.	Եւ յուշ մը՝ անոր մասին
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Պայծառ հակատով բանաստեղծը
Ս. ՊԱՐԱԲԱԹ	Սպաննեցէ՛ք Բոնաշքամ (հայացուց՝ Ս. Կիրակոսեան)
Ա. ՀԱՅԿԱԶ	Ի նշ կայ անդնականին մէջ
Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ	Երգ՝ հազորդակցութեան անհաղորդ վայրկեանին
> >	Տեղատուութիւն եւ մակընթացութիւն
> >	Բառը
> >	Հրայրքի պահեր
Յ. ՈՇԱԿԱՆ	Մաքիկ Մելիքխանեան
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Շրջադարձ
> >	Բեւեռային օր
> >	Լուսնի լոյս
> >	Հրահալ
> >	Բանաստեղծութիւն՝ երեք շարժումներով
* * *	Անտրէ Սինեպակի
Լ. ԼԱՊԷՑ	Գրողներու թակատագիրը յեղափոխութիւններու ընթացքին (հայացուց՝ Ք. Ճինկաշեան)
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Ֆրանսական ժամանակակից բանաստեղծութիւնը
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Ռուտոյֆ հաչատրեան
* * *	Անկատար համահաւաք
* * *	Շահնուրի պարանով
* * *	Բազդատական քարգմանութիւն

Բազմ



ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. Գ. ՊԵՐՏ, ԻՐԻ 11

ՆՈՅԵՄԲԵՐ 1974

ՊԵՐՏՈՒՄ

3869/483



Յ Ո Ր Ե Լ Ե Ա Ն

Մ. ԻՇԽԱՆԻ

«Բազմի» ներկայ կամարը ընթերցողին ձեռք կառն օրերուն, զազաբն ժենազոյն սրուններն Ինկերոյի մէջ, Համազոյնի Կեդրոնական «Լարչութեան նախանձութեամբ» կամազոյնի շարժմը քիտի սուսի բանաստեղծ Մ. Իշխանի գրական ու մշակութային գործունէութեան մասին:

Մ. Իշխան Երեւանի մշակութային կենտրոնի սեփական երեւի մեր մամուլին մէջ և ստալինի որին շունչու կամարուց ընթերցող կառարկութեան, որ նորայայտ բանաստեղծին կերպն մէջ զգաց իր սեպտեմբերի կորուստներուն, կիզող կորստներուն, մորթուներուն սեպտեմբերը, մասուցում՝ զնային շարունկու կանգնումը, ներքին լիբանութեան, պաշտութեան ու մարդկային սուսիներու ընդհանուր ուղղակի մէջ:


Իր մարդկային մայր գգայութիւններն ստալ. Մ. Իշխան իր սուսնը, կազի, սուսի, սեպի, սիրոյ, բարութեան, ստեղծումի, կառուցման ու վերացման նստն ընդգններն ու նոր թրթիւնը, զոյնը, արին ու խորհուրդ կազարդում սուսն՝ վերադարձուց նոյն մարդկային, որ սուստիկ սիրով, իսնդով, կոպկան կամքովանուր կառուցումը մը կազոյ յայտնուր իր երախտագիտութիւնը իրեն, իր կրգիին, իր ընդհանուր իր մայրին:

«Բազմ» կ'ըզուսն Մ. Իշխանի յարկանը, ընթերցողին յանձնելով յարկուր բանաստեղծին սուսն զերթուսն մը (ՎՓԱՅԸ) և սրտով գրուսն զանի մը վիպութիւններ՝ սուր գրականութեան մասիկ սններն:

Մ. Ի Շ Ե Ա Ն Է

Փ Ո Ս Ը

Փոս մը ահա, ոչ շատ խորունկ, ոչ շատ մեծ,
 Փոս մը բացուած
 Սրտին վրայ մայր հոգին
 Եւ փոսին մէջ՝ ոսկի փանակն արեւին...
 Կեանքի բաժակ եւ յորդագեղ կեանքի ակ
 Գիրկն այդ հոգէ, տաք, պայծառ,
 Պիտի դառնայ յանկարծ գուր,
 Մահուան խոռոչ անյատակ:
 Գորովայից ո՛չ մէկ աչք
 Պիտի կրնայ տեսնել ծլած գարնան հետ
 Այնտեղ ինկող հունտը բարդ:
 Հունտը խոռուն, բանիմաց,
 Տախկ փոսին մէջ այդ թաց
 Պիտի դառնայ բազմախորհուրդ առեղծուած...
 Գուցէ նեղէ փոսին յատակը մթին,
 Գուցէ արմատ արձակէ
 Գեպի երկրին սիրտը գոց,
 Գուցէ հասնի տարտարոս եւ հոն գտնէ հուր ու բոց,
 Բայց ո՛չ մէկ ժամ, ո՛չ մէկ աչքի դէմ կարօտ
 Պիտի դառնայ ծլարձակում յաղթական:
 Երկինքին դէմ լուսավառ
 Եւ ծառերուն քով դալար
 Փոսն այս բացուած, իբրեւ անշարժ վերջակէտ,
 Կը փակէ վէպը կեանքին
 Երգի մը պէս անաւարտ:
 Կեցած ափին, ես կը դիտեմ գայն երկար,
 Փոսն այդ խեղճ, ընտանի,
 Զայն կը դիտեմ եկող-անցնող դարերու
 Իմաստութեան աչքերով,
 Բայց կը մնամ նոյն նախամարդը անբան,
 Նոյն մահապարտը շուար...
 Ու ես գիտեմ, գիտե՛ս դուն,
 Որ փոսին մէջ հիւրընկալ
 Պիտի իջնեմք օր մը խոնարհ իբրեւ գառ,
 Գուցէ նախ ես, գուցէ դուն:
 Պիտի իջնեմք՝



Կուրծֆին վրայ եւ ափին մէջ մեր սառած
 Ամբողջ աշխարհ մը կիրքերու հրաբորբ —
 Ըմբոստանֆի խուլ որոտներ խորատոյգ,
 Մեծ սէրերու հին կարօտներ մոխրացած,
 Այնքա՛ն հարցում, այնքա՛ն հաստատ իմացում...
 Ի՞նչ կը գտնենք ես ու դու
 Այդ փոսին մէջ, ուր ճառագայթը գուարթ
 Կ'ըլլայ յանկարծ մոխրակոյտ.
 Հիւլէական ուժանիւթի այս դարուն
 Ի՞նչ կը գտնենք ես ու դու.
 — Ինչ որ գտան ուրիշներ, ոչ աւելի, ոչ պակաս,
 Ինչ որ գտան դարէ դար,
 Բայց պահեցին անդեմական խորհուրդի
 Ծանր քարին տակ մարմար:
 Հիւլէական այս դարուն,
 Երբ աստղանաւն անջրպետին մէջ անհուն
 Կը նուանէ երկինքն ազատ մաս առ մաս
 Եւ կը սուրայ դէպի նոր կեանք եւ նոր լոյս,
 Փօսը նոյնն է, ոչ շատ խորունկ, ոչ շատ մեծ,
 Սրտին վրայ մայր հողին,
 Նայն աչքն է կոյր, որուն մէջն ցանցենին
 Կը տարածուի ընդերքներուն մէջ հողին
 Եւ կը դառնայ յանբժուօքեան գետնուղին:
 Ո՛ր կը տանի, ո՞ր գալիքին անծանօթ,
 Ուրկէ՞ կ'անցնին կայարաններն իր անդարձ
 Եւ ո՞ր հրաշք վախճանին
 Կ'ըլլայ նոր այգ խաւարն այս հին փայարին...
 Փոսին առջեւ, փոսին շուրջ՝
 Աւա՛ղ, ո՛չ մէկ ցուցանակ,
 Անդեմական գրօտէն
 Վերադարձող ո՛չ մէկ շրջիկ ու նամբորդ.
 Խաչ մը միայն գլխահակ
 Իբրեւ պահակ
 Անշարժ կնիքալ սպասումի մը անծայր:

Մ. ԻՇԽԱՆ

Մ. ԻՇԽԱՆՆԻ ՀՊԱՆՑԻԿ ԱԿՆԱՐԿՈՎ

1930ի աշնան, երբ մենք ձմարան կը մտնէինք, դեռ ո՛չ նմարամաւարտ կար, ոչ ալ նմարանաւարտներու միութիւն: Իրարու աճծանօթ, տարիքով ու պատրաստութեամբ անհաւասար, հոգեկամ ու մտային ձգտումներով երբեմն իրարու անհազարդ, երբեմն անհազարդ ձմարանի հիմնադիրներու մտածումներուն ու ձգտումներուն՝ խումբ մը տղաներ ու աղջիկներ էինք միայն, եկած հոն կա՛մ մեր ուսման ծարաւէն, կամ մեր ծնողներուն ծարաւիմ յագեցում տալու:

Այն օրերուն, մենք՝ փոքրերս, քիչ մը վախվիտելով, քիչ մը հիացումով կը նայէինք հասակով եւ անշուշտ մարմնակամ ուժով ալ մեզմէ ուժեղ ու բարձրահասակ տղոց, որոնք կրնային մեր հսկիչներուն քայլերը ուղղել ծովեզերք, եթէ իրենք շուտ տուն դառնալ եւ կամ Նահրի ազուր անտառը երթալ կ'ուզէին, եթէ երազանքի իրենց մուսան եկած ըլլար:

Այն ստեղծ ինք մուշեղ էր տակաւին. ո՛չ ձենտրէնեան, ոչ ալ Իշխան: Պէտք է ըսել անշուշտ, որ այն ստեղծ հայ գրականութիւնն ու մշակոյթն ալ քանի մը հատոր բանաստեղծութիւններով նուազ հարուստ էին, քան այսօր:

Կէս մը որք, գաղթականութեան դառնութիւնը ճաշակած՝ Մ. Իշխան գիշերօթիկ էր, իսկ գիշերօթիկներու բաժինը, նոյնիսկ երբ Եանթի ու Ազբայեանի գաղթօրհանքի առարկան դառնայ, սեփական տուն մը չէ տակաւին, ու Մ. Իշխան նախ Տուշը փնտոց, երգիքը, որուն տակ մարդը ինքզինք ամբողջացած ու ապահով կը գտնէ:

Տուն մը, սակայն, ո՛րքամ ալ երդիք մը ունենայ, դեռ պարզ է, քանի կրակը չէ վառած հոն ու տաքացած պատերուն հետ նաեւ հոգիները բնակիչներուն. ու Մ. Իշխան կրակին ետեւէն վազեց:

Տարիներու քաւառումիմ հետ, հասունութեան հասնելով, անհատն ընկերութեան, ցեղին ու ազգին անցնելով, արիւնակիցներուն տունը փնտռեց, ազգին հոգին ընթացնող Հասարակական երգեց:

Եթէ համեստ չըլլար ի ծնէ, այսօր արուեստական շատաչ ու ազմուկ պիտի ըլլար իր անուան շուրջ. սակայն չորս մարդն էր Մ. Իշխան եւ ոչ հարցի: Երբ բանաստեղծը լսյար կը մտնայ՝ կը դադրի ըլլալէ առաջ տեղեկ, կը դառնայ խօսքի բանուոր, պատ շարող, եւ չ'ըլլար արուեստագէտ:

Մ. Իշխան շարունակեց ճամբան, երազելով կեանքը, կեանքը վերածելով Երազի, ու միշտ մինակ մնաց. բոլոր իրաւ բանաստեղծներուն պէս:

Երբ սարսափահար զգաց, թէ կեանքը կը հոսէր երազներուն հետ, դարձաւ ու իր Ողջոյնի խօսքը տուաւ կեանքին:

Ապա, երեւութապէս հանդարտած, ինքզինք համարեց իր կեանքի աշունին հասած, ու նստաւ հակաբազի, իր բերքի ընտիրները ի մի հաւաքելու մէկ կողքի տակ, անոնց տալով հասնող ցորեններու լիութիւնը, ու կոչեց գանձնէ «Ոսկի աշուն»:

Այնքան հասունութիւն ու ծանրութիւն կը բերէր իր վերջին, նորագոյն կտորներուն մէջ, որ միշտ պէտք է սպասել իրմէ նորանոր ստեղծագործութիւններ, դեռ կը սպասենք աշնանային այգեկութիւն, ու ճմրան հոյակապ հեքիաթներու:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ը

Այելոր՝ արտայայտութիւններէ իր անձն ու արուեստը հեռու պահող բանաստեղծ մը ասիկա. խորունկ, հանդարտ, քարի երիտասարդ մը: Հաւասարակշիռ հոգի մը՝ իր ամէնէն խօսական ու խենթ ապրումներուն առիթով իսկ: Քերթողական արուեստի իր խառնուածքը ամբողջն խարսխուած կը մնայ պայծառ զգացումի ու համապատասխան երեակայութեան մը վոյզ պատուանդաններուն վրայ: Իր կարողութիւններուն եւ արտայայտութեանց շրջագիծը միջին յստակութեան պայմանը անց, վաւերական ամուր տաղանդի մը շրջագիծն է այսօր, իր քերթողական արդիւնքի մեծամասնութեան մէջ: Կը ներկայանայ ան ինծի ներքին բարեխառն կլիմաներէ տեսապէս կենսաթափանց քղած ազուր քնարաբարի մը կենդանագիրով, այդ կենդանագրին վըճռական բացայայտութեամբը:

Մ. Իշխան, իր հոգին բանալէ առաջ արտայայտութեանց լոյսին, կը սիրէ վայն ողորկ, պատկերափայլ, կշռաւոր ու զեղածալ ընել: Կը թըշէ իր ապրումները հարուստ զգայնութիւններու եւ կէս խորհուրդի կարծես պսպղագին ծաղկեշուրի մը մէջ: Իր կեցուածքը, ինքնիր հանդէպ դժուարահաճ արուեստագէտի մը կեցուածքը կը թոփ յաճախ: Ջինք աչցելող մեծ կամ պզտիկ որեւէ ներշնչում ան չի վստահիր շուտով ճերմակ թուղթի կանչին. նախ քան ներշնչումը բառի, պատկերի ու երաժշտութեան վերածելը, բնատրութիւնն է Մ. Իշխանին անոր հետ ներքին պրոյցի մը նստիլը, խորին մտեղմութիւն ու զրեթէ անքակտելի կապ մը հաստատելը: Կը հաւատայ, իր արուեստի եթէ ոչ կատարեալ ըմբռնումով, անուազն քնապղի խուլ զրդումով մը, հոգեկան թուխսի մաքրագտիչ գորութեան: Ուրեմն՝

Հոգի մը ասիկա, հեռու նորէն մեծ աղմուկներէ, հեռու ժխոր ու տենդ սփռող զգացումներէ, պայքար ու եռուզեռ շինող երգերէ: Խաղաղութեան, հաշտ ու համերաշխ կենցաղի մը բանաստեղծն է Մ. Իշխան, իր արեան բնոյթին կարծես բոլոր վճիռներով:

ԵՂ. ԳՕՅԱՃԵԱՆ

ՆՈՐ ԾԻՆՈՒՈՂ ՏՈՒՆԸ

Սա՛ չոր հողին մէջ լքուած, ուր կիսամերկ մտնուկներ
Կը խաղային օրն ի բուն՝
Կառուցման տօն է այսօր, աշխատանքի եռուզեռ —
Նորահրբաշ յարութիւն...:

Զուարթ լոյսին մէջ գարնան, քարերու կոշտ կուրծքին դէմ
Կ'երգեն մարմեր մեծագօր,
Կ'երգեն վաստակն ըստեղծող՝ ճոյնքան մաքուր ու վըսեմ,
Որքան մանգաղն ու արօր...:

Մա՛րդն է անվերջ ու միշտ հոր, որ Աստուծոյ ստեղծած
Այո աշխարհին մէջ շա՛տ եին՝
Կ'ազէ իր իսկ բազուկով կերտել աշխարհն իր սիրած՝
Ըստ պատկերի իւր որտին:

Եւ օրէ օր, ժամէ ժամ կը բարձրանայ տենդազին
Կաթնոզն հսկայ մէկ շէնքի,
Որուն եիմքին, շաղախին, որմերուն մէջ կը դիզուին
Քրտիմք, հանճար ու ոսկի:

Հագած մարմին ու հոգի՝ տեա՛ր անշունչ քարն ու հօզ
Կը բարբառին պրնօրէն,
Իրիւ ժայթք մը քարացած՝ յուրժուրեան սլացոզ
Մարդուն անյագ կարօտէ...:

Մտաբունն պէս, կեանքին պէս, արմատներն իր մխրճած
Տա՛ք որտին մէջ մայր հողին՝
Կը կանգնի տունն ամբարձիկ՝ բանտելու լոյս ու երագ
Եւ տեսիլներ երկնային...:

Լստամուտներ՝ ծովի գոյն՝ քանի՛ դէմքեր շարունակ,
Պիտի հային ձեզմէ դուրս՝
Ըստաստմով, կարօտով, մերթ ցնծութեամբ շղարձակ,
Մերթ սրտաբեկ ու անյոյս:

Ազուա՛ր, անա՛շ սենեակներ, արդէն հոգիս իմ կ'ըզգայ
Տարիներուն ընդմէջէն՝
Բոլոր բառերն ըմտանի, խինդ ու տաղերը վազուայ,
Որ ձեզմէ ներս կը հնչեն...:

Մ. ԻՇԽԱՆ

ԵՒ ՅՈՒԹ ՄԸ՝ ԱՆՈՐ ՄԱՍԻՆ

Ո՛չ սնուշտ կամեմանիք ստուգանքով, բայց եւ ոչնչէս ճննք ալ սնցած էինք Մ. Իշխանի ճամբաներէն, երբ հասանք Սրբուստիճի ժողովարարաց վարժարանը եւ ինկանք ճեմանաբար ձեռքդին հասցին սահմ:

Փառքախնութեան հետ յայտնուող անխուստիքի զրկանքները, սնուցանին ստուշտ, գուշտային ջամբն, անձերեւը, միեւ չազար անգամ հարուստան էին մեր կիսանոթի, կիսամեղի, կիսարդիկ ժարմաները եւ հակադրութեան թեական օրէնքով անեղուցած էին պողպանեան սեւերն ու անոր հետ միտ կորուսաներուն սէրը, կարասը, մարդկան լճայքները:

Երբ Օշականի յարուցիչ շունչին տակ յանկարծօրէն արթնցաւ մէջս մինչ այդ սարսառ կերպով զգացուած զրկանութեան սէրը, առաջին Ներթին սիրաս կազուեցաւ իմ զկենսագրութեանս երգող բանաստեղծներուն:

Ներքին այդ մթնոլորտին եւ Օշականի հրահրած նոր կերքին բուռն շրջանին էր, երբ որ մը ձեռքս անցաւ Մ. Իշխանի գետններս երգըս: Հայրենական սեւերի, մթնոլորտի, բիւնաներու, մշուճներու մասին խոսող անոր կարտառով, թափիծով ու երգանքերով բարախուն սողերուն հետ հասալ ընթ շինուող սուլնային առջեւ ու հոն կանգ առի: Անխուստանքի ետուզանք մը մէջ կուսուցման տակ մը կը կարողանայի հոն, իր հիմքին, շաղախին, սրճերուն մէջ պարտիք, անճար ու սեկն ընդունելով՝ հնարեան կը բարձրանար սուշտ, շիրտեօթայք մը հարսանք՝ յանրձուրեան սյուցող մարդուն անյաղ կարտեան: Առանձին զննչ-կուսութեան մը հանդիպան ժարչու անհանգստացնող ուրախութեան մը զգացի մէկէն: Ձերցայ զօգնել ինչպէս: Վաղեցի Օշականին ճաս: Կարգացի առաջին ութ սուլները եւ աշտերս իրեն սեւեռան՝ զոչ արտասանեցի վերջին երկուքը:

Երանութիւն է այսպէս, չմեռան՝ շնք մը կեցուել,
Հայաստանի ու եղաթա,
Յետոյ իր զէմ՝ յաղթակա՞ն կանգնել, զիտնի ու ըսել,
— Այս իմ առձեռն է հարազատ:

Իսկ ես, իսկ ես ի՞նչ քրի յազուկներովս այս սեւեղ,
Ո՛ւր է եղան իմ հայրենի,
Կ'անցնին օրերս ի գուր, բայց չգարկի մուրք մը զեւ,
Փայք մը քարին լցրի...

Օշական հեռանկցաւ բուսերուն, փոխուեցաւ բուսերուն հետ ու զլուսը վեր տանելով՝ գուշտ:

— Մեր անուանական ապրումները այս պարզութեամբ ու յուզումով քանած եթէ հինգ քերթուած թերեւ իննթ, վաղը ես այս ազան իրաւ բանաստեղծ կը հաշտեմ...

Անուանական ապրումն, մասնեցի իւրովի: Այն օրերուն նման Հարցերու զեւ չէր զարեանած միտքս: Բառին բառարանային իմաստ իսկ չէի գիտեր: Բանաստեղծութիւնը սիրում էի զիս կիզան ապրումներուն մէջէն, իր առաջին պատանութեանը անտան ապրում ազու մը չհանկուզող ժարմաներուն զարթեմք: Ի՞նչ զիտնայի, որ անխիտ սեւի նուեւ թաքուն խորհուրդ մը, կը հաղորդէ կառուցելու, նազիկեցնելու ժողովական ընտրել մը երամշտականացած հիշը:

Հոս կը վերջանայ Իշխանի ստիթով էշխանաց էշխանէն մտպան յուշտ: Ըսել կ'ուզեմ՝ բանաստեղծին վաստակէն հինգ քերթուած ընտրելով Օշականին ներկայանալու հիզ շըրթ այն տանն:

Հիմա՞, Մ. Իշխանի վաստակէն մէջէն անցնելով կարելի չէ հինգ անգամ հինգէն պահաս թիւով քերթուաններու առջեւ չհանգնել ու չըսել անոնցմէ իւրաքանչիւրին ստիթով՝
— Այս իմ առձեռն է հարազատ: 9. Ս.

ՊԱՅԾԱՌ ԾԱԿԱՏՈՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Գրող մը, որ յափշտակութեամբ փնտոնեց տառապանքը, գրականութիւնը եւ երբ գտաւ առաջինը, միւսով՝ վարդազոյն ճառագայթներու տիրապետութիւն մը հաստատեց վրան:

Սեւ տրամադրութեանց ազատ գօտի մը, ուր ապաստան գտած են կախերես մը ու խոնաւ աչքեր. ըսենք՝ հայո՛ւ աչքեր, որպէսզի հասկնալի դառնայ խոնաւը. անշուշտ իր... թրջապատկան իմաստով: Բայց նաեւ՝ ոտկան մը, իր հոգիին հպատակութիւնը ուղղող մութ զգացումներուն վրայ, արեւէն, լուսինէն ու աստղերէն իջնող լոյսի թելերով հիւսուած, որով կարկաչ կը դառնայ ս.մէն ձայն, եւ ադամանդ՝ ամէն խճաքար: Մ. Իշխանի բանաստեղծութենէն ընթերցողին վազող ճամբուն վրայ, տատակը չ'արիւներ ոտքդ, չես զգար ծաւաղ ու երբ վերջացած է ընթերցումը եւ ամբողջութեամբ հոսած է այդ ճամբան հոգիիդ մէջ՝ զինով ես սրդէն ու կ'աճապարես: Ուր երթալու: Ո՛չ այնտեղ, ուր կ'երթան այսօրուան բանաստեղծութիւնները կարգալէ ետք: Կ'ուզես երթալ գեղեցիկ տուն մը դիտելու, խրճիթ մը, վրան մը, սիրոյ կրակին մէջ գալարուող մը փնտոնելու, որքի մը արցունքը սրբելու:

Տխրութիւնը, որ շուքի մը պէս կ'ընկերանայ գրեթէ իր բոլոր բանաստեղծութիւններուն՝ նկուն նկարագիրները յուսալքումի տանող հոգեկան վիճակ մը չէ, այլ՝ ներշնչումի աղբիւր է եւ ծննդաբերող գրական մթնոլորտ:

Մ. Իշխան, բանաստեղծին քառսային ու խաւար ներաշխարհը պայծառագրելու կոչումով ստեղծագործեց: Իր նիւթերը որսալու համար գործածեց այն տեսակ խայծեր, որ չկրցան անոնք չմօտենալ ու չբռնուիլ: Լեզու, երեսակայութիւն, զգացումի վեհութիւն եւ գեղագիտական այլ նախապայման խայծեր, երբ կը միանան ներշնչումը նուիրագործող բացարձակ անկեղծութեան՝ կրնանք առնել... ոտնաձայնը ճշմարիտ գրականութեան, որուն ներկայագուցիչներէն մէկը՝ ահա, ինք եղաւ:

Մարգարտափոյզը իր տառապանքին, իրագործեց վաստակ մը, որ հայելի մըն է մեր սերունդին յաղթանակը ցոլացնող եւ որուն ամէնէն առաջ պէտք է նային անոնք, որոնցմէ խուսափած է գրական պարկեշտութիւնը եւ խարխափումի մեջ են ճշմարիտ ստեղծագործութեան լուսաւոր ճամբաներուն վրայ:

Մ. Իշխան, հայ ժողովուրդին հարապատութիւնը վայելող բանաստեղծ մըն է, որովհետեւ առաւելաբար անձնական ապրումի ու գաղտնի ճամբաներով ընթերցողը առաջնորդելու շրջագծին մէջ չառաւ ստեղծագործութեան նպատակը: Ջուտ արուեստի ատաղձին վրայ աշխատող մը, գրագէտի կոչումին մօտեցած կը կարծէ, երբ կը հեռանայ իրականութենէն եւ միայն իր սեփական աշխարհին մասնակից կը դարձնէ շրջապատը, բան մը, որ անընդունելի չէ իբրեւ ապատութիւն, բայց չէ նաեւ այն միակ պայմանը, որ գրագէտը ապրելու կը սահմանէ:

Մ. Իշխանի համար, աշխարհացրիւ հայութեան ներկան ու ապագան սերտօրէն կապուած կը մնան մտաւորականին, դաստիարակին ու գրագէտին, որոնք ճակատագրական դեր ունին կատարելիք այդ ուղղութեամբ: Մ. Իշխանի այս գետնի վրայ կատարած միջամտութիւնները — յօղուածներով, խմբագրականներով ու բեմով ո՛չ միայն բովանդակութեամբ, այլեւ գեղագիտական տարավներով, գեղեցիկ նմոյշներ են խորզգացութեան ու պայծառատեսութեան: Մանաւանդ՝ ճառագայթող պարպութեամբ ոճը եւ իշխանական շքեղութեամբ լեզուն:

Ա. ՆՈՒՐԵԱՆ

Ս Ա Լ Ի Մ Պ Ա Ր Ա Ք Ա Ք

Ս Պ Ա Ն Ն Ե Ց Է ' Բ Ր Ո Ն Ա Շ Թ Ա Ն

(Հատուածներ)

Արարիկան երիտասարդ բանասերգիական ուղեկն ինչու-
րոյն բանասերգիներէն ճէկը կը համարուի Սուլիմ Պարազաթ, ու-
րուն առջին հասարակ՝ շիրաբանչիւր ներս ժամադ բացազանչու-
քիւններով պիտի ծափազուսէ գիս, եւ իւրաբանչիւր դուրս կը-
լազ՝ ետեւ արար ժառարական յընտանիներուն կողմէ ընդուն-
ուցաւ ձեռն խնդրազանչիւր:

Մարեւ Քարգանդարը ներկայացուող բանասերգիները՝
«Պղտմնեղէ՛ք Բանաշարան» «Քազիմե՛ք արամազըսն է հեղինակը ին-
քը, Սուլիմ Պարազաթ:

Մեր յաջորդ թիւին ճէկ, Մարգիս Կիրակոսեան առանձին յոգ-
ւածով ճը գիտի ներկայցնէ Սուլիմ Պարազաթը եւ անոր բա-
նասերգիական աշխարհը:

Քննադիր, ով վարդ, քնացիր,
Ինձի պէս իր կեցուածքին մէջ ցուր վատնուած դուն ո՛վ վարդ իմ, քնացի՛ր,
Հարիւր հակում. երկու հարիւր սիրտն է, ապա ցեխ է հարիւրէն ետք այդ եր-
կու,

Ջոր անդադար կը դարձնեն ողակածե կաւագործներն ու կը դառնան
Անոր հետ ետատերեւ ջրածաղկին շուրջ հոգայն.
Իսկ իմ հոգիս անզուտ է, քնացի՛ր...

— վարագոյր —

Բոնաշթա,
Անբուն հսկող վարդն է այս քու թագուիին ու թագաւորը գետն է, որ հապիւ
հապ կը բանայ վարագոյրներն իր աղբիւրին ճառագայթի մը սիրոյն պատ-
մութենէն քիւրտերու, կը ծալէ քեզ,

Դուն կ'արթննաս,
յետոյ դարձեալ կը կրկնէ՝ կը ծալէ քեզ, կ'արթննաս,
ապա դարձեալ կը կրկնէ՝ կը ծալէ քեզ եւ դուն գետին
կը յանձնուիս պատանի,

Ջոր ժամերը կը հիւսեն բամպակներու թելերով, կը տեսնեմ քեզ ու կը վազեմ
հասունցած, կը կակուղնամ, մինչ իմ ձայնը կը կորանայ՝ գրկելով իւրա-
քանչիւր դատարկութիւն ու անհուն.

Մարդուն քայլը արգելակող որեւէ թար կամ կենդանի գրկելով,
Գրկելով իր բազուկներուն ողջ լիութեամբ առանձնութիւնը վայրագ,

կը ծալէ քեզ եւ կ'արթննաս,
ապա դարձեալ կը կրկնէ՝ կը ծալէ՝ ու կ'արթննաս տեն-
դահար,

Համբ՛ նման աշխարհին, եւ օրերով կը նետուիս դուն օրերու հասակն ի
վար,

Տարիներով՝ հոգւոյն վրայ եւ միտքերը ըրպէնքերուդ կը լոցընես ըստիոմով,
կը թաւալես,

ու կնոջ մը կանչերուն ու երակիս արիւնատար միջեւ դուն՝
կը թաւալիս,
կը թաւալիս:

Բոնաշթա,

Բոնաշթա,

Բոնաշթա,

Կողմնացոյցով մը ճշդեցի ես քեզի առաջին կողմը մարդուն եւ ձգեցի, որ մարդը
ալ մոլորի, կռուէ՛ իր հետ, ա՛ն էզը իր, որպէսզի գայ քեզ հիւ,

Ա՛ն պինք, առ է՛զը իր, որպէսզի գայ ժամանակը քեզ հիւ,

Ա՛ն պինք, առ է՛զը իր, եւ ժամանակն այ դո՛ւն առ, որպէսզի գայ թոչունը քեզ
զինահակ,

Ա՛ն պինք, ա՛ն էզը իր, եւ ժամանակն ու մարմինը թոչունին, որպէսզի գայ
քեզ Աստուած,

Աստուածն ա՛լ առ եւ ըսէ՛ հարսանիքներն իմ սկսան,

Ու բռնակալ յառաջացիր ափերուդ մէջ խորերը քու հոգիին, կոր դուն կ'ընես
զոգատոր՝ այծեամներուն ու ջուրերու դաշտամուկին համար,

Ու հայերուն սիրոյն նաեւ, որոնք Խապուր գետը կ'ընեն արմատախիլ պատ-
վորակութիւն առ պատուիրակութիւն ու կը սուպին դէպի քեզ՝ նժոյզներով
ու կիներով, որոնք հովին դէմ կը բանաս հակումին 9/10րդ տեսողու-
թեամբ, ապա վերջին կոտորակին կ'ընես պիտենք յուսախաբ ու կը կտրես
լարը սրտին...

— Վարագոյր —

Բոնաշթա,

Բոնաշթա,

Քար կայ լեզուիս տակ

եւ ճնճղովներ սարսափահար՝ աղիքներուն. խաղա-
ղի՛մ, Բոնաշթա ...

Ճշդեցի քեզի ծոցերն ու կայմը իմ, յառաջացի՛ր, որպէսզի մեր իշխանու-
թեան միացնենք կարտինաները չարութեան, որպէսզի մենք միացնենք
ցեղախումբերն անապատի այս հովիտին ու միսին, զի մեր զէմքին կայ
հաղորդող գիծն այն մատնիչ թէ մենք կը բռնաբարենք գիշերը եւ հոգի-
ներուն որջերը, կը բռնաբարենք վարդն ու նմանակները վարդին, կը
բռնաբարենք մետաղն ու փուտը, թանձրամորթները ջրային եւ ուրուա-
կանները ֆիլիքսին ... յառաջացի՛ր, Բոնաշթա ...

Պիտի չթողունք աղբիւր մը, որ չկարօտնայ մեզի,

Պիտի չթողունք խաշխաշ մը, որ չկարօտնայ մեզի,

եւ պիտի մենք փոխատուցենք իզութիւնը իւրաքանչիւր արիւնի՝ երկու
քարաք քափուրախառն սիֆիլով, պիտի պահենք մեքենաները հաշուիչ ու
թերթերը ալիւմինիումի պետութեան մեր մարմնին մէջ պատուած սիրոյ
փոթասով...

Յառաջացի՛ր, յառաջացի՛ր, Բոնաշթա...

Համաձայնինք թող այս գիշեր, թէ դազաղը աշխարհին արդեօք ինչպէ՛ս պիտի
 վարդարենք ժապաւէններով վարդազոյն, յեղավոխութիւններով ու
 կճղակներով ոչխարներու...

Կարմանալի ես, Բոնաշթա՛,

Համակիրներդ ահա կը քնանան գետին վրայ եւ թագուհիդ անքուն հսկող
 վարդն է այս,

Իմ պատեանիս տակ քարեղէն կայ պատուաստ մը բոցարձակ... Օ՛, Բոնաշ-
 թա,

Եւ կը սպասեմ էզը իմ, որպէսզի ես քեզ ծայեմ ու սկսիմ նոր արշաւ մը տա-
 փաստանիս վրայ մերկ,

Եւ կը սպասեմ իմ թոյրերուն, որոնք հիմա կը մագցին խաղաղութիւնը մար-
 դուն՝ յայտնաբերելով պատեանն իմ քարեղէն,

Արիւնս ահա մրցավազքի է ելած՝ պորանոցին իր շուրջ բոլոր,

Անակնկալի կը բերէ կրակը իր պորանոցին ու կը մեռնի,

Մինչ շարք առ շարք լուսեանը մէջ իրենց անտառները կ'աղօթեն,

Ու յոռութեանը մէջ իր նաեւ բազէն կ'աղօթէ, ազգեր մեկնիլ կը սկսին,

Իսկ տուները բիրախի պէս կ'օղակուին...

Ջանգակներ են իմ աչքերդ, ես սպասողն եմ,

Եւ անջրպետս իր դիակը կը թուլցնէ մահիճիս վրայ,

Եւ երկուքս այ մեր գաղթին կու տանք շունչը յարութեան ու կը սպաննենք:

Ահաւասիկ կը թակեմ ես դուները աշխարհին ու պայրագին կը պահանջեմ էզը
 իմ, մինչ իմ էզը խենթութեանըս ետին եկած է ծունկի եւ կը կապէ պա-
 տուհաններն աշխարհին, որոնք կ'իյնան ինծի բաժին, կը վրդովուի, կը
 զրգոտի, կը զրգոտիմ նաեւ ես ու կը բանամ անդամներն իմ սերունդ-
 ներուն այրերու, որոնք կու զան հարանիքներուն մէջ խառնածին, ու կը
 պանզեմ.

այստեղ, ո՛վ այրը ջուրին,

այստեղ, ո՛վ այրը մահուան

եւ ո՛վ այրը խաւարներուն ճանապարհըդ, այստե՛ղ է,

Ուր կը քաշեմ պատաղիճը դէպի ինձ, կը պահանջեմ էզը իմ, մինչ իմ էզը
 խենթութեանըս ետին եկած ծնրադիր՝ կը խոստանայ ձիերուն հարթա-
 վայր մը անսահման, ուր կարելի է վազել մինչեւ որ վազը ձիերն այդ
 սպաննէ ... կ'ազդարարեմ պայրագին.

մօտեցի՛ր, ո՛վ էզը ջուրին,

մօտեցի՛ր, ո՛վ էզը մահուան,

մօտեցի՛ր, ո՛վ էզը խաւարներուն

եւ ո՛վ էզ իմ, մօտեցի՛ր,

Որովհետեւ ժամկէտէս ետք խոստացուած են ինձ երկիրներ, որոնց համար կը
 կանաչիս,

եւ դաշտեր, որոնք կ'արթննան վասն փախուստի ...

Պէյրուսի խիճերուն վրայ կը շպրտեմ ես կարօտիս ապակին
 ու կը դիտեմ փշուրները ապակին՝ արգանդնե-
 րու պէս ցրուող,

«գնդաձեւ են վիշտերը մանուկին,

գնդաձեւ են անոր առուններուն վիշտերը,

դնդաձեւ է Պէլրութը, իսկ իմ սիրտը՝ լար մըն է»:
 Ես կը կտրեմ լարը սրտին ու իմ էզը կը պահանջեմ յոգնութենէն,
 Ո՛վ դուն էզ իմ, ալ ե՛տ դարձիր Սաննիսէն եւ այն կողմէն, պոր կ'այրեն
 Թղթագործները թուղթերուն պատարագով.

Ես որտորդ եմ

Արձակեցի լուռ սանձերը աշխարհին եւ սկսայ սպանութեան իւրաքանչիւր
 նեղուցի մէջ, որ կը բերէ մարմիններուն ընտանութիւնը իրենց
 Ու մղեցի էզը իմ անջրպետին մէջ թռչկտող փետուրին (ողջո՛յն քեզ, փետուր)
 եւ փետուրին մէջ ձեռքը իմ վերածեցի ես բարձի, որպէսպի ա՛յ քնանամ եւ
 իմ էզը փետուրէն իսկ առաւել փափկութեամբ մը յառաջ մղեմ, գուրգու-
 րայի է փետուրը, կը բարձրանայ վիշտերս ի վեր, եւ կը խօսի էզիս մասին
 (ողջո՛յն քեզ, փետուր) եւ քեզ՝ էզ իմ, ողջոյն, ողջոյն ու ողջոյն քեզ,
 ո՛վ փետուր:

Աւեր կայ փետուրին մէջ,
 հունձք կայ փետուրին մէջ,
 տիկնիկներ ու երկաթներ կան փետուրին մէջ,
 եւ իմ էզը պղտոր է, ու կ'երկարէ փետուրին մէջ ձեռ-
 քերը իր.

Ես կը բռնեմ դաստակը իր,
 կը փառաբանեմ փետուրը

եւ կ'աղօթեմ՝ Բոնաշթա՛, Բոնաշթա՛,

Փետուր կայ լեզուիս տակ

եւ ճնճղուկներ սարսափահար՝ աղիքներուն, կրնա՛մ
 խաղաղիլ, Բոնաշթա...

Ու քիչ մը ետք երկրամասն այս կը գրէ սգերգներն իր,
 Ապա վանտնք կը փակցնէ փռչիիս վրայ,
 Քիչ ետք կը շօշափեմ էզըս, կու լամ եւ օրերն իմ կը կուտակեմ կրակին շուրջ,
 Ու կը պատեմ իմ շունչերով դաւաճանութիւնները բոլոր,
 Եւ իմ շունչերը կը պատուին շանթերով՝
 Առաւել գուրգուրայի սրտին փլատակներէն ու ծանգերէն խորհուրդներու...

Քիչ ետք կը սլանանք, Բոնաշթա,
 Ամբաստանուած երկուքս ալ մեր տոհմերն ու սերունդները սպաննելու յան-
 ցանքով,
 Կը սլանանք ճառագայթին նման այն, որ կը սկսի բաբախել՝ երբ իր էզը կը
 բաբախէ,

կը ծնրագրէ,
 կը կծկուի,
 կը թուլնայ,

Տարիներէն կ'ապատագրէ իր էզը եւ կը տարագրուի ի սփիտս աշխարհի...

միջեւ:

(հայացուց՝ Ս. Կիրակոսեան)

Սալիմ Պարաքար

Ա. Հ Ա Յ Կ Ա Ջ

Ի՞նչ ԿԱՅ

ԱՆԴԵՆԱԿԱՆԻՆ ՄԷՋ

Քանի մը որ առաջ, մէջքս ծռած, մեր տան առջևի մարդը մեկի դնել կ'աշխատէի, երբ աչքիս պոչով տեսայ, որ անմիջական դրացիիս, Տայկաներու տան անկիւնէն կարծիք մազերով ու բարեմեւ մատաղաշ կին մը կուգայ: Ետկուեցայ: Ան հասաւ ժօտս ու կանգ առաւ: Եկատեցի, որ սիրուն էր, շատ սիրուն:

Իրարու նայեցանք ու ժպտեցանք երկուքս ալ:

Իմ ուզածս ալ այդ էր արդեն:

— Բարի լոյս, — ըսաւ շարունակելով ժպտիլ:

— Բարի լոյս, — ըսի ես ալ իրեն պէս ժպտիլս շարունակելով:

Իրերու այս վիճակէն դժգոհ ժնացի: Կար ժամանակ մը, երբ ծանօթ ու անծանօթ կը նայէին աչքերուս մէջ ու յաճախ, պատրուակ մը գտնելով, հետս խօսքի կը բռնուէին: Հիմա ատանկ բան չկա՛յ ... Անգամ մը խորշոմած դէմքիս ու սպիտակած մազերուս նային, դրսեւին միւս կողմ կը դարձնեն, կամ խորունկ մաքերու մէջ թաղուած՝ իրենց գործին կ'երթան ... Կ'երթան՝ եթէ նոյնիսկ բան-գործ չունին երթալու ...

Երբ այդ մատաղաշ կիներ կանգ առաւ քոյս, ք մտ կիներ ի՞նչ կ'ուզէ ինձմէջ անցաւ մտքէս: Պատասխանը դեռ մտքիս մէջ որոնելու վրայ էի, երբ իր մեղքի սպիտակ թուղթը երկարեց ինձի ու ըսաւ, թէ իր հասցէն է.

— Իմ հասցէս է, — ըսաւ թուղթը վեր ու վար շարժելով, — եկայ կարգադրութիւններ ընելու Հիլիպրէնային հետ — Հիլիպրէնայը մեր թաղի մեռելաթաղն է, որ երբ մեռնիմ, յուզարկաւորութիւնս իր Հաստատութեան մէջ տեղի ունենայ:

Այս տեղեկութիւնը տուած պահուն այնպէ՛ս անուշ կը ժպտէր, որ կարծես դաշտահանդէսի, պալոյի կամ նման շատ հաճելի բանի մը մասին է, որ զիկուցում կուտար:

Իր գուարթութենէն վարակուած՝ ես ալ կը ժպտէի:

— Ինչո՞ւ կը խնդաս, — Հարցուց:

— Ի՞նչ գիտնամ ... Քու օրինակի՞դ կը հետեւիմ ... Յետոյ քու տարիքը ունեցող ազնկան մը համար մահուան մասին մատմելլը պարմանայի ու գուարճալի կը թուի ինձի ... Ես քեզմէ անուագն երկու անգամ աւելի տարեց եմ, բայց քեւ մահուան մասին չեմ մտածեր: Կր սպասեմ, որ արքայութիւն մտնելու պայմանները քիչ մը եւս բարեփոխուին:

— Հը՞մ, — խնդաց, — հիւմար ունիս: Ես Հիւմար ունեցող մարդերը կը սիրեմ:

— Ի՞նչ ուրախ եմ ... Երկար տարիներէ ի վեր, մէկը ոչը սիրեմ չէր ըսած ինծի:

— Անու ե՛ս ըսի:

— Որուն համար տե՛սնուսպէ՛ս շնորհակալ եմ:

— Գիտե՞ս ինչ ... Ուրախ եմ, որ հաս կանգ առի հետդ խօսելու համար, — կը խօսէր ինծի այնքան ժամացած, որ իր շունչէն կ'առնէի շքրթնաներկին ելակի բուրուճը:

— Հոգեկան այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուէի, որ պէտք էր մէկուն հետ խօսէի... Ու այդ մէկը դուն եղար: — ըսաւ:

— Որուն համար ես ալ ուրախ եմ:

— Լաւ, շարունակէ ուրախ ըլլալ, բայց նաև մտիկ ընել:

— Կ'ընեմ:

— Զեր փողոցին վարի ծայրէն կ'անցնէի, երբ, Հիլիպրէնտին տեղը տեսայ. ամէ՛ն բան կարելի, մարու՛ր, լաւ դասուարուած: Պարտէզը՝ ծագիկներով լեցուն. ներկայանալի՛ր... Բարախնե՛րն ըսե՛ս... Մաքէս ըսի, որ մանեմ ներս ու խօսիմ հաստատութեան տիրոջ հետ. կարգադրութիւն ընեմ, որ երբ մեռնիմ, դիակս առ տեղէն վերցնեն: Վերջին արարողութիւնը, վրաս բացողեայ, բարախներու շուքին սակ կատարեն...
Ու թե՛ր կրկարելով ցոյց տուաւ իշըբտուն հոյակապ բարախները, օրոնց մէկուն կատարէն ասրմահաւ մը կ'աւանդէր, թէ դարուն է եկած, իր կինը բոյնին մէջ մուկրուն վրայ նստած է ու ինք երջանիկ է:

— Կր տեսնեմ, որ դուն ալ ինծի պէս ես, — ըսի:

— Ի՞նչ տեսակէտով:

— Կր տեսնեմ, որ դուն ալ բարախներն ու ասուսարակ բնութիւնը կը սիրես:

— Հոգի՛ կու տամ:

— Որ այդպէս է, շատ ալ տարօրինակ չեմ գտնիր սրաիդ փափաքը ... Կիներէն ամէն բան կարելի է անկեալել. նոյնիսկ նախանձնիկ է, որ այդքան հեռուները կը աննեն ... Բայց, սիրելի օրիորդ, ներքէ, որ հարցում մը ընեմ. ուրիշ զրազում, բան-գործ չունի՞ս, որ նման մանրուքներով, դեռ շատ հեռուները գտնուող բաներու մասին կը մտածես՝ ու կարգադրութիւններ ընել կը փորձես:

— Այդ օրուան հետու կամ ծօտ ըլլալը միայն Աստուած գիտէ. գալով բան-գործիս, զրազում մը չունիմ ներկայիս, ոչ ալ՝ սպրուստի մասնագութիւն: Հայրս հարուստ է եւ տոստածնուն: Իր մէկ հատիկն եմ: Գիտե՞ս, թէ այդ ինչ կը նշանակէ:

— Կը նշանակէ, թէ կը չփացնէ քեզ:

— Այո՛: Կամքս օրէնք է իրեն համար:

— Պոյ — օ պո՛յ ...

— Կարծածիդ կամ երեւակայածիդ չափ դէ՛լ չեմ... քէլ ասալ ըսիր, թէ շատ հեռուն գտնուող մանրուք բաներով կը զրազիմ. հասկս ի՞նչ պիտի ըսես, երբ պատմութիւնս իր ամբողջութեան մէջ իմանաս:

— Պարաստ եմ լսելու իր ամբողջութեան մէջ:

— Լաւ, Երբ Հիլիպրէնտին մտայ, մտադրած էի ըսել, թէ կրկարանէն անցընելէ յետոյ մարմինս, պէտք է մոխիրը ցրուեն Գուինգ Պուլուվարի երկայնքին:

— Է՛ր ...

— Մոխիրս ցրուեն Գուինգ Պուլուվարի երկայնքին:

— Բայց ինչո՞ւ, — հարցուցի, այնքան զարմացած այս տարօրինակ

Թուող փափաքէն, որ մոռցայ անոր վրայ ծիծաղիլ ու, իր պատասխան մը կարենայ ձեռակերպելն ատաղ, շարունակեցի:

— Եթէ առաջադրած ես մահէզ ետք կ'իդուիլ, այդ հասկնալի է: Ես ալ նման միտք մը ունիմ: Չեմ փափաքիր գետնին տակ որդեր սնուցանել եւ անօգադործելի քանի մը թիզ հող պարարտացնել: Բայց լաւ չ'ըլլա՞ր, որ մոխիրդ սանկ աւելի հաճելի, խաղաղ, աղուսը տեղ մը թափուի:

— Օրինակ ա՞ր:

— Սա քու սիրած պարտէզդ եզերող բարտիններէն մէկուն տակ, օրինակի համար, ուր պառկած՝ պատահութիւն պիտի ունենաս թուռններու սաղմոսը ունկնդրելու... Կան դեռ ջրափեր, ուր խօջի պիտի բռնուիս տոռններուն հետ... Կայ մշտաբթուն ուղիներու՝ իր մրմունջով ու շառաչով... Գիտե՞մ, որ քոնի մը տարի տաղ մահացած սինակապիր մը կտակեց, որ իր մոխիրը Մանհաթան կղզիին վրայ թուռող սղանաւէ մը ցըրուեն մեծ, մշտաբթուն քաղաքին վրայ: Դեռ ուրիշ մը՝ դաղթական հայ մը կտակեց, որ իր մոխիրը տանին իր ծննդավայրը ու հոն թաղեն. այդ ալ հասկնալի է ինծի համար. բայց սա անիծուած Գուինգ Պուլուվա՞րը...

— Լճացուցի՞ր:

— Այո՛, Լճացուցի:

— Գիտե՞ս, թէ ինչո՞ւ համար կ'ուզեմ, որ մոխիրս հոն թափուի, — ըսաւ, շարանճիութիւն մը խորհող աղու մը պէս ուրախ:

— Չէ՛, ուրկէ՞ պիտի գիտնամ... Աստուած իսկ յաճախ չի կրնար դուրսել իր մեռակերտ կիներուն մտքէն անցածը:

— Աղէ՛կ, կը բացատրե՛մ... Աստուած ու Մովսէսը իրար անցընելու պէտք չունե՛ին — ուրեմն խօսակիցս Հրէուհի է անցաւ մտքէս. — առ տեղէն երեք փողոց անդին կ'ապրիմ, ձախ կողմի բլուրին դանուող մեծ տան մէջ: Տուն երթալու համար ստիպուած եմ անցնիլ ծառուղիէն. ամէն անգամ ալ, կատրե՛րը, վրաս վազելով, զիս ջախջախել կը փորձեն... Մինչեւ հիմա չյաշողեցա՞ն...

— Կը յուսամ, որ ասկէ ետքն ալ չեն յաջողիր, — մտախփեցի:

— Ես ալ կը յուսամ, բայց մեծսիրտ եմ, կ'ուզեմ, որ մուրափունուն հասնե՛ն. ինչ որ չյաջողեցան ընել, ոսկորներս ջարդել ողջութեանս, թող բնեն մահէս ետք, թող վազվրպեն մոխիրիս վրայ:

Ու սրտագին ծիծաղեցաւ:

— Պատահաբանութիւնդ շատ գէշ չէ. — ըսի, — բայց, յամենայնդէպս, մոխիրդ, ինչպէս գուն կ'ըսես, աւելի հաճելի տեղ մը թափել տալու թելադրութենէն չեմ հրաժարիր:

— Կը խոստանամ նկատի ունենալ, — պատասխանեց ժպտելով, — կը ներէք, ձեր աշխատանքին արդելք եղայ:

— Ներելու բան չկայ: Գործը չի փախիր: Միշտ հաս է: Թիշ մը կանուխ, քիչ մը ուշ եմ աւարտե՛ր՝ տարբերութիւն չ'ընե՛ր: Լման օր մը ունիմ: Ուրախ եմ, որ այս առաւօտ ինծի հանդիպելով՝ ըսիս կանգ առիր ու հաճելի խօսակցութիւն ունեցանք: Բայց խնդրեմ, ըսէ ինծի, թէ կըր շիբուլիստի գրասենականին մէջ թաղմանդ մանրամասնութիւններուն մասին խօսեցար, ի՞նչ պատասխանեցին:

— Ըսին, թէ իրենք բան մը չեն կրնար ընել: Թելադրեցին յօտարի մը կամ փաստարանի մը մօտ երթալ եւ օրինական կտակ մը պատրաստել տալ. անոր մէջ զրել տալ ամէն բան, որոշակէս նշանակել, թէ կը փոփաքիմ, որ զիական վերջուի շիբուլիստի մեռելատունէն. վերջին արարողութիւնն ալ կատարուի բացօդեայ, պարտէզին մէջ:

- Ո՛վ էր չնայ խօսողը, այդ թեկադրութիւնը ընողը :
- Մոխրագոյն աչքերով սիրուն աղջիկ մը :
- Քիչ մը գիրտուկ :
- Քիչ մը գիրտուկ :
- Շատ մը լեզուանի :
- Շատ մը լեզուանի :
- Տարբերի՛ն է : Հիշարէնտի աղջիկը : Հօրը մեռնելէն ի վեր ինք կը վարէ գործերը :
- Լաւ ապաւորութիւն ձգեց վրաս :
- Այո՛, լաւ աղջիկ է, կիրթ : Տարիներ առաջ տղուս դասընկեր է եղած ու այդ առթիւ յաճախ այցելած մեզի. այո՛, շնորհալի աղջիկ է : Դուն գիտե՞ս, թէ այդ քու սիրած պարակցիդ գոյութիւնը կարճացուած հաւերու կը պարտիս ...
- Ի՞նչ... Կարճացուած հա՞... Ա՛ս ուրկէ հանցիր... :
- Կանուպարե՞ս, գործ մը ունի՞ս, ժամանակ ունի՞ս որ պատմեմ :
- Լժան օրը իմս է, պատմէ՛ :
- Նստի՛նք, — ըսի :
- Նստի՛նք, — համաձայնեցաւ ու սուն առաջնորդող երեք սանդղիս-մատերէն երկրորդին վրայ, քով քովի, նստեցանք :
- Անուշ կը բուրեն, — ըսի քիթս վեր քաշելով :
- Շնորհակալ եմ :
- Ապա՝
- Ո՛վ ունիս, ամուրի՞ ես, — հարցուց :
- Ի՞նչ ամուրի... Ամէ՛ն բան ունի՛մ :
- Օ՛սոսոսո
- Ի՞նչ պատահեցաւ :
- Հիմա մի նայիր, քայց կարծեմ կինդ պատուհանէն կը նայի :
- Թող նայի, ի՞նչ կայ, դէ՛ռ արարքի մը մէջ չե՞նք ...
- Ձի՛ նեղուիր :
- Ինչո՞ւ պիտի նեղուի, փողոցը, ամէն ժարդու աչքին առջեւ, քոյր-եղբոր պէս քով քովի նստած՝ կը խօսի՛նք :
- Յետոյ քեզի չի՞ հարցնիր, թէ ինչնի՞ էի, ի՞նչ կը խօսէինք :
- Հաւատաքնութեան դարբ անցած է, — ըսի ժպտելով :
- Ինք ալ ժպտեցաւ :
- Ի՞նչ պատմելու վրայ էի, — ըսի՝ խօսքին թելը ձեռք աննելու համար :
- Կ'ըսէիր, թէ այդ ծաղկանոցին գոյութիւնը կարճրած կամ կար-մըրցուելու վրայ եղող հաւերու կը պարտիմ :
- Օ՛, այո՛, — ըսի ես, — հողը այն պարտէղին, որուն վրայ կը հիւ-նաս, ուր կը փափաքիս, որ վերջին արարողութիւնը կատարուէ վրայ, հի-մա մեռած ձենեւքա անուն իտալացիի մը կը պատկանէր : Ձենեւքա կաշա-գործ էր ու բարեկեցիկ : Ի՛ միջի այլոց, անշարժ կայուածներու առեւտուր ալ կ'ընէր : Երեք սիրուն աղջիկներ ունէր, Նորմա, Եվըլին ու Հելէն : Հելէնը ամէնէն փոքրը՝ ու ամէնէն սիրունն էր : Շատ կը հաւնէի իրեն :
- Այսինքն սիրահարուած էիր... :
- Ինչէ՛ր կ'ըսես... Եթէ այս պահուս խոստովանիմ, թէ քեզի կը հաւնիմ, սիրահարուած կ'ըլլամ ...
- Այո՛, հապա ի՞նչ...

— Եթէ ամէն բողոք պիտի միջամտես ու խնդիր բաներ ըսես, էլ զնա՛ : Տե՛ս, խօսքիս կապը նորէ՛ն կորսնցուցի :

— Ես կը յիշեցնեմ, Հելէնը կը գողցիր, երբ...

— Այո՛, երեքին մէջէն ամենասիրունը Հելէնն էր : Ծնենքառ տղայ գաւակ չունէր : Երբ Հիլիպրէնս ուզեց իր մեռելասան կից այդ հողը գնել Ճնենքայէն, Խաւացին, որ այդ հողին համար ինք եօթը հազար առլար առւած էր, տասնչորս հազար առլար ուզեց : Հիլիպրէնս մերժեց զիսալացիի մը կողմէ կողոպտուելը . «Թող քանի մը տարի պահէ, զինք կ'ամանցնէ», խորհեցաւ :

Սխալած էր : Իտալացին, իր ուզած գինով, սերիշի մը ծախեց հողը ու մէջէն կ'յաւ : Ասկէ մօտ երեք տարի առաջ, երբ Հիլիպրէնս դեռ չէր մահացած, օր մը, Հարթիչ մեքենայ մը, երկրաչափ մը ու քանի մը աշխատուորներ եկան ու սկսան խնդրոյ առարկայ հողը չափել, չափչփել, ցիցեր ու նշաններ գնել հող ու հողն : Հիլիպրէնս իրար անցաւ ու վարեց դուրս : Իր այն հարցումին, թէ զի նշ կ'ընեն, ի՞նչ գործի վրայ են, ի՞նչ կ'առաջադրեն շինել այդ հողին վրայ», ըսին . «Ձիւքն ին տը պիտի մը պիտի շինէք» : Հիլիպրէնսի սիրտը, քիչ մնաց յուզումէն կենար, կանդ առնէր :

— Ի՞նչ, — Հարցուց ձայնը կողորդին մէջ խեղդուած :

— Ձիւքն ին տը պիտի մը պիտի շինէք : Այսինքն՝ երկտրական օճախին մէջ պիտի խորովենք վառեակները ու կարմրցուած դեղնախնձորի հետ դնենք մասնաւոր կողովներու մէջ : Ամառը՝ դուրսը, գունաւոր հովանոցներու սաղ պիտի ուտեն յաճախողները, ձմեռը՝ ներսը, մարմարէ սեղաններու վրայ : Հող մի ընէր, շատ ներկայանալի հաստատութիւն մը պիտի ըլլայ մեր կառուցանելիքը : Ձերկարեմ : Հիլիպրէնս 40.000 առլար առլով ետ գնեց այդ հողը անսպասելի ու վերածեց քու հունամ պարտէզին, որ խորովուող վառեակի ծանր հոսք հետու պահէ մասուտին մէջ յաւիտենական քունով ննջողներու քիթին :

— Ձէի գիտեր, թէ մեռելները հող կ'առնեն, — ըսաւ քովին :

— Մի՛ հեղներ : Մենք ալ գիտենք, թէ մեռելներուն քիթը հող չ'առնէր . դեռ տեսնուած չէ, որ անոնցմէ մէկն ու մէկը կլլէ դազազէն, քիթը կոխէ մօտաւոր ազգականի մը կամ բարեկամի մը կողմէ ուղարկուած ծագկեպտակին մէջ, շունչ քաշէ ու ըսէ .

— Օ՛հ, ինչ ալ անո՛ւն կը բուրէ ... Եթէ չեմ սխալիր, դուք ալ, ծաղիկի տեղ, պտուղի կողովներ կ'ուղարկէք ... Ձեր մեռելները կ'ելլեն ինձոր մը կրծկու կամ նարինջ մը կեղտելու համար... Ձէ՛, չէն կլլեր... Այդ բոլոր բաները տեղի կ'ունենան պարզապէս շուրջիներուն, շուրջը ապրողներուն համար, իրրեւ յարգանքի վերջին արտայայտութիւն : Ինչպէս կը տեսնես, Հիմա այդ հողը վերածուած է պարտէզի . հող դրուած են սպիտակ մարմարէ աթոռներ, շուք տուող ծառեր կան : Ամրան սաք օքերուն, ներսէն կոճակ մը սեղմելով՝ կը կենդանացնեն շատրուանը : Վայրը կը դառնայ հրապուրիչ, ու անգամ մը դայն տեսնողները, քեղի պէս, կը փափաքին մեռնելէ յետոյ անկէ տարուիլ գերեզման :

— Այդ բոլորը հետաքրքրական են, բայց խնդրեմ, ըսէ ինձի, թէ դուն այդ բոլոր բաները ինչէ՞ն գիտես :

— Եթէ կը կասկածիս, թէ մտքէս կը հնարեմ, կը ստեղծեմ, կը սխալիս . ես այս գիւղին անպաշտօն քաղաքապետն եմ, աչքս ու ականջս բացած՝ ամէն օր լուր ու բարձրասանք կը հաւաքեմ :

— Օ՛հօօ

— Օ՛հօօօ, — ըսի ես ալ իրեն պէս :

— Կր մեղադրե ա զիս մեռնելէս յետոյ հոս բերուիլ փափաքելուս համար :

— Ձե՛, չեմ մեղադրեր : Տարիներ տուալ, որքանոցին մէջ, ուր ես քանի մը ամիս ապրած եմ, շրանգ անուշով տղայ մը մեռաւ : Ձինքը այնքան գովեցին պերեզմանին վրայ, որ ներկայ որբերուն մեծամասնութիւնը նախանմեցաւ, որ մեռնող աւ զովքի արժանացողը ինք չէր... Հիմակ ալ...

— Հասկցայ, տեղը այնքան հրապուրիչ է, որ ...

— Ուղի՛ղ : Իրրեւ բարեկամ, ինձմէ մէկ խրատ, չէ՛, թելադրութիւն քեզի. եթէ պատահի, որ որ. Տարբի՛թի թելադրածին պէս կտակ մը պատրաստել տաս, մուցիբ Գուինգ Պուլուվարը. մոխիրդ ցանկել տալու համար աւելի հաճելի տե՛ղ մը որո՛ւնէ :

— Կր խորհի՛ս, թէ մահէս ետք այս բոլոր բաներէն որեւէ մէկը կարելութիւն կը ներկայացնէ ... Բան մը կը գլտ՛մ, բան մը կը տեսնե՛մ, երթալիք տեղիս համար տարբերութիւն մը կ'ընէ՞, ի՞նչ կայ Անդհեականին մէջ ...

— Ես ալ քեզի նման տղէտ եմ այդ մարդին մէջ : Բան չեմ գիտեր : Ինչո՛ւ ինձի խորհուրդ կը հարցնես : Ինձմէ աւելի իմաստուն մէկը գտիբ հարցապնդելու համար :

Ալ չխտեցաւ : Ոտքի ելաւ, ժպտելով սեղմեց մեռքս աւ զնայ :

Երկար նայեցայ ետեւէն. յետոյ՝ մտայ սուս. անցայ սեղանիս առջև, նոթիբ առի պատահածին մասին՝ աւ գրի այս կտորին խորագիրը.

ՎՄՆՁ ԿԱՅ ԱՆԴԵՆԱԿԱՆԻՆ ՄԷՋ»

Ա. ՀԱՅԿԱՋ

Ա Ջ Ն Ի Ի Գ Ա Ր Ա Լ Է Ք Ե Ա Ն

Ե Ր Գ՝

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Վ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ն Հ Ա Ղ Ո Ր Դ Վ Ա Յ Ր Կ Ե Ա Ն Ի Ն

*«Բազմո՞յթ մէջ ընտ պայթող խողով, հասնող տառապանք՝
զբաժնորհներէն է Ազնիւ Գարուէջեան, որ առաջին օրէն Բլբլ-
տացող իմ-բի մը նշանները զգացուց իր տողերուն տակ եւ բո-
ւոնքը ազրուած վեճակներու նստանդ շնորհաբանէն զուրկ չեղեց
ընտ»:*

*Հնամուտ բանաստեղծութիւնները մտն էլ կազմեն ընկձիւրջ-
կեա ճամբարգուծիւնս սեռան Գարուէջեանի առաջին հասարկն,
որ մտնուի տակ է եւ յոյս էլ սեռն է ժողով:*

*Բարի ճամբարգուծիւնս զիտի մուկիւնը մենք, ընկձիւրջ-
կեա ճամբարգուծիւնս...*

Ինչո՞ն, ինչո՞ն էլ տենչաս յաճախանքը անժամանակ անժամօքին
Եւ ո՞ւր պիտի երթանք, ո՞ւր...

Բանաստեղծներու ժամանակը կուգայ
հաղորդակցութեան անհաղորդ վայրկեանին:
Գերեզմաններուն հողը սովահար էլ խլրտի անաւիշ արեանս ձերմակ գետե-
րէն
Եւ յարալէկներու շունչով հրաթոյր իմ հոգոյն ձեւը կ'առնէ՝
կ'ըլլայ շարականը իմ անսերէնք օրագրութեանս պատարագին:

Ո՞ւր պիտի երթանք, ո՞ւր...

Անապատի առաւելներուն չափ կախարդաբոյր ծառեր կան հոն երգեցիկ:

Եւ որովհետեւ ծառերուն մէջ անդրշիրմեան օրագրութիւնս կայ,
Եւ որովհետեւ ծառերն այդ միջոցն են իմ եւ ի՛մ միջեւ,
Եւ որովհետեւ իրենց եւ իմ միջեւ ե՛ս կամ,
Կախարդաբոյր ծառերն այդ, ձիշդ ինծի պէս, սիրոյ բառեր կ'արտագրեն կա-
պոյտներէն,
որ չճաթին ձաճնրոյթէ...

Բայց ո՞ւր պիտի երթանք,
Ո՞ւր պիտի,
Ո՞ւր՝
Տօնելու ներգաղթը անապատի ծիածանեայ կրկներեւոյթին...

Էութեանդ վիշապաբաղ ու նետաձիգ նայուածքներուն ժամադրուած՝
Միջերկրականեան ավերէն միջեւ ծագերը Ծայրագոյն,

Յիշողութեան մարգերէն, մոխրաղաշտէն մոռացութեան,
Մարմինէդ ծաւալող ձայներուն ալիքներով ճամբորդեցինք
Ու վառեցինք պատրոյզն ի դուրս թաւշեայ կանաչ ու ծուռ բոցեր...

Հիմա,
Տարերքներու այլակերպման պոռկումները միջերկրականեան այս ափերուն
Կը բոցկտան անգիր քերթաւածներու հատորին մէջ շնչաւոր...

ՏԵՂԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ

Մթութեան գոյները գրոհ են խօլութեան
Ու անձաններու յարաճուն ամլութեան թակաթղ,
Ուր կայ խուճապ ստուերներու
Եւ խառնակուր հունչ...

Գիշեր՝
Լոյսին լոյծ արգանդէն սպրդած հո՞ղ արգասաւոր...

Թոքերս ողջ կը քամեմ տեղատուութեան պապակած ափերուն,
Ուր դուն կ'ըլլաս
քթաւծինի հիւլէն անհրաժեշտ
ու կը լեցնես ինքնութիւնս տարերքով ըմբոստ:

Մալքընքացութեան խելար ու քմայքոտ այս ըռակին
Կը պղտորին
Մեղմահունչ բառերով հիստամ արեւագալ իղձերս թորեալ
ու սաղմոսներու հեղասահ ջուրերը կ'ալեկոծին՝
աչքերուդ պրիսմակին ուրուացնելով քերթաւածներս արեւաբաղձ...

Առաւօտուն,
Կարօտավառ կրունկները ասֆալթներու ցուրտ աչքերուն
Կը պատարագեն թոքերս
մայթերու քառասկերպ սեղանին...

Երեկոյեան,
Այս որջա՛ն մութ արեւներ, որջա՛ն նուազ խառնափնթոր:
Ի՛նչպէ՛ս շնչեմ պիտի, երկի՛ր, տօնածառիդ նուրբ տերեւներուն յանդիման,
Ուր ցնորքներու անարին վարդեղէններ կը շողացնես տարածասփիտ...

Բ Ա Ռ Ը

Այս երեկոյ,
մեծ քաղաքի լոյս մայթերու անկիւններուն՝
բոցեղ քիբին անցորդներուն սղագրեցի
Իմ իղձերէս բառ մը միայն:

Անցորդները լիաթոք ծիծաղեցան ու անցան:

Ոմանք նայնիսկ
 Լուս ընթացքի խորհրդանիշ բառն այդ բեղուն
 Իմ յոզնատանը աչքերուն դէմ խաչեցին:

Այս երեկոյ,
 Ի՞նչ անդունդ կայ իմ հոգիին քսանամեայ:

Օ՛, բառ իմ,
 մազադաթները բխո՛ր՝
 քու լոյսերով պիտի պեղեն ներաշխարհային ոլորտներն իմ բիւ-
 րակնեայ
 եւ հրահրեն բոնկումները քերթողներու արիւնին:

Ես այն ատեն
 պիտի սրբեմ անէծքները ձեր ժամանակակից,
 ցրուեմ պիտի ձեր բիրէն խաւարը քանձրացած,
 որպէսպի տեսնէք նայուածքները մանուկներու,
 խլրտումը սուրբ հողին,
 ծաղիկները հազարերանգ...

Օ՛, բառ իմ,
 դուն դողանքն ես յարաւելկներու ոսկեղէն պատարագին...

ՀՐԱՅՐՔԻ ՊԱՆԵՐ

Կրկնապատկուող խուճապէն փախչող
 կուզահեռ տենչանք:

Տառապանքն այս
 գիշեր է կոպերուս սայրին:

Անկիւններու վրայ կը մաշի
 տարփանք մը վայրագ:

Եւ նորայայտ սէր մը կը բողբոջի
 համբոյրներու շարականով....

Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՄԱՆԵԱՆ

(Վ. Է. Պ)

Գ.

Գեղապետին տղան, զիչ մը անհանդիստ սա ելոյթէն, բաժնելով իմ ալ վախերս, կը գտաուի ինձմէ :

Կը քալենք երեքով, գեղացիները ձգելով մեծ հողի մէջ, Աքլորամարտը չէր առած իրենց սպառած դնացքը: Գանխահող յանձնարարութիւն մը լսելու, ծածկելու սա հիւրերուն ներկայութիւնը կը նշանակէր անուղղակի գործ ճարել շատախօսներուն, փսփսուքին ու արթնցնել անպայման շուշացող հարկահաւաքին ուշադրութիւնը: Գաղտնիքը մեր ժողովուրդին մէջ շունի վրայ: Ը. գիտած եմ, որ զայն, գաղտնիքը չենք կրնար կրել: Ամէնէն շատ պիտի տառապին անկէ անոնք, որ ուրիշ առիթով դժուար կը յօժարին բերան բանալ:

Մէկ կողմէն կը հեռանամ սրճարանէն, միւս կողմէն՝ կ'ամբողջացնեմ մտածումներս: Յետակ է ծրարդիրս: Ամէն գնով հարկահաւաքին ժամանումէն առաջ հիրքերը հանել գեղէն գուրս: Եոյն ատեն իրարու հետեւէ կը ներկայանան մտքիս հեքիաթներ, այդ մարդերը, անպարար, կօշիկ նորոգող, աշուղի աշկերտներ տիտղոսելու այն պարագային, երբ ինծի անկարելի դառնայ գանոնք լին հասցնել մութը շիւթած: Զարդերէն առաջ թուրքերը կը հանդիպէին տարադէ օտարներու ու կը մնային անտարբեր: Հինգ-վեց տարի ետքը, կառավարական հսկողութիւնը ամբողջական ցանցով մը ծածկեր էր հայաբնակ բոլոր վայրերը: Կը վարձատրուէին օտարներու մասին «մատուցուած» բոլոր լուրերը: Ասիկա մասնութիւն չէր, որմէ գեղացին խորունկ գարշանք ունի: 1902ին, բիւրեղացումներ տեղի ունեցած էին ո՛չ միայն թուրքերու մտքին, այլև մեր ներքին ճակատին վրայ: Առեւտրական դասակարգը, հարուստները, հարուստցունները իրենց ազգը սիրելով հանդերձ, չէին սխորժեր տաքուլուի օտարականներէն, բուն բառով՝ յեղափոխականներէն: Սա գեղին մէջ ալ կրնար գործել անբան հետաքրքրութիւնը: Երկու աքլորի կռիւէն փորձանք կրնար արձակուիլ սա մարդոց գլխուն (աւելի յետոյ դէպքերը արդարացուցին իմ վախերս: Մաթիկ Մելիքիմանեանի անձը ստեղծեց խոշոր արամա, որ պատմուած է ՎՄնացորդացի Բ. հատորին մէջ, «Արեւմ ճամբով»):

Կ'անենմ փողոցը, որ լեռ կը տանի: Հոնկէ չէ պատահած, որ ոստիկաններ գեղ ժտնեն: Մեզ կը դիտեն փոքրերը, բերանաբաց, ուռած-խոր ու աղտոտ, գոյնէ՝ մա՛նաւանդ: Պզտիկը զժբախտ բան մըն է այս գեղին համար: Ետներ, հաջնու իսկ անտրամադիր, հազիւ կը պզտորուին, հաւանաբար Մաթիկին մօրուքէն, ու ակոյս ցոյց տալով կը գոհանան: Անօթութիւնը դարկած է, նոյն չափով, անասուններն ալ: Ահաւոր պատկեր է ծեր, անպէտ գրաստներուն փրահներմ քամակները, ուր ճանճերը կը թրթուան, կանանչ ու կարմիր: Անոնցմէ աւելի թլուտա խրճիթները, իրենց ոսկորներէն քակուած, չաղախէն պարպուած պատերով, որոնց վրայ քանի մը ժամուան կարկտուք իսկ աւելորդ կը դատուի ձմեռէն առաջ: Դեղին, գորշ բան մը, ո՛չ փոշի, ոչ ալ մծեղ, թերեւս ճահիճին իսկ արտաբուրուած մինչեւ հոս, կէս ժամ հեռուները, որ կը թանձրանայ դոնառաջի ցանցառ սալերուն, օտքուներուն, կը դուռաբարէ բակերը, երբմն յարդի ձեւով տեղաւորուելով կղմինարի հազուադէպ ակօսներուն: Զգուսպին հոտեր, աղբի, թրթի, թաց շորի, խաւի-խուռն նետուած փայտերու, կտորած սայլերու կմախքներուն, կը դպին ու կը նեղեն, ու աւելի տարօրինակ՝ կը թուին չորնալ, ճերմկելու տեղ խարդելով: Կինն բը. — Վկայի՛ պէտք կայ այդ բուռով որակելու սա ցնորական ձեւերը, որոնք դեփ-դեղին, սեւալու իսկ անկարող, կուրծքի տեղ փոք միայն կը ցուցադրեն, մանուկով կամ փայծաղով յի կամ երկուքով ալ նոյն ատեն, վասնդի մաշարիան սանձարձակ է, ճահիճին մէջ իր անհուն ստապիւր ամբասպնած տարիներէ առջին: Անասելի ազեղութիւն է մերկութիւնը իրենց օտքերուն, որոնք որոնք իսկ շին կրնար ըլլալ, քանի որ լուերու ծիրտներուն բիծերը գարշադին բանով մը կը կէտկիտեն անոնց շապիւղնկերները: Դէմքերը երթիթացած, գեղինէն գէպի կանանչը գէշ երանգներով, մասամբ ուռեցուրած, մասամբ կաշի դարձած: Մարդ դժուար կը հաւատայ գիրքերէն փառաբանուած զխալոյս քնչաւնչին, սա զժողովէն փախած ձեւերուն դիմաց: Կի՛ն: Պէտք է հարցնել Տանթէին, թէ ինչո՛ւ իր գիրքին մէջ տեղ չէ տուած Քալապոյալի կիներուն:

Մեր արիւրներ շարունակ կը գոցէ, կը ճմռէ ունդերը ու կը ջնայ զսպել հաղը, հետեւանք՝ դարձահոտութեան կեռամներուն: Ենդուած է մէջին ու քակորին, սասակ կատուներու, հաւերու, շուներու բաղձախառնուրդ բաղձաբուրուածներէն (Մեծարենց պէտք էր տեսած ըլլար սա պատկերները), ուր իրենց առջնները կը նետեն փողոցներուն վրայ բացուող կոյուզիները, շարունակ զնուջովը հաւերուն օդին մէջ բարձրացնող իրենց հոտերը: Սատակները օրերով կը պատկին տուններուն առջեւ, բանակ-բանակ ճանճեր բրդ-զիւնի հանելով պղտիկներու քարկոծումէն: Ոչ ոք կը մտածէ զանոնք թիով մը նետել աղբակոյտ, ու կը հանդուրժէ այդ դարձահոտութիւնը, մինչեւ որ որդերը յաջողին ծակծկել մուշտակը, փծառը, գուրս թափին փորտախթը, հրաւիրեն ազոտաներու խնճոյքը: Մնացածը, — այսինքն՝ չորացումը — պարտքն է արեւին:

— Էս ի՛նչ ազատութիւն, աղբէր ճան...
 — Լո՛ք. — կը մայնեմ կամաց, — օտարականին թշնամի է մայնը: Ամէն գնով կիները գիտնալու չեն սա մարդոց օտարութիւնը:

Կը հասնինք գեղին կոնակը:
 Բլուր է ալ: Բայց քիչ սովորական, հերքելով բառին զուգորդ զգայութիւնները: Դէպի բացերը կը րոցող ամբողջ տարածքը գրաւուած է ժայռերով, որոնք իրենց մէջքերէն քանի մը անգամ կտրտուած ու սասած ալիքներու նման կը շարուին ետեւէ ետեւ, թելագրող այնպիսի ծովու երես մը, որ հրաշքով մը ըլլար քար դարձած: Այդ ժայռերուն վրայ ժամանակը աշխա-

տած է կորացման, կլորցնելու, շատ միակերպ աշխատանք մը, մեղմելով բոլոր սրութիւնները, զնդակերպ մեւերու հոգի միութիւն մը երեւան բերելով: Մարմարն է խմորը այդ քարերուն: Գորշ, ախուր երանդ մը, ըսես մարթը ըլլար այդ քարերուն, չի խանգարուիր ոչ մէկ օտար գոյնէ: Կը պակսի մամուռը, կը պակսի խոտը, թփիկը, ձիւր: Գարնան վախկոտ ծաղկի լիզուները այդ քարերու ճեղքին երբեմն սիրտի պէս անուշ-անուշ, անանասկիզդին կը պակսին գարձնալ: Այդ օտարէն լիւրկ տեսարանը սիրտը կը սեղմէ բոլոր այցորդներուն: Առաջին օրերուս կուլտայի սա սարսափին դիմաց: Կը շինէի պահերը, որոնք այդ քարերուն կրակէ կեանքը կը հսկէին, անպարագին տեւողութեան մը երեսին, ու կ'ապրէին երկրին կեանքը, անոր գուշակիւի, բայց աներեւակայի թառապանքը, վերակազմելով այդ աղէտներուն թափօրը, միլիոնաւոր տարիներու ընդհատներով...: Բնութիւնը այսպէս զարնով ցուր չէ՞ մեղմացած, որպէսզի միշտ այդ միլիոնաւոր քարերու թառալումէն ալ ետքը մարդիկ շարունակեն զգալ իրենցմէ ներս այդ անհուն փոթորիկը տարրերուն, խենթեցած պարբ սա քարէ կայլակներուն, իրարու վրայ արձակուած անըմբռնելի մասններէ ու հիմա փաթթուած իրենց սուզի զորը շարշին: Երկաթի պատահական հարուած մը, օսկայն իր պատուէ այդ վարշտակը, այդ պատանքը, քարը կը գտնէ աստուածային իր պայծառութիւնը, ամէնէն ազնիւ նաշին ալ ստուերի տակ ձգող սպիտակութեամբը: Ու կ'առնէ արեւէն շափուղայ ու սոկի, կարկեհան ու դժբախտ, այնքան տառա ու բնական, որ կը փաթցնու աչքերդ, շտացումէն ցուելու սկսած: ... Հայերը միայն մօտիկը կը մնան սա խորհրդաւոր ապրումներուն: Անոնք են, որ սիրտ պիտի ընէին սա մտայլ, բայց ներսէն ձիւնափառ մերձաւորութիւններու հետ հաշտեցնել իրենց պատմութեան քիչերէ ընդգոյացուած սա տառապանքը իրեն, ով դիտէ ո՛ր դարուն, բուն հանուեցան իրենց գեղերէն, Հայաստանի յորդ ու պայծառ կանան: շատանէն ու ձգուեցան բախտին ալիքներուն, որոնք զիրենք բերին խեղճներու նման թխմելու սա քարեղէն ծովուն շրթներուն: Զըլլար այդ մայրաքաղաքի ստորտոսին զեղանի, հրաշալի, յորդ ու աղամանդ աղբիւրը, մարդիկ պիտի վախճային սա հակայական գերեզմանէն, որ այդ բլուրն է, երբ մէջը խորանաս: Մարմարը, որ տուած է գեղին անունը, կայծակնահար կողերու վրայ արեւնի հանգոյն կարմիր արատներ ալ կը ցուցադրէ, խորացնելով աղէտի զգայնութիւնները ներսը, կարծես պատմել ջանալով տառապանքը, զոր կրակը դրած է անոր լիարդին: Կան այսպէս գորշամոյն այդ տեսարանին վրայ ջարդուող, արնաշագախ առանձին միութիւններ, կզգեակներու նման, որոնք դիմացէն արեան մէջ ստուած մարմիններ կը թելադրեն, նոր աւարտած ճակատամարտէ մը ետք:

— Ի՞նչ դաժան է այդ ամէնը, աղբէր ճան:

Կը նայիմ քաղցր ու հաճ հոգիով մը: Բնութեան վրայ աչք ունեցող ամէն մարդու մէջ գտնուիր չէ՞ զգալ անասունէն անդինը, աննուազն արուեստագէտը:

— Կը դա՞ք հոս յանախ:

Չե՞մ պատասխաներ: Բայց կը դառնամ իմ տպաւորութեան մթերքին, մօտիկ անցեալէն: Ըտի, թէ մեն գերեզմանն էր յատակը այդ ապրումներուն (մահը, պատանի, ամէնօրեայ ընկեր մըն էր ինծի. քաղաքէն գնուած ու վանքի մը մէջ հասուեցած): Սուդին ընդարձակ քողը, զոր երբեմն կը զանակեն, բոժոժ-բոժոժ կը հանգուցեն զարնան հեշտ շունչին մէջէն վաղաթառած ծաղիկներ, վայրի մեղուներու կծիկ-կծիկ խորխոսները, քարին իսկ մէջէն յարինուած:

Ան ալ այցուած է ժա՛նուան զգայութիւններով, քանի որ առանց պատճառի կ'ըսէ.

— Մի ինչ լաւ գերեզման է առ... :

Մտովի կ'ամբողջացնեմ նախադասութեան թելադրանքները: Այդ գեղին մէջ ես մինակ վարժապետ մը չեմ, այլեւ տառապող, սոսկաբէթ թափառական մը: Դպրեմանքէն փախուստիս վաստակուած մալարիա մը, Եւլովայի ճա՛րճներուն մէջէն, կը շարունակէ գիտ հարուածել, աշնան սկիզբները ու իմ զրկալից պատանութեան պակաս թողածը կը դարձանէ, գիտ ընելով լեարդէն կրճուած (զուր տեղը չէ, որ շէնգիմ կտուցիմ տակը օր մը զրքոյկի մը տունն եղաւ ինձի) յիմար մը: Չեմ խօսիր հոս կիներէն, որոնք պատանութիւնը կ'աւարտեն ամէն տղու մէջ ու կը ձեւեն մարդը: Ուրիշ տեղ մը թերեւ ինձի արուի սիրտը այդ փորձարկութիւնները պատմելու: Ամէն երկասարդ, ճեռու հեքիաթին յորինած միակտուր արարածը ըլլալէ, բարդոյթ (complexe) մըն է անգուշակի զրութիւններու: Պատմեր եմ մաս մը քան արդէն («Նրբ պատմի եմ»):

Մեր տոջին, գերեզմանաքարերը, ծալեծայ, համաճան հողին վէտերուն, կարմիր, մութ-կանանչ նանկիմներով պիտակաւոր: Ամբողջութիւնը տարօրէն ճշտող, մահուան մէջ ճարուած կարծրութեամբ մը, յտակ՝ յիշեցընելու շափ գեղին ժողով միւս քեարանը, զոր ուսինք կը հովանաւորեն ու մոլորեցնուին թուփերը կը հարսնեւորեն:

Մաթիկ Մելքիսեանն կը կոտորէ ժայռի շերտ մը: Բերեցններու հարեւար աշուկներ:

— Ի՛նչ գեղեցիկ, — կը բղուէ անիկա ու կը լսէ:

Ամէն քայլի տեսարանը կը պարզէ նոր-նոր կերպարանքներ, անճրեւի բարակ սեղաններով ճարտարապետուած, ինքնատիպ ու քմայքոտ, որոնք սկզբնական զանգուածէն կը ձեւեն սո սեւնաւորումները, որտառուէ փափկութեամբ, ինչպէս նաեւ փետեկտումներ՝ մազերը փուշ-փուշ ընող: Ամէն հասակով: Մաթիկ զանոնք կը նմանցնէ շատ բաներու, — մակաղած հօտի, խառնիխառն, ս'ըր ոտքի, որն ալ պատկած, շրջուած զանգակներու, որոնք տառապին իրենց համբուսեանէն: Որտորդ, վարժապետ, հովիւ կը տպաւորեն սո պատկերաշարքէն: Գեղացին կը արածի, հաւանաբար հողի պակասէն անգամ մըն ալ այցուած, երբ կը մոլորի այդ ալիքներուն ներքը, փնտելու կորսուած ուխտաբը: Օտարականը, գլուխը ճօճելով կը բարձրանայ իմաստութեան, երբեմն ալիցուցիչ խորութեամբ: Այնքան իրաւ է, որ ամէն ապրող ինքիբով պայմանաւոր փորձառութիւն մըն է: Ամէն ապրող գիտէ այնքան, որքան թուղթերու կայսրութեան մը ինքնակալը, որ մոռցած (ապրիլը) ուրիշները վերլուծելու կը մզաի:

Օրը կը դառնայ գէպի էտինք: Անան տապը կոտորած է քիչ մը թէեւ ժայռերուն երեսին գոլը, հեւուտ ու դպրող, տակաւին կը նեղէ մեր գնացքը: Վարերէն մուխեր: Գէմի կանանչ դարաստանին ուխտները կուքի: Հոն են հիմա հարսները, իրենց դոյլերով, կենդանիներուն պտուկները հեշտապին շոյելով ու իրարու պատմելով խոր, հոտաւէա, արտում բաներ... : Բո՛ւսմանը կուլան: Ու հովը իր թեւերուն վրայ ճահճէն ցարկած է մժեղներու փափկիկ ու թրթուռն շղարչը: Հարեւաւոր զգայութիւններ, անկապ մտածումներ իրար կը հալածեն զանկիտ տակ: Սրճարանը իրբեւ պատկեր կը բռնանայ մաքիտ: Հարկահաւաքը՝ ուրիշ սարսափ: Գո՛հ եմ, որ վստայը ստայժմ չի սպանար սա տղոց:

Մեր արիքո՞ւնը:

Ով պիտէ ինչե՛ր ունի զամկի տակով: Եստ պարտողը շատ գիտէ, ըսած է ժողովուրդը:

Մինակ գիտու՛ն: Ընկեր մաթիկ Մելիքեանեանցը անշուշտ յեղափոխական ժըն է ու իբր այդ գինուոր մը ամէն բանէ առաջ, Աւելի ուշ պիտի իմանայի իր պատերազմները: Մինչեւ այդ բողբէն, անոր բերնին մէջ սա ժայռառտանք մի սքսկնիլի գիրք է, Փետայիին գլուխն ու մարմինը պաշտպանող, անոր յարձակումները գիտող, մանաւանդ մտնանքը ապահովող: Ընկեր Մաթիկ վկայութեան կը կոչէ Նափուչոն կայսրը, որ իր յիշատակներուն մէջ ընկազատած է Վաթէրլոյի ճակատամարտին անդիպացի գործակարգը, կոխը ընդունած ըլլալուն, առանց նահանջը ապահովելու: Այդ ժայռառտանքը անշուշտ ամբուստեանց ձի բնական շղթայ է հաս: Վճարնիյի սա ցցուածքները երկինքէն պարզեւուած պատնէշներ: Վերանքը կը յիշեցնեն Սասունը, ուրկէ երգեր, Հեքիթ, պատերազմի տէրքաններ իմ երկրորդ մանկութեան հրաշալի աշխարհը կը յորինեն եւ ուր գիտեմ, թէ շեմնդարտութիւնը կատարեալ է շարաշուք տարազը թուրքերուն նորէն կը թարմանայ: Ըստ Մաթիկի, յեղափոխականը լինելու է եւ անանազէտ, ազրոնում, ու պիտի Հետաքրքրուի գործունէութեան իր շրջանին բերքովը, հողերու պարտազմամբը, բարեփոխութեամբը: Ու համաձայն այդ անտութեանց, մտորկ գաղափարով սա թշուառական աւանը սահմանուած է ըլլալու մի մեծ ինտուսքիլի կենտրոն, քանի կան սա քարերը, որոնց մարմարը ո՛չ միայն կը բաւարարէ ամբողջ թուրքիոյ քանդակագործական եւ ճարտարագետական կարիքները, այլեւ կը ջախջախէ Յունաստանը, Իտալիան, երբ արաստուի: Յեղափոխականը նորն աստի բնական գիտութիւններու ստուգիչ ալ է, կտային մարգերու մէջ երկրաբանական յեղաշրջումներու փաստերը արժեւորելու ընդունակ: Ու է հողագէտ: Ու է բժիշկ, վիրաւորներու դարձանդին համար անդական բոյսերու լիակատար օգտագործմամբ մը: Ու ի՛նչ չէ յեղափոխականը, սա մարտերդէն ամայքներուն մէջ, սա պզտիկ պտոյտին ընթացքին...:

Համառօտած եմ հիմա, երբ այս յուշերը կ'աննեմ գիրքի Մաթիկի մտածումները, տիպիկտիկան, անշուշտ շատ բան գոհելով անոնց շեշտին ջերմութենէն, հարստութենէն: Խօսքի ջազացք՝ ան այդ խորհրդածութիւնները կը բանածեւէ մաքուր հայերէնով մը, անշուշտ գիտական քերական անխուսափելի ղեզձանումով մը, օտար բառերէ, որ արեւելահայ մտաւորականութեան տրտում սխրագործութիւնն էր ութսունական թուականներուն: Յանկարծ կ'անդրադառնամ, որ անոր ընկերը բառ մը չէ արտասանած: Խո՛ւլ, հա՛մբ: Չեմ համարձակիր հարցնել: Ունիմ սպաւորութիւնը կուտքի մը, որուն անցուցած ըլլան պիտուրց, ու քաշեն:

Հասած ենք վտանգաւոր դասի մը: 900էն յետոյ Նիկիոյ շրջանի հայ գիւղերուն դարաւոր, բնական ապահովութիւնը խանգարուած էր պետական կարգադրութիւններով: Ատոնցմէ ամէնէն ընդգծեցուցիչը գաղթականներու ղեւեկումն էր, դարերէ ի վեր հայ գեղերուն պատկանող արտօրաններուն վրայ: Լեռնէ յեռ, հովտակներու ամէնէն յարմար, զոսղմագիտական կէտերուն, իբր թէ աւազակներուն վրայ գիտողափայլ՝ Հաստատուած էին մանրիկ պահականոցներ, հին տարապետներուն քիչ մը շատ Հելլագիտ պայմաններէն զուրկ, բայց իրենց նպատակին մեծ յարմարութեամբ մը: Հոն շրջուն ոստիկանները կը գտնէին զէնքը, ռազմամթերքը, միերը ու հազարակոցութեան ուրիշ միջոցներ, մանաւանդ մարդեր, որոնք ո՛չ անտառապահ են, ոչ ալ ժանտարմա, բայց, ծխախոտի մաքաննեղութիւնը հետապնդելու մե-

Մատուցու էր հրամայեմ լուսթիւնը, վանագի ճամբան սկսած է փոխուիլ: Կոպնուս ու կարծր կածանը, լման երեսը կազմող մարմարէն հանուած, շանի մը օր առաջուան անձրեւներէն լուացուած՝ հետզհետէ կը լայննայ, կը փափկանայ: Ինչպի վարերը փորուածը ո՛չ ձորակ է, ոչ ալ դասական կիրճը: Լայն կտու՛մ մը, բռնի փրցուած լերան փէշէն, անցք մը ճարելու համար դէպի դաշտը: Այս կտու՛մն է, որ ժամանակին հետ վերածուեր է ճամբու, դէպի ցանուցիւր գեղերը դաշտափայրին: Էշերու սուր սզոցուկը, իրարու արձագանգող իրենց դալարափողերէն միջոցը կը լեցնէ ընտանի ու բնական բարեխառնութիւ՛մը մը, որ աշխատուած, մարդացած վայրերը կը դառնէ անհուպ ամայաքներուն կարծր, յոգնեցնող ու անիմաստ պատկերէն: Շուներ, որոնց կաղկանձը ոչը կը կոծէ՝ աշային արամութիւններ սահեցնելով հասած այգիներուն ոչխովը արդէն ջերմացած սիրտերէ ներս, երբ կեանքը պահ մը կը փոխադրուի այդ բլուրները ու ամէն թուղի ծառին տակ (որ այգիին մէջ անհրաժեշտութիւն մըն է, զուք զիտէք պատճառը այդ խորհրդաւոր մերձեցումներուն, որթին եւ թուղի ծառին միջեւ, ժողովուրդին կողմէ շատ մը խորհրդապաշտ պատմութիւնը վրայ սեւեռուած, յայնպէս որ՝ արբուսքի հասնող պատանդները կը զգուշացուին աշնան մուգքերուն անոնց շուքին երկարելէ) օրուան մը մէջ կը ներմկի... Փայտուորներ, փոնորդներ: Կ'անցնինք փուռերու գիծէն: Մարմար շերտերու փողփողուն կոնքերը, այդ փուռերու կառուէն հազարաւոր լոյսի երանգներ կ'ուրբեն, կը ցրուեն: Անոնց առջին ճամբան սզոտը ախար է ամբողջովին: Հարիւրաւոր սակառներ, լեցուն, սպասելով կենդանիներուն:

Թուրքեր, որոնք կէս հացով կամ երկու ափ թեփով կը փոխանակեն կրկի իրենց բեռը, — միակ բերքը սա դիւղին: Կը բարեւեմ:

Կ'անեն իմ բարեւը, անշուշտ քիչիկ մը զարմացած միւսներուն լուսթեան: Իրենց մազերուն ու թարթիչներուն եղիամին ընդմէջէն նայուածքը կ'ըլլայ քիչիկ մը թթու: Տարազը, մօրուքը (մեր երկուքին) փաստ են օտարութեան: Ու լայն իր երկրին մէջ, թուրքը օտարը շուրջը ճանշալ, մինչեւ որ ասոր պէտքը չզգացուի իրեն: Անտրամադիր են բերան բանալու, առանց ստիպողութեան, վանագի կրկին փոշին կրակի պէս կ'այրէ կոկորդը: Անոք, մենք շանցած՝ կը դառնան իրենց աշխատանքին, կրացած քարերը գետեղելու պարկերու մէջ:

... Անտա՛ռը:

Անոր էն խորունկ ու սառչ բոլորովին հեռու մէկ ծմակին: Գեղէն փախուստի ընթացքին միտք ինկած սա խրճիթը, ուր այդ եղանակին կը պտուկի փորձուած ու ծանօթ հովիւ մը: Խրճիթ չէ, այլ ուղղակի վիճափոր քարայր մը, զոր շատ խիտ թաւուաներ կը պատնիշեն: Հովիւին նախնական խելքը կազմիի օտտերէ դռնակ մը յարմարցուցած է անոր մուտքին:

Պատահական ընտրութիւն մը չէր, որ կատարած էի այս վայրին վերայ: Կիրին փոշին մինչեւ մէկ քիլոմէթր անհաճոյ կ'ընէ այդ շրջանը, մա՛ն նաւանդ ձիերուն քիթին, որոնք կը դժկամին արդէն անհաստատ կածանէն: Ոստիկանները միշտ ձիու վրայ կը խուզարկեն սա լեռները: Յոգնեցուցիչ ու դաժան այս պայմաններուն մէջ հետապնդումը կը դանդաղի, յանգելու համար սուտին, որ հալածող ջոկատներուն պատրաստ սպրանքն է միշտ: Ենդափոխական օրսայլը նոյնը չէ՛ քաղաքներու անգործ օստիկանին եւ սա դաշտերու մշտադրաց ժանտարմաններուն համար: Առաջինը կը շահագործէ պատեհութիւնը, աշխատանք մը ճարողի խանդովը: Երկրորդները վախէն դատ ծանձրոյթ ալ ունին, հետեւելու համար շան սաք ունեցող ցոմթիւններուն,

ասպատակներուն ու կը բաւականանան աղուոր շուքի մը՝ զուն մը քաշելով, ուր տասնապետը կը խմբադրէ լեռներու եւ դիրքերու անուններով համեմատած տեղեկապիւրը:— կատարուած թուղթի վրայ:— արշաւներով հարուստ: Անդեալին, ասպատակներու խումբեր արած են սա խորշին մէջ, անհանդիստ չբոլորով հետապնդող ձիաւորներէն, որոնք չեն յոտարիր իջնել ձիերէն: Դէպի ծածկը ճամբան անմատոյց է չորքոտանիներուն: Ու տեսակ մը մազիցուձ է հարկաւոր: Ընտանի անասուններէն միայն այծերու հօտը կը յանդիպի այդ տեղուանքը ճարակի իջնել:

Աշնանամուտին, քանի մը շարթուան համար այս բարբարոս փոսը կը դառնար բնակիչի: Հովիւները, ձիւներէն առաջ, աշնան առջի անձրեւին ընձիւղները թանկ կը նկատեն այծերու սազմին: Տեղին բացառիկ առատութեամբ ջուրը մինչև քանի մը մղոն երկայնքի վրայ, մարմար աղուզաններուն — այնքան լաւ փորուած են ժայռերը, որ ուրաք կը թուի մարդու ձեռքով մէջտեղ եկած — եղբարջով կը բուսցնէ բացառիկ առատութեամբ, բայց շատ լարդի խոտ մը: Աւելի կարեւորը, այծարած Ակոն բացառիկ կերպս է: Դնդեր ու սակոր, ընաւ շուք շտեմած տունկի տեսակէն: Պատուական՝ սիրտէն, որ մեր գեղերուն բացատրութեամբը զօսկի է: Ինչո՞ւ չբացուին այս վէպին էջերը, պէտք եղած լայնքով, անոր պէտներուն, որոնք արեւցան առ լեռներուն մէջ աւրին բարիք, զիջնուն զնով, բոլոր փախստականներուն, պատասպարելով անոնց հալածական երէի անդուն՝ խոր խորշերուն մէջը իրենց գրազարին, ու մեռան, այծի սէրէն դուրս ուրիշ նայուածք իսկ չհանչած: Բայց համար չէ, որ պիտի կարգա՞յ մեր վէպերը:

Անոր գոտահուած գաղանիքը ծովուն տակ ինկած ջաղացքի զարն էր: Ու խօսելու գծկամութիւնը՝ ուրիշ զբաւական: Անիկա մէկ հատիկ մարդն էր, որ կը ճանչնար նաեւ քարայրին յատակէն խորացող ուղին, որ աւանդութեան մը համաձայն կը հասնէր քառորդ մը անդին, անտառին միւս թափին ապահով ծառաստան մը, ուր կրնայիր պահուիլ 10 օր, հոցի տեղ կերակրուելով նուազամասնով . քրքրկիլով (*): Իրական, այդ ընդերկրեայ անցքը: Կ'ըսէին, թէ եւ ես տեսած չէի փորձողը: Ի՞՞մ գիտցածներէս, Ակոն, որ երկու չալք մերի տեւողութեան կ'իջնար վար, ու կը դառնար, կանչելովս: Ուրիշներ առկէ ալ զիջ կը յանդգնէին: Հեքիաթ չէ տակա, որպէսզի սուղուի՞մ անոնց հետէն: Չանց կ'ընեմ ինծի պատմուած նկարագրութիւնը, գետնի տակով դրաղելու համար շկրնալով լեռի սղբերգութիւնը, որ երեսինն է դէտնին: — Բոլոր անխնամ քարայրներուն սպասող բախտը, այսինքն՝ անցքին խղումը կամարէն փրթած քարերուն միջոցով: Անոր մուտքը պաշտպանուած էր ժայռով մը, որ հարտար յարգարանքով մը կը ծառայէր օճախին իբր կոնակ: Ոչ մէկը միտքէն պիտի անցնէր այդ մոխրաթաթախ քարին դպիլ:

- Հովի՞ւր:
- Դառնալու էր անուշա իրիկունսն զէ՛մ:
- Ընտանի առարկաներ փառտ էին ատոր:
- Չուարթ, զիջ խօսող, ձիգ-քերան, մարդամօս, Մանուկենց Ակոն:
- Գնդէն Հեռու, ժամով:
- Քարայրին ապաւորութիւնը եղաւ խիստ զօրաւոր Մաթիկ Մելիքեան-հանին վրայ: Հեղե՛ղ: Անոր լեզուէն կրնար մըցիլ ջաղցի զարին:
- Ամէնէն շատ գիտութիւնը, Գէորգեան ձեմարանի հանքարանութեան

(*) Ճուլամտ, բըբրկի: Խօսք, արձգ կ'ուտուի՞ն ու սւէմ ժամանակ ետեղի-պնիլ են:

ու երկրաբանութեան դասերուն լրիւ վերջիշումովը, ուսուցիչին դիմախազոյն ու շնորհովը: Բոլոր խաւերը, քարի բեկորներէն ցոյացիկ միջամներ, էտէջներ, սիլիքներ, ու խել մը աւելի բարբարոս անուններ: Դրութիւններ՝ բացատրելու համար ջուրերուն գերը կրային զանգուածներու վրայ: Ահաւոր իր մարգարէութիւնը, որով օրին մէկը անդնգախոյս կործանում կը պատգամէր մեծ լիւրան, քանի որ անոր բնգերքը այսպէս պնդուամ, տրորուամ էին բնութեան մեծագոյն զազղակներից: Յետոյ անտեսագիտական պրոպալաններ: Յիմարութիւնը թուրք վարչութեան, որ երեսիւ էր քողելու իր երկրի անգին գեղեցկութիւնները: Իր գլխուն վկայութեամբը, յեղափոխական Մաթիկը կը խոտաւորէր Վի քանի տարուց ուղիղ մի գրախոս անել: աս զայսիքի բնակարանը շրջանը: Երկաթուղիներ, լեռնային անտառէն զննպէս, ինչպէս զհատուցում էին Շվեյցերիայում: ալիքն՝ անգրքայով, որոնք կարող էին վեր բարձրանալ զՔէկուզ մեռիկն պէս ցից սարերէ: Ու ասոնց հետեւորդ գրասարքիները, որոնք փոխանակ ճանապարհ ու ժամանակ կորստեցնելու մինչև: Զուրիցերիաները, պիտի գային հաս, աւելի աման ու վայելիլին բնութեան հրաշալիքները: Յեղափոխական Մաթիկը կը մտածէր զարհուրելի արագութեամբ, ասոնց անգրագիտանալու, որ գրասարքիներու արտածումը Արեւմուտքէն է եւ ոչ թէ Արեւելքէն, որ շատ-շատ ուխտաւորներ կու տայ մեր ժամանակներուն: Անշուշտ, անգամ մը, որ տալէրը ամերիկեան գրագիտներէ հոնէր, գիւղին անտեսութիւնը մէկ հարուածով ինքզինքը կը զոնէր: Կը ջնջէր այդ արտակոյտը, սրմէ անցած էին զգուանքով ու անցը կու դար զմի գեղեցիկ լեռնային գրասարան: Հայ ժողովուրդն ալ կուշտ հացը կ'ուտէր, հեռու բռնապետութեան թաթերէն, զորս վերցնելու անապարանքէն մէջ չէր ճշդեր հեղինակ կամ սղդակ, ինք, այնքան գիտուն ընկերբան, մանաւանդ քաջ տրամաբանող:

Մաթիկ Մելիքեանեանցը շոտհայաւ սուկայն այս ուսիլիտար(*) խորհրդածութիւններով: Ան յիշեց թումանեանի մէկ քերթուածը, ուր զնման մի սար է ճկարագրուամ: Յետոյ Լեւոնտովի զեովկասը ու Արոյիանի զԵրեւանու բերդը: Խորունկ հանոյք էր այս ամէնուն հետեւիլ իր շրթներէն: Ու արեւելահայ բռնապետութեան դէմ իմ ժխտական վերաբերումս զգալի կերպով ազդուեցաւ այդ յորդ, նուրբ, երամշտական ողումէն: Խօսքը սուտի չափ դիւրին ու վայել էր անոր շրթներուն:

Մեր վերեւը, սարի մը կոնը բղիկ-բղիկ, ուր պորեխները իրար կը խածնէին մարդկեղէն գազանութեամբ մը:

Զարչարապին, պտուտքող, ճաթուտն սա ամբարձումը քարին՝ խորվիշ էր խորապէս: Աչքը կը փակուէր ինքնին, չկրնայով հանդուրժել սա խրատութիւնը: Միտքը կը տարուի յուշերէն յառնող սա ժայռաստանը նմանցնելու սպիտակած վերքի մը, երկրի կեղեւին, քանի որ մղոն մը հեռուն փառաւոր ու դասական փարթաւութեամբ անտառը իր հսկայ կազմիները կը հոմանոցէ, ընդարձակ պարտըրով ու կ'իջնէ խաղաղ, մութ, իմաստուն ու խորհրդապահ: Սարը սարուէ սարի կը քայլատու: Ասիկա կ'ապացուցանեն նոր փեռնկուումներ, հողերու անհուն շեղջերուն վրայ երախ-երախ: Ու տարրերու սա մարտնչապին սարսափին մէջ, մարդ երախտապէտ զգացումով կը լեցուի սա անքոյթ խորշին դէմ, որ քարայրն է աւելի:

Կը նստինք երեքով ջուրի ափին, մարմարեայ վրան բաց խողովակ-տեղ-տեղ կարմրած: Զայնն ու զովութիւնը տեսակ մը ապահովութիւն կը

(*) Ստիլիտար — utilitaire — օգտագոյտ:

ներշնչեն: Ինքնիրենս յանտի եղեր նմ հոս ու փնտում երբորդ կամ շորորդ դարու նդնողի հետքեր, որոնցմով այնքան հարուստ են գեղին միւս շրջանները:

Քրտինքը թւած է մեր վրայէն, մայրաքաղաքն ինկող շուքը տակաւ կը թանձրանայ, նուազ բնելով շողին հեւքը ու խղղուկ հոտը, քանի արեւը պակսի վերերէն:

Ըսի, թէ արձակուած էին անոր լեզուին կապերը:
Ու կ'աւելցնեմ.

— Պէտք է փակադիմ նկատել քարայրին նկատմամբ իր գիտունի փաստարկութիւնները: Իր երկրորդական հաստատումները եւ Գէորգեան ձեւաբանի փաստաւոր ննջարանին այնքան անտեղի, բայց այնքան ալ անհրաժեշտ նկարագրութիւնները, ինչպէս նաեւ կառուցողական երեւակայութեան իր զննումները չինարարական, արդիւնաւէտ աշխատանքի մասին, որ գիճակաւ է մեր մտածային: Այս բալորը սակայն հարազատ մարմնաբանութիւններն են անոր իմացական եւ քաղաքագիտական մեծ պատրաստութեան: Իր սկզբբունքներուն համեմատ զառանց իմացական մեծ կուլտուրի չի կայ, չի կարող լինել հարազատ յեղափոխական: Գոնը տառնց բանականութեան՝ մի սխալ աւտիղիւրա: Հենց՝ բժշկութիւնը չի բուարարում մի խղճամիտ յեղափոխականի պարտքերը հանդէպ իր ժողովուրդին: Այս ամէնը՝ պարզ, զնուական, շատ յստակ աստղներու մէջ, այնքան թեթեւ, որ շնեցն ուղեղի տեղ գլխում գղումի կուտ կրողն հետկեմտա: Այն ասան շացուցիչ գեղեցկութիւնը այս առատ ու մտաշնչի գաղափարներուն: Աւելի ետքը, Սահմանադրութեան հոչակումը պիտի ընդհանրացնէր այս սիւսարը, շատ աւելի խոր ու իրական, որքան չէ սեւեռուած ՎՊնչուցիւնով: Ինծի պիտի տրուէր լայնօրէն շփուիլ սա պրոշիւրեան իմաստութեան աւելի թիփիք(տիկան) ներկայացուցիչներուն հետ, ետանդուն քարոզիչներ ասոնք. անկուող՝ առտուն կանուխ գեղեցկու գրանք, հոգեւոր խօսքը ջամբելու համար ուսումնականութեան հայ երկսու երիտասարդութեան, ինչպէս կը յայտարարէր պատին փակցուած կարմիր գիրքերով ուղղը: Անուշա պէտք է լուս անցնել խաչադրոններէն, որոնք դիրք ծախելու պարտ կ'ընէին մամերուն բակը, իրենց սրտառու գծաբանութեան լուսապսակին մէջ փրկելով մեծապատիւ ու նորոքեակ սա մուրացկանութիւնը: Ու քիչ մըն ալ շփուիլ ու անցնել այն միւսներուն հետ, երկար փողկապով, հիւժած մազերով պատանիներ, թերթի խմբագիր եւ ուսանող նոյն ասան, որոնք կերպը գտած էին յեղափոխական սուրբ ասանդութեանց հետ հաշտեցնել ե՛ւ գիտական ոգի, ե՛ւ մարտական ետանդ, ե՛ւ սոցիալիստական, անասական, կուլտուրական հարցերու հանդէպ լափլիզող հետաքրքրութիւն:

Յեղափոխական Մաթիկը պրոտաստիպն էր (ինչպէս գործածեց ինք սա բառը չեմ լաւ յիշեր որ տեսակ յեղափոխականին համար) այս դարաց դասակարգին:

Առայժմ, գեղին, այսինքն՝ վասֆիին աւէն դուրս (դժբախտութիւնը մեր յեղափոխութեան, որ այսպէս ոտտիկանի կամ ջուրջի կտորի մը մնաց ենթակայ) արիւրուր, գառանց կարիքէն, շուտով կը դառնայ իր հիմնանիւթին — յեղափոխութեան:

Խո՛ր՝ իմ գործանքը, մտեով շփոթուելու չափ, այն թիթիկութեան մասին, որ այդ ահաւոր բառինն է անոր շրթներուն: Տասը տարուան խառուութիւն կայ մեր ետեւը: Ու ջարդերու ամբողջ լեռը: Իմ ականջիտ անիկա կը թիւն կայ մեր ետեւը: Ու ջարդերու ամբողջ լեռը: Իմ ականջիտ անիկա կը թիւն կայ մեր ետեւը: Քանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ճշտէ, ինչպէս կապարթ թորուող: Քանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ահաւոր տարա՛ղը՝ ինչպէս աւագերէց Օհանին քարոզին մէջ անխուսափելի

կամուրջները, հանդիսախ քարերը: Այս անփութութիւնը, թեթեւութիւնը է վերջոյ կը տպաւորէ զիս, ա՛յնքան, որ պահ մը կասկած կու գայ վրաս այս ամէնուն, մա՛նաւանգ սա մարդոց լրջութեան:

Տարօրինակը այն է, որ միշտ խօսի, ու խօսի ինքը միայն: Հարցումը եւղութիւն մըն է անոր համար: Նախապաշարուած ունի զայն միջամտութիւն մը նկատելու անպատրաստ մարդոց կողմէ, որոնք կը կազմեն մասսան: Քիչ են յատուկ անունները, յեղափոխական պետերէ, իր խօսածին մէջ (աւելի յետոյ պիտի իմանայի այս կծծիութեան զսպանակը, որ խորունկ նախանձ մըն էր իսկապէս ժողովրդական գործիչներէ) ու լրջաններէ, որոնք յեղափոխական գործունէութեան թատր կը դառնան նոյնիսկ այդ օրերուն, ինչպէս հազար վասնզոյ մտք ձգուած թերթ մը կը պատմէր ամսէ ամիս:

Իր խօսի անսպառ եռանդով, տեսակէտներու բազմազան առատաւտութեամբ, ամէն հարցի մասին ընդարձակ ներածումով, իրրեւ բծիկ եւ ԵՍՍՏԻԱԿԱ: Զի նայիր խօսակիցին, լայն ըլլալու առաջին պայմանը:

Դժուար է զինքը համոզել սա զգուշութեանց անհրաժեշտ պէտքին դիմաց: Աղջտցած է զիս մտիկ ընելուն: Յայտնապէս կը տատապի ան, վասնզի հետու կը դանէ ինքզինքը ժողովուրդէն, որուն խօսիլն է, զոր խանդավառեն է իր կոչումը: Ան շնորհունիր գեղին բացառիկ դրութիւնը. այդ առարկութեան հանդիպած ըլլալուն Ալիս դեռնէր աստիճան, բոլոր գեղերուն ալ մէջը: Վստահ է գեղապետին, աղուն եւ իմ վրայ, քանի որ մեր անունները ծանօթ են իրեն: Մեծ խանդավառութեամբ, գանդադորէն կը դիմէ փոքր տեսարակի մը, որ թիւեր միայն կը պարունակէ եւ որոնք կը կարգայ գեղի ու մարդու անուններով: Ունի մտադրութիւն այցելել նաեւ Նիկիոյ շրջանը, ուր ցրուած գեղերուն քնակչութեան ու բարքերու մասին գիտէ լայն ու լուրջ քաններ: Ուշադրաւ է նիշդ իր արտասանութիւնը, որքան տեղագրական ընդարձակ ծանօթութիւնները: Այնքան՝ որ կը վախնամ իր աղբիւրներով հետաքրքրուել:

Վիճափոք խրճիթին ապահովութիւնը, թէ աւելի նուրբ, աստանթիկ այլուրութիւն մը կը միջամտեն սա պահին, որպէսզի անոր մտածումները, փորձառական դիտողութիւնները ներկայանան իրենք իրենց համար անառարկելի ճշմարտութիւններ: Հասարակ տեղիքին առաջինութիւնը չէ միակ պատճառը այս երջանկութեան: Ո՛վ կը կասկածի վճռական այն պահանջէն, զոր հայ մտաւորականութիւնը կազմաւորած ունի, իր ժողովուրդին սօցիալական ու քողաքական անկախութեան մասին: Անշուշտ պէտք չկայ թուրքին քան հարցնելու: Նորութիւն Քամառ-Քաթիպայէն, Բաֆֆիէն հաքը, Հիմա, Մեծիքանեանց Մաթիկին հասասումովը ո՛վ կը մտածէ տարբեր, թէ այդ երազը ցարդ ապրած է գիրքերու մէջ ջերմացուած ծաղիկին նման: Յեղափոխական սուրբ, անյետաձգելի գործ է զայն փոխադրել ու անկեղ զանգուածներու շերտաշերտ սիրտին մէջ:

Ու քարոզ, քարոզ, քարոզ:

Բառական սա հեղեղումին դէմ (լսած պէտք է ըլլաք այս շրջէժը՝ համոզուելու համար տարազին ճշգրտութեան) իմ անզօրութիւնը: Մտիկ ընելը յողունութիւն մըն է, երբ նի:Քը կ'անցնի վրայէդ ու ձայնը ծանր կ'իյնայ շուրջը: Բայց այդ անկարողութիւնը կը դառնայ յուսահատական բարձրահասակ ընկերով վեհափառ այլուրութեան դէմ, վաւերական համրի մը պէս աչքով խօսելով ու ձուռ շրջալով նի:Քին ու ունկնդիրին: Թո՛ւք, կեդրոնական Անատոլիի սարահարթեան թիւթեամբ մը, սանկ ջիւղիկ մը հովէն զարնուած ու փայլատ նայուածքով: Անկեղ թէ՛ կազմ, թէ՛ դէմք՝ հակապատկերն է նրբունի առաւանակուն: Փայտի կտոր մը ձեռքը, խորունկ լրջութեամբ կը փորփրէ

գարի ճեղք մը, այնի սպլուտերները^(*) թոցնելով, միամիտ ու մինակ՝ ինչ-պէս է մանուկ մը իր խաղալիքին հետ: Տրտունը դայն չի տեսներ, նոյնիսկ կը պատմէ դրուազներ, որոնց մէջ անիկա կը կանչուի վկայութեան, իր վերցուցած բաժինին մասին: Բայց առանց պատասխանի օպասելու՝ Մաթիկը կը սահի նիւթէն՝ ինչպէս հաւաստումէն:

Ու քարոզ, քարոզ, քարոզ: Պատմութիւն, ցեղեր, քաղաքներ, արկածներ՝ բոլորն ալ կը շահագործուին սպիւնոցիչ ճարտարութեամբ մը: Ուրիշներ իրենց զազափարները կը փոխադրեն ուրիշներու, բռուկով: Անիկա բռուկը միջոց է բրած իր երազները կեանքին հետ փոխարինելու: Հաւատքը տեղոյն տարազ մըն է անոր հոգեբանութիւնը պատկերոզ: Անիկա իր զազափարները կ'ապրի: Ու ամէն առիթ, յիշատակ, մտքի փշուր զինքը կը գնեն այդ այրումին մէջ, որ սեւեռեայ զազափար կը յաակունչէ: Անխոցած, ազամանդ կարած յեղափոխական:

Բարեբախտաբար կը հասնի այնարածը:

Փորձ, եփուն խոնարհութեամբ մը Ակօ աղբարը կը հրաւիրէ հիւրերը քարայր: Ո՛չ զարմանք, ոչ վախ: Նոր չէ որ այսպէս գարիներ կը յանձնուին իր զազոտիքին: Կ'անապարծ գառնայ գեղ, ուր անհետացումս կրնար տեղի տալ Վթիւրիմացութեան, որ գիւանդադիտական բառ մըն է նաեւ խուլ այս գեղին մէջ:

Երկու շարաթ անոնք մնացին հոն, մինչեւ որ ժաշկեալ անոնց յանկարծական երեւումին եւ Խրիստոսի քիչ մը կասկած հրուիրոզ հեջիաթը: Դըժ-ւար, բայց հետագայ օրերով հաստատուած յեղում մը սքրազրեց վախերը ի՞մ ու զեղապետին աղուն, որուն հայրը կ'անգիտանար ամէն բան: Լսեր էր ատոնց վիճաբանութիւնէն, խորոզութեան, անխուսափելի Խրիստոսէն, բայց յարեք էր ընդհանուր պատմումին, որ զանոնք նիկիոյ շրջանէն անպարարներ կը ներկայացնէր, մեկնած նոյն օրն իսկ, ըստ սրում նոր օրէնք մը կ'արդիւնէր անոնց գործելի գեղերու մէջ: Օրէնքը զաւտուակի պէյին, խարուած դէշ կերպով ճարտար առաւ-փոխուէ մը:

Երկու շարաթ, զեղապետին աղուն հետ, Քէրոզ արգ (տասը տարեկանին անիկա կը վայելցնէր այդ տիւղոսը) ամէն դիշեր եղանք քարայրը-որսի հրացանը, բացառիկ շնորհ, եղած անոր հօրը՝ գիւղապետին, աղու պէս ոււրախ յեղափոխական Մաթիկը կը գործածէր նշանակալից ձախարհութիւնով մը: Բայց խորունկ էին իր հրահանգները մոսիկին ձեռնումին մասին: Ու ժառանգէտ էր ոտմար արձակելու մէջ, անշուշտ կլորակ քարերու ձեւին ասկ: Հիժա՝ որ զպահեստը կը գտնուէր շատ հեռու: Մինչեւ յիսուն՝ անիկա չէր յոգնիր օխանոց կլոր քարերը նետելու, իրր վարժ դիւնուր: Բայց նիւթական, իր բառովը՝ փարձնակամ այս ընդհատները անիկա կը զարմանէր անսակամ անյի ներուժ փաստարկութիւններով, որոնք յեղափոխական աշխարհահայեացքը կը նկրտէին ընդհանրացնել թմասաներու խուլ խղճմտանքներում: Անգամ մը պատուէ՛ր այդ մութը, յեղափոխական սուրբ գործը կարելի էր համարել փրկուած: Հիժա՝ մատի վրայ, այն ասան՝ հազարներ պիտի ըլլալին դիտակից զինուորները: Մեր գլուխը ժամերով պատրաստ եղաւ դիժա-նալ այս իրական քարկոծումին, ա՛յնքան, որ զարձաւ իր կարգին զի՛ հնոց յեղափոխական սուրբ զազափարի: Անհուն էր անկապակցութիւնը այս յեղումներուն մէջ ու կարելի չէ իր խօսքերը տալ հոս իր ձեւովը: Մնաց որ, մեծ

(*) Սպլուտը.— արծիւ քաղաքը:

մասը այդ սուրբ զազափարհերուն, այսօր դադարած են իրենց սրբութենէն ու թանգարանցու ապրանք կը հտաին:

Իսոյ այդ դժբախտութենէն զերծ է, զոնէ իմ մտքին մէջ, իր զէժքը, որ չէ կորսնցուցած սիրուն, աշխոյժ, իմաստուն իր զեղեցկութիւնը, երբ մեծ-կակ բոցի մը լուտուն՝ կը կարճրէր, կ'աննիւթանար, Քարայրի օճախին առջին ու զգալափարով՝ լուսապսակօ կը մեծնար իր դիւրբակէ իմաստէն: Ձերբակալումէն յետոյ, տանջանքի տակ իր արիութիւնը, ոչ մէկ անուն թուրքին յայնձնելու իր յամառութիւնը, մահուան մէջ մտնելէն ետքն ալ իր յոյսը անմեռ պահելու իսկապէս յեղափոխական շնորհը, ասրիներու խաւէն կ'անջատւին հիմա ու զիս կը մղեն տալու տնոր դիմազօութիւնը, կենդանագիրը, իրբ հտարնախր նմոյշ սերունդէ մը, որուն բարոյական շէնքը անծանօթ է մնացած սանկահատներուն, զոնէ անոնց, որ կ'իյնան Ալիսէն ասդին:

Անշուշտ, ստիպուած տալու, զիշիկ մըն ալ բան իր զազափարհներէն, նկատելով անհուն կարեւորութիւնը, որ ինք կ'ընծայէր ասոնց:

Առանց այդ զմեծ, զգորաւոր, զկենարար՝ Միսէնրիմ, պարզ կեանքի գրուազուժը պիտի ըլլար որբապղծութիւն մը անոր նուիրական յիշատակին, քանի որ անիկա շապրեցաւ իր սուր ժօրութիւն համար: Անիկա սերմանոցն էր զերազանց: Ու նոր արտերու արշաւին մէջ կը հասկնար իր իմաստը:

Այդ կէտէն կը մեկնի անոր զտածուժը զէպի սա ապերախտ, դաւաճան դաշտերը, ուր մահը որսաց զինքը:

(Շար- 4)

Թ. ՕՇԱԿԱՆ

Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

Շ Ր Ջ Ա Դ Ա Ր Ջ

Արեւադարձային բոյսեր,
 որոնք կը փշրեն
 ծիրանի փողն առաւօտի

Շեղբերն կանանչ տերեւներուն
 կը պատենն եին երկինքը,
 որ իբրեւ տեճոր ինկած է ետին,
 եւ ամօրեւները հասարակացի
 կ'իյնան հոգեբուն
 եւ այիճներուն ծափաւ,
 որոնք տերեւներ կը գծագրեն

Եւ սեւամորթ բոպիկ աղջուկներ
 կը փրցենն գանձնք
 ու կը իջնեն ամօրեւին տակ
 թանձր. կանանչ տերեւներով պաշտպանուած

Տերեւն զիրենք կը պաշտպանէ անօրեւն,
 հառապայթէն արեւի,
 բայց շողերը ջրածնային ռումբերու
 ալիւ-ալիւ կուզան զիրենք օգոզելու

Եւ մեծ մագին կախարդանքը
 չարէն պիտի չպաշտպանէ
 բոպիկ սեւամորթ ազգնակները,
 որոնք կը իջնեն ամօրեւին տակ

Բ Ե Ի Ե Ռ Ա Յ Ի Ն Օ Ր

դէմք մը
 Բարացած շրջապատին մէջ:
 Սառցակաշտերէն, լուսքնէն ետք,
 աչքեր դարեր կը դիտեն
 խորութեամբ մ'ունայն

— Իսկ խաւին տակ ստոցակոյտերու
կը շարունակուի
բջիջային առօրեան —

Ու ը սկսաւ այս խաղը .
առանձին էինք՝ փակուած մենք մեր մէջ
Իսկ յարիշները իրենց
առանձնութիւնը կը ծածկէին, շարունակ
մտնալով զիրենք քաղաքներու մէջ
... մտածումը կեդրոնախօյս կը փախչէր
կարծես ոչ մէկ տեղ
կարենալով դանդաղիլ :

Սկեպտիկ ձեւով կեանքը դիտելը
ճախրնտրելի է :
Օտարութիւնը մագնիս է հրաշքի
Արիւնն այլեւս կարծես չի կրնար
տանիլ սերմեր հարազատ
— ուր ծաղիկները միսի կը թառամին
ու արիւնը կը չորնայ —

Մարմինը կ'իյնայ :
Կը կրկնուի շարժումը :
Հիմա՝ երկրորդ օտարութիւն
հետզհետէ կը քայքայուիմ
կողքիդ երկարած ,
մինչ դուն ապշած՝ անտարբեր կը դիտես զիս :

Ո՞վ էր, որ ինքզինք ջնջեց
չկորսնցնելու համար :

ԼՐԻՍՆԻ ԼՈՅՍ

Գիշերները պատուհանները կը պահենք քաց ,
որ թարմանան մարմինները մերկ
եւ լուսնի լիւրկ լոյսին տակ
մեր ճրտինքը կը պազի :
Իսկ աչքերս ապակի
կը դիտեն մարմինդ

անճանաչելի
այլափոխուած այդքան՝

— կրկնելու յոյսներ ինչպէս
միտքէդ՝ դուրս կը բացուին
այլ մարմիններ կրանիթէ եւ ընդերկրեայ ջուրերէ ,
որոնք կը ծփան
ժամանակի տարածքին —

digitised by A.R.A.R.@

Եւ երկարած ես հիմա, դեղահատերու ազդեցութեան տակ,
 իսկ ես չեմ կրնար
 — քանի՜ տարի է —
 կոպերս փակել
 (Ես չեմ կրնար հաշտուիլ
 մտքի ու մարմնի
 գունաքափումին)
 կր կտրտեմ քու դէմքդ՝ միացնելով այլապէս,
 կը կտրտեմ մաշած պատկերն քաղաքին
 պատուհանէն ներս խուժող

Եւ այս ամէնը, գանձ,
 փլասքի՛քէ լոյսին տակ,
 անշունչ իրեր կը դառնան...

Ջզագրդիս քայքայում է.
 քայքայ մեզմէ ոչ ոք
 գայն կրնայ ճշտել:

ՀՐԱՀԱԻ

Վարսեր շողէ
 կը տարածուին
 քափանցելու քաղաքի
 պատերէն ներս
 եւ ծովափին:

Կը կարծէի.
 թէ քոչուներն խեղդուած են
 կամ կը ծփան
 ապականած ջուրերուն վրայ:

Քայքայ դուն, որ թեր ունիս
 տակաւ ծառայում
 — Հրահաւ մը
 որ առաւօտի կրակ է միայն եւ ոչինչ կ'ըսէ,
 խորհրդաւոր ժպտը ունի
 Մանալիգայի —
 կը շարունակես թեւածել
 — առանձին՝
 լուսաստղը ինչպէս —
 մեքենական այս երկնքին մէջ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔ ԵԱՐԺՈՒՄՆԵՐՈՎ

* * *

Երբ մխերը ազդիկներուն
վարդենիի պարտեզներ են, Միջերկրական,
եւ սարսուռներ կը հասին
մորթին վրայ, արեան մէջ,
եւ աչքերուն ինկած է
առաւօտը, ծառերը,
ինչպէս լուսապատկերի
արուեստական խազ մը:
— Այլակերպուող ամորշուքիւն
մարմիններու մէջ, որ կը տարածուին...
եւ կալին մէջ կ'արթննայ կիմը —

* * *

Գիտես մխերն կիներուն, որոնք գրգիռ են, յետոյ
պատուար անթափանցելի
առանձնութիւնդ, ուր կը գայթեմու,
իսկ անոնք մարդկային ծովուն մէջ,
ճակատագրէն քոնուած ձուկեր ինչպէս,
յանախանգով չխեղդուելու,
իրենց էութեամբ չճարածալու,
կը նետուին դուրս քուրերէն:

* * *

Դուն կը վագէիր շատրուանին շուրջ
օր մը սեւեր կամ սպիտակ հագած:
Մեռած մարդու մը միտերուն դիմաց
առանձնութիւնդ
եւ ձանձրացած քաղքենիի շուրուամբ ժայթքեցիր:

Հիմա նստած ես դէմս ու կը խօսիս շարունակ.
մինչ պարզ բառերէ, զգայնութիւններէ, ժպիտներէ
ամէն վայրկեան կը ծնիմ:
Իսկ այս կէտ-կէտ պարապութիւնը մեր միջեւ,
պաստառ մը ինչպէս մեզ ալ իր մէջ կ'առնէ:
Գունաւոր կէտերէ աշխարհ մը կարծես,
որ հետզհետէ կը գունաթափի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆ



Որպեսզի բանտերը յախտեճապէս անհետանան, մենք նոր բանտեր շինեցինք:

Որպեսզի բոլոր արգելիճները վերնանան, մենք Ֆինական Պարիսպով շրջապատեցինք մենք զմեզ:

Որպեսզի աշխատանքը վերածենք եանգիտի ու հաճոյքի, մենք կալսեման արշաւաններու պէտքերը որդեգրեցինք:

Որպեսզի այլեւ կաթիլ մը իսկ արիւն չբափի, մենք սոսնճեցինք, սպաննեցինք, սպաննեցինք:

ԱՆՏՐԻ ՍԻՆԵԱՎՍԿԻ

«Բրոզմերու հակասազիրը յեզափոխութիւններու ընթացքին անուկ Լեփոլա Լապէցի ուսումնասիրութիւնը, որուն հրատարակութեան սկիզբը մեր նախորդ թիւով, իր հետագայ ժամերուն մէջ յայտնի անգրադարձած է Զոհանդ-բերեան Յեղափոխութեան հանդէպ ուսուցողութեան որդեգրած կեցուածքին ու սպասած փորձառութիւններուն, որոնցմէ մէկն է խորհրդային դրութեան սուտը հակասութիւնը պատկերացուող Անտրէ Մինեաւսկիի վերի սեւ երգիծանքը:

Անտրէ Մինեաւսկիի անձնաթուղի անուկ էր չէ մեր ընթերցողներուն: Վերջինս 1906ի Ապրիլի, Մայիս եւ Յունիսի համարներուն մէջ Թարգմանարար ներկայացուցած էինք Ժանկանուիի մը սակարտասանման թերթերուն յանձնած իր «Ընկեր-վարական իրապաշտութիւն» խորագրեալ ծառայուն յօդուածը, որ հզու իր մերթափառութեան (1905) գլխաւոր պատճառներէն մէկը:

Լեփոլա Լապէց այդ նոյն յօդուածին սուած

է վերի տխրամտեանումը, որուն անմիջապէս կը նկատուին Մինեաւսկիի սեւազրած նայեցան ժողովուրդը կրեւոյթներ կու եւ, վերջապէս ա՛յն, որ՝

«Երբեմն այնպէս կը թուէր, թէ ամբողջապէս յազրանակիլու համար՝ համայնավարութեան կը պակտը վերցնէ սոցալիզ մը, — հրամարիլ համայնավարութեան:

«Տէ՛ր, Տէ՛ր մեր մեզի մեր մեզեքը:

Այ ոչ դիտէ, թէ Տէ՛րը ինչպէս վարուեցաւ Մինեաւսկիի ողբերաներին հետ, բայց ամբողջ աշխարհը դիտէ, թէ տէրերը չհերցցին իրեն եւ ստիպեցին, որ ետքը տարուան տատանակիլ աշխատանքով մը թուէ Ն.Մարտիկան համար բերան բացած ըլլալու իր «Մէջընդ»:

Ճամբարային իր բաժակը ըմպելէ յետոյ, Մինեաւսկիին արտածուեցաւ անցնիլ Ֆրանսա (10 Օգոստոս 1975), ուր, ներկայիս, հրան Փալէի մէջ, շարաթը երկու տեղաւ ուսուական գրականութիւն կ'աւանդէ:

Լ Է Ո Փ Ո Լ Տ Լ Ա Պ Է Ց

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ
ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ
ԸՆԹԱՑՔԻՆ

Հայացուց
ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Յեղափոխական մեր ներկայ դարա-
չընանք աւելի խոսուն օրինակներ կրնայ
հայթայթել գրականութիւն-յեղափո-
խութիւն փոխարարութեանց եւ ա-
նոնց միջեւ բռնուող գրողներու ճակա-
տագրին յուրջ: Ամէնէն ընդհանուր գեա-
նի վրայ գոյութիւն ունի հեղինական
(ironical) հակադրութիւնը նախայե-
ղափոխական արուեստագէտներու եւ
գրողներու մահկանացու ճակատագրին
միջեւ, երբ անոնք կը մտնեն յեղափոխա-
կան կամ ոչ-յեղափոխական վարակար-
գի մը տակ: Փարատաքս է թէեւ, բայց
բնական ժառօր բնական է անոնց եւ միայն
այն ատեն, երբ տեղի կ'ունենայ ոչ-յե-
ղափոխական վարակարգի մը տակ: Քե-
րուս շափազանցութիւն կ'ըլլայ բոհլ,
այսուհանդերձ, անուբանալի իրականու-
թիւնը այն է, որ գրողները ասեղ-
ծագործական աւելի յայն ազատութիւն
փայտեած են նախայեղափոխական շըր-
ջաննրուն, քան յեղափոխութիւններէ ան-
միջապէս ետք: Նոպէլեան վերջին երկու
պաշակաւորներուն՝ Սոլժենիցինի եւ Նե-
բուտայի պարագաները յատկանշական
են այդ ուղղութեամբ եւ կը յստակա-
ցընեն վերոյիշեալ կէտը: Ուրիշ օրինակ
մըն է Պրեխթ, ուրիշ մը՝ Փիքասո, որ
հակառակ 1935ին ճրանսայի համայնա-
վար կուսակցութեան միացած ըլլալուն,
իւր ձեւապաշտ (formaliste) պատաս-
անքը մինչեւ օրս չեն ցուցադրուիր Պոր-
չըրդային Միութեան մէջ, Ի հարկէ
դեռ կարելի է նման օրինակներու ամ-
բողջ շարք մը տալ:

Հետեւաբար, զարմանալի չէ, որ
երբ բազմաթիւ գրողներ, որոնք հաս-
տատապէս կը հաւատային, որ դէպի
Մոսկուա իրենց ուխտագնացութեամբ
զկ'երթային տեսնելու ապագան եւ ա-
նոր մուտնումները, մերժեցին հաս-
տատուիլ իրենց երազներու երկրին մէջ,
երբ առիթ ունեցան ընտրութիւն կատա-
րելու:

Երբ Լիոն Յէօթթվանկէր 1937ին Մոս-
կուա այցելեց, տեսաւ անոնց զբնական
ազատութիւնը (եւ դրեց գիրք մը՝ ար-
դարացնելով Մոսկուայի դատաւարու-
թիւնները), բայց ինք նախընտրեց ապ-
րիլ փախստականի կեանք մը — ձեւա-
կանք քաղթնիական ազատութեան մը
տակ նախ՝ Փրանսայի մէջ, ապա՝ Ամե-
րիկա: Ճիշդ նոյն ձեւով վարուեցաւ
Հայնրիխ Մանն, որ տարիներ շարունակ
սպրեցաւ Միացեալ Նահանգներու մէջ
եւ երբ երկարատեւ ստատմամբներէ
ետք որոշեց մեկնիլ Արեւելեան Գերմա-
նիա, մեռաւ: Պրեխթ հաստատուեցաւ
Կոն, բայց պահեց իր աւստրիական ան-
ցագիրը, ինչպէս նաեւ իր հաշիւները
Շուէտի մէկ դրամատան մէջ:

Աւելի դիւրին է գրողներու հա-
մար իրենց յեղափոխական կապերն ու
հաւատքը պահել իւթոփիայի մասին,
երբ դատապարտուած չեն անոր մէջ
սպրելու: Զարմանալի չէ, որ մեր դա-
րու յեղափոխական փորձառութիւնը
հանդիպեցաւ հակասական անդադարձ-
ներու թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճա-
կատներու վրայ: Պարզապէս ապշեցու-

ցիւ է թիւն ու սրակր ա՛յն դրապակեանքուն, որոնք թէ՛ ժամանակաորայէս եւ թէ՛ մնայուն կերպով խանդավառութեան յեղափոխութեամբ եւ նոյնացուցին զայն խորհրդային դատին: Անոնց մէջ կարելի է հաշուել շարք մը անուններ, ինչպէս Անաթոլ Թրանս, ճորճ Պերնար Շօ, Բոմէն Բոլան, Հանրի Պարպիւս, Քէոտոր Տրէյպը, Ափթրն Աէնքէր, Անտրէ Մայրօ, Ժիլիէն Պենտա, Ժան Կրիշչնօ, Փօլ Նիգան, Անտրէ Ժիտ, Փօլ էյիւար, Լուի Արակոն, Ժան-Փօլ Սարթը, Սիմօն տը Պօլուատ, Սին Օ՛Քասէ, Փանաթի Էսթրաթի, Մարթին Անտրարն Նեքօ, Լուսփիկ Բէն, Եօնանէս Պէլլոր, Քէոտոր Փիլիպիէր, Հարտր Լաքունէս, Իկնացիօ Սիլոն, Սեզար Փալէս, էյիօ Վիթորիի, Վալքօ Փրաթուիի, Քարլօ Լէփի, Ճոն Տոս Փաստս, Էստրա Ուիլյամ, Է. Է. Քամինկզ, Բիլաւա Ռայթ, Ու. Հ. Օսթը, եւ շատ մը ուրիշներ:

Յիշեալ գրողները, բոլո՛րն ալ, կորսնցրուցած են իրենց հասարակ, իսկ ուրիշներ կրած են զգալի բարեշրջումներ: Անոնցմէ իւրաքանչիւրը, ի հարկէ, կը ներկայացնէ անհասական առանձին պարզայ մը, բայց ժամանակին բոլորն ալ փարեցան յեղափոխութեան առապելին (myth), ունենալով հանդերձ տարբեր ենթահող ու անհասականութիւն: Ինչպէս իրենց նախորդները բրին Թրանսական Յեղափոխութեան տանն, այս գրողները ողջունեցին Ռուսական Յեղափոխութիւնը՝ իրրեւ ազատութեան եւ արդարութեան լուսաստղ մը:

Սկիզբէն եւեթ, զէպի իրենց յեղափոխութեան Մեքքան կատարած ուխտագնացութեան ընթացքին՝ անոնք տարւեցան ո՛չ միայն քաղաքական միամտութեամբ, այլև ջուշարժիչին պատրաստակամութիւն՝ արդարացնելու համար քաղաքական բրտութիւնները: Յարգարժան սկեպտիկը՝ Անաթոլ Թրանս, կը յայտարէր, որ «եթէ մարդ փախաքի տեսնել հաստատուած արդարութեամ մը իշխանութիւնը, հարկ է որ սն անցնի անոր անաճուսի համգրուամենրէն - անարդա-

րութիւններէ, դամանաքի ներքէ, արմահեղու թիւմներէ»: Ան զազափար իսկ շունէր, թէ ինչ կրնար բլլալ նման երևույթի մը կշիռը: Չորդ դարուն (Հակառակ կուսակցութեան կամքին՝ ան պաշտպանեց որու ընկերմար յեղափոխականները, որոնք զատապարտուեցան Մոսկուայի մէջ, 1922ին):

Աւելի ուշ, աստիճանաբար ծնունդ առաւ տարբեր մտայնութիւն մը, ուր բարոյական ըմբռումը կը միացուէր ահարեկչական մենապիւրութեան: Սոյն մտայնութեան աղբիւրը կը հանդիսանար Պրէիթի «Տայ Մասնախմբը» (Die Massnahme) ուր Հեղինակը կուսակցութիւնը կը դատէր բարոյականէն զերիվեր: Նոյն առիթով կարելի է յիշել Օսթըր, որ իր «Սպանիա» քերթուածին մէջ կը դաւանէր «յանցանքին դէտակցուած ընկալումը անհրաժեշտ՝ ո՛հերին մէջ»: Իսկ Մէրլօ Փոնթի իր «Մարդկայնութիւն եւ անարեկչութիւն» (Humanisme et Terreur) անուն գործին մէջ կը ներկայացնէր Ստալինի կեղտնաղծան ճամբաներու գոյութիւնը արդարացնող մտայնութեան ճիշդ հակառակ տրամաբանութիւնը:

Ստալինեան շրջանին ապրող մարդոց արտայայտութեանց բթամտութիւնը կ'անդռնէ ընական հակացողութիւնը: Նման արտայայտութիւնները գրի առնուած են ո՛չ միայն յիմար օրագրողներու կողմէ, ինչպիսին են Հէուլէթ Ճոնսօն, Աննա Լուիզ Սթրոնկ, կամ Ուէլս, այլև մեծաճշտակ զրօգէտներու կողմէ: Բոմէն Բոլան կը կարծէ, որ Ստալին կ'ընծայէ լաւագոյն հաւաստիքը, թէ պէտք է պայտպանութիւն չիմացականութեան իրաւունքը: Ծորճ Պերնար Շօ Ստալինը կը համարէ «յաւ ունկնդիր» մը, Հայրիխ Մանն կը հաւաստիացնէ, թէ Ստալին պիտի հակառակի մարտնչախօ յրջորջումին աւելի քան մտաւորականին, իսկ Ֆէօթիփակներ կը գրէր, թէ «տաղտկալի է Ստալինի համար կուռքի վերածուելը, բան մը, որ կ'ըլլայ արգէն»:

Մեծ Մաքրագործումներուն ըն-

թացյին, Ախմաթովա իր «Հագեհան-գիստ» անուն բանաստեղծությունների մեջ կր գրեր հեռուստատեսության մասին:

Այս կիևը հիւանդ է՝ մինչև իր մզ-նուզեղը:

Այս կիևը ամբողջովին միմակ է:

Մեռած ամուսինն մը ունի, հեռացած գառակ մը

Բանտին մէջ: Ազօրեցեք ինծի հա-մար: Ազօրեցեք՛է...

Մտակուսի գոտավարութիւններուն ընթացքին դատարարուածներուն մա-սին Արակոն կը գրէր. «Այս մարդերը անմեղ ոկատել՝ կը նշանակէ որդեգրել Հիթլերեան թեզը՝ իր ամբողջական կե-տերում մէջ»: Երբ Տէյփա Ռուս ուղեց հանրութեան սեփականութիւնը դարձրո-նել Ստալինի կեղբոնացման «մարտնե-րուն» մէջ անդ գտած իրականութիւնը, Սարթր գէժ կեցաւ ահոր, գրելով, որ՝ «Պիլանֆալթի աշխատութիւնը պէտք չէ գրկել իրենց յայտերէն»:

Ուր յանդեցան ոուս գրողներուն յոյսերը:

Գորկի իր «Մայրը» անուն յեղափո-խական ազատական գործին մէջ կը նա-խատեսէր, որ յեղափոխութենէն ետք «Ռուսիա պիտի ըլլայ ամէնէն փայլուն ժողովրդավար պետութիւնը ամբողջ աշխարհի մէջ»: Իսկ երբ յեղափոխու-թիւնը տեղի ունեցաւ, այդ համոզումը նուազեցաւ անոր մօտ: Պորչուսիին Միտթենէն գաղթած գրողներու մէջ էին Պրոնին, Անտրիյեւ, Բէրտէյեւ, Մերեզ-կովսկի, Ջինիատա Հիփփիուս, Րէժի-զով, Պալմանթի և Կոտասեիչ: Նոյն-պէս և Ալեքսէյ Թոլստոյ, Յովսէփյեւ, Էրենբուրգ և Փրէնս Միլսկի, որոնք, բոլորն ալ, աւելի ուշ վերադարձան Ռուսիա: Քսանական թուականները յա-րաբերաբար կը նկատուին խորհրդային գրականութեան ոսկեդարը: Դեռ պար-տադրուած չէր «Ընկերակարգական իրա-պաւտութիւն» անունով ծանօթ լուծը: Նիֆի տիրապետութեան տակ ողբկան

չնշելի մթնոլորտ մը կար գրողներու համար և գրական հակումներու պայ-ջարը որոշ չափով թոյլատրուած էր: Արուեստագէտներ և յատկապէս գր-րողներ տակուին որոշ պատրանք մը կը սնուցանէին՝ գտնելու համար ներդաշ-նակութիւն մը ընդդէմ գրականութեան և քաղաքական «վանկարային»: Բայց կու-սակցութիւնը կը դառնար բուցարձակ մեծատէր և միայն ժամանակի հարց էր նաև գրականութեան սանձումը:

Չամթիւն, որ իր «Մեմէ» վէպին մէջ Ստալինը կը ներկայացնէ Մեծ Բարե-բարի մը պատկերով, նոյնպէս մեծ ազդե-ցութիւն կ'ակնկալէ նման կաշկանդումէ մը, երբ կ'ըսէ, թէ այնքան ատեն, որ ոուս գրողներուն չի թոյլատրուիր գրել առանց իշխանու-թեան պարտադրանքին, «մեր գրակա-կանութիւնը պիտի ունենայ միայն մէկ ապագայ, - իր անցեալը»: Եւ այդ էր, որ պատահեցաւ իրապէս: Մանտիլ: Թոմ այդ վատնող զգաց աւելի կ'անուխ, 1923ին, երբ կը գրէր «Տարիքս, զուգա-նը» անուն իր բանաստեղծութիւնը:

1930ին, Րոման ձէքըպըն գրեց «Սերունդ մը, որ մոխրաց իր բանաստեղծ-նիրք» (The Generation That Squandered its Poets) յօդուածը, ուր ան կը նկա-րագրէր ճակատագիրը շորտ ոուս բանաս-տեղծներու, որոնք ընդունած էին յե-ղափոխութիւնը, և ճակատագիրը ու-րելի մը, որ մերժած էր զայն: ձէքըպ-սըն կը յիշէր «Կուսակցութիւնի մահապատիժը, երկարատևութեամբ հոգեկամ մեղմամբները, Փիգիֆական անտանիլի տանգրամները, Պլոքի վախճանը, ահաւոր գրկանքները, Խլէպիկովի մահը, Ծանիցի և Մայա-կովսկիի կան] ամտածուած անճանապա-նութիւնները»:

Այս բոլորով հանդերձ, յօդուածին եզրակացութեան մէջ կը յատկացուէր, որ խորագրին մէջ յիշուած սերունդը «սե-րունդ մը» չէր, «որ մոխրաց իր բանաս-տեղծներն ու գրագէտները»:

Պորչուսիին Գրողներու Առաջին Հա-մագումարին, որուն կը մասնակցէին նա-և արևմտեան գրականութեան փայլուն աստղերէն ոմանք, ինչպէս, օրինակ, Ժիւ

և Մալրո, Ժամանոյ կր զոյարանէր խորհրդային գրականութեան մէջ առկայ լուսանկարները: «Մեր գրականութեան քայլատրուած է խանդավառութիւն և հերոսութիւն»: Գարձի եկած Գորկին, որ այն ատեն խորհրդային գրականութեան Պատկանի Մերուկն էր, կ'անդրադառնար «ընկերայրական իրազատութեան» հրամայական անհրաժեշտութեան: Ան ճատոյնակին կը նկարագրէր իբրև «դասալիք մը, որ երբէք չկրցաւ ըմբռնել մարդկային ազնոյն գործնականը, և կը յայտարարէր, որ շիրտ գրականութիւնն ու ճշմարտութիւնը կը գտնուին ժողովարդին ծոցէն յիւստի հերոսներուն մօտ, աշխատար դասակարգի ամբողջական ու մշտագոյն աճի հերոսներուն, ինչպիսիք են Պրոմէթէոս, Սվեթակոր, Իվան տր Սեմիլը, Փեթրոշեան և, վերջապէս, Լենինը: Մալրո կ'ողջունէր Սպիտակ ծովու ջրանցքին բացումը (կատարուած ստրկային աշխատանքով) և կ'ընդունէր «ընկերայրական իրազատութեան» իբրև «արժէքաւոր մեթոտ մը» արտայայտելու համար «արդարապէս հերոսական առասպելին ի նպաստ իր զիրքորոշումը»: «Կր կարծեմ, որ ինչպէս նիցչէ ժամանակին առաւ մարդը իր անմշակ կացութեան մէջ և գայն բարձրացուց Ձառարուարայի մակարդակին, Ույնպէս և մեծ պէտք է անգամ մը եւս, և ծիծաղելի թուր գգացականութիւններէն անդին՝ վերակոչենք բոլոր արժէքները, որոնք մարդերը կը միացնեն և կ'իմաստաւորեն մարդկային նորարարութեան արտայայտութիւնը»:

Վերև յիշուածը բոլորովին անյարժար նկատողութիւն մըն է այն ժամանակին մէջ, որ կը բանար «երկրապաշտ շրջանի խորհրդային կեանքին և գրականութեան մէջ»:

Երկու տարի անց, Գորկի կը մեռնէր, իբրև հետեւանք իր բժշկներուն «ճիգին», որոնք կործանելու համար խորհրդային գրականութիւնն ու յեղափոխութիւնը, կը վառնակէին անոր առողջութիւնը: Տարի մը ետք, Ժրա, որ 1932ին կը գրէր, որ իր զգարձը ունի կրօնական բնոյթ մը» և կ'արտայայտէր իր այն հա-

մողումը, որ «եռնորդային Միութիւնը կ'առաջնորդէ ազատագրման ուղիին», կը յայտարարէր. «Մարդ պէտք է տեսնէ երեսօյքները այնպէս՝ ինչպէս որ են անոնք և ոչ թէ պէտք է պատկերացնէ գանձնէ այնպէս՝ ինչպէս պիտի ընէր քաղձայի երգի մը մէջ», և կ'եզրափակէր՝ «բեկով» խորհրդային Միութիւնը յուսախար ըրաւ մեզ մեր խորագոյն յոյսերուն մէջ»: Վերջին խօսքը կը դառնար շարժառիթը (leitmotif) Արեւմուտքի այն գրագէտներուն, որոնք խանդավառութեամբ որդեգրած էին Ռուսական Յեղափոխութեան դաշափարները, ապա՝ պատրանաթափ եղած, այնպէս՝ ինչպէս պատահած էր իրենց նախորդներուն, Տրանսական Յեղափոխութեան պարագային: Իրաց ատեայ անկէ, որ արդ նմանութիւն մը գոյութիւն ունէր երկու յեղափոխութեանց միջև, Ռուսական Յեղափոխութեան հաւատացողներու պարագային այդ նմանութիւնը երևակայութեան ուժով կը շափագանցուէր և կը դառնար մտային յանախանք, որ «որքան ալ պատրաշիր» չափով մը կը ձեւաւորէր այս վերջիններուն արտաքինն ու աշխարհահայեացքը:

Գրագէտներու և բանաստեղծներու մտեամբ շարունակուեցաւ, զիչ մը աւելի լայն ծիրի մը մէջ, Եզնովչինայի և Պէրիովչինայի իշխանութեանց ներքեւ: Սոյսնիչին լման պատկերը կուգայ առար իր «Բաց Յամակչին մէջ» ուղղուած խորհրդային Գրողներու Ձորորդ Համագումարին:

«Բագմաթի գրողներ իրենց կեանքի ընթացքին դատապարտուեցան՝ շահագործուելով բեմերէն և մամուլէն՝ առանց ունենալու նոյնիսկ փիլիսոփայական կարծիքները պատասխանելու ատենց: Աւելին՝ անոնք ենթարկուեցան անհատական հալածանքներու, ինչպէս, օրինակ, Պուլկաիովը, Ախմաթովան, Յվէթայեւան, Փասթերնաքը, Ջոշէնգոն, Փլաթթոնովը, Ալեքանար Կրիկը, Վասիլի Գրոսմանը: Գրողներու Միութեան ղեկավարութիւնը իրենց յուսահատութեան մէջ լինց այն գրագէտները, որոնց կեանքը վերջացաւ ախտով, կեղծանցման ճամ-



ՊՈՐԻՍ ՓԱՍՏԵՐՆԱՔ

բարձրում մէջ կամ մտնումք — ինչպէս Փաւլէ վասիլիւր, Մանտիլըքամը, Արտեմ վասիլիմ, Փիլիպպ, Փապէլը, Քապիցը, Չապարակիմ, եւ ուրիշներ: Յանկը վերջ պէտք է գտնէ շուրջներք բառով: Կուսակցութեան Չորդ Համագումարին մեկն վերանասու եզանք ա՛յն իրողութեան, որ Միութիւնը պարզորէն իրենց նակատագրին ձգած էր աւելի քան 600 գրողներ՝ բանտերու եւ քամբարներու մէջ: Յամենայնդէպս, շարքը աւելի երկար է...»:

Յանկը կը շարունակուի ծինչելու այսօր, հակառակ անոր, որ Մասիինի ժառնէն հոգ գրողներու եւ արուեստագէտներու հետ կը վարուին նուազ բրտութեամբ — այսինքն՝ տարբեր չէ պարագան Պրոտսկիի, Սինեպսկիի, Տանիէլի, Պուրոսկիի շուրջներքու: Հարկ չըկայ ըսելու, որ Մուժէնիցին ամէնէն հանրածանօթ օրինակն է այս ուղղութեամբ:

Ի՞նչ էին Խորհրդային Միութեան մէջ գրականութեան եւ յեղափոխութեան փոխարարներութեան շուրջ հանուած եղբակացութիւնները այն գրողներուն, ու-

րոնք ուղեցին դարաշրջանին վկաները հանդիսանալ:

Փասթերնաքի, Սինեպսկիի, Մուժէնիցիի եւ Նաստիտա Մանտիլըքամի պարագաները բաւական պերճախօս են այդ կապակցութեամբ: Անոնք կը ներկայացրեն ժամանակակից կրօնական գարնանում մը Ռուսիոյ մէջ, բայց անոնց բարոյագիտական փոխադարձութիւնը եւ պատմական անդրադարձները հասարակաց յայտարար կ'ընծայեն շատ ուրիշներու, որոնք պայմանականօրէն յեն բաժներ անոնց սեփական հաւատքը:

«Տոբոք ժիվակօսի մէջ՝ Փասթերնաք տարտամ կեցուածք մը ունի յեղափոխութեան հանդէպ, բայց այդ տարտամութիւնը կը փարատի աւելի ուշ բրած իր յեղափոխական յայտարարութեանց մէջ:

«Վերակերտել կեանքը: Մարդիկ, ուրոնք կ'ըսեն ասիկա, վստահարար են՝ բան փորձառութիւններ ասլրած են, բայց ոչինչ հասկցած են հեռմէն մասին... Անոնք կեանքին կը նային իբրեւ իւր եւ կարծր միւթերու դէզի մը, գորպէտք է մշակեն... Բայց կեանքը երբէք առարկայ կամ միւթ չէ... Կեանքը ինքզինք վերանորոգելու սկզբունքն իսկ է... Ատիկա անուսնապէս հեռու է քու կամ իմ բութ տեսութիւններէն...»:

«Մարքսիզմը անորոշ ենթանոց մը ունի՝ գիտութիւններու շարքին դասուելու համար: Գիտութիւնները աւելի հաւատարակչուած են եւ աւելի առարկայական: Չեմ հանդիպած որեւէ շարժումի, որ աւելի անձնակերպոն եւ իրականութիւններէ աւելի շեղած ըլլայ, քան Մարքսիզմը: Այդտեղ ամէն մարդ կ'աշխատի ինքզինք իրագործել գործնական տուեալներու վրայ՝ իբրեւ ուժի մարդը, անոնք այնքան տարուած են անսխալականութեան առասպելը հաստատելու գործով, որ իրենց գերագոյնը կ'ընեն անտեսելու համար իրականութիւնը»:

Ուրիշ առիթով մը, Փասթերնաք կ'աւելցնէր հետեւեալ հեղեանական ակնարկութիւնը.

«Ինչ որ անոնք կ'ուզեն՝ իսկապէս շատ չնչին բան է, իրականութեան մէջ

մէկ բան է. առեց ինչ որ մէկը կը սիրէ եւ սիրել ինչ որ մէկը կ'անտեսէ: Ու առտիկա ամէն բանէ դժուար է»:

Բնկերփորական իրապաշտութեան ժառին գրած իր մէկ յօդուածին մէջ, Մինեալիկի կը յատկացնէ նժան ստիպողականութեան մը (ինչ որ բնկերփորական իրապաշտութիւնը տուեալ մը կը դարձնէ դրականութեան մէջ) եւ յեղափոխութեան իւթոփէք վախճանին միջեւ գոյութիւն ունեցող առնչութիւնը, զոր ինք կը կոչէ «Նպատակը»:

«Որպէսզի բանտերը յախանապէս անհետանան, մենք նոր բաները շինեցինք: Որպէսզի բոլոր արգելքները վերանան, մենք Չինական Պարիսպով մը շրջապատեցինք մենք զմեզ: Որպէսզի աշխատանքը վերածենք ինքնագոյնի եւ հաճոյքի, մենք կայանաւոր աշխատելակերպը որդեգրեցինք: Որպէսզի այլեւս կարիք մը իսկ արիւն չթափի, մենք սպաննեցինք, սպաննեցինք եւ սպաննեցինք»:

Իր վերջին վկային՝ «Ոգոստոս 1914»ին (August 1914) մէջ, Մայիսիցին քանի մը քննադատական մտածումներ կը ձեւակերպէ ուսական արժանատիան մտաւորականութեան նկատմամբ: Իր ներկայացուցիչը, Սոնիա, երիտասարդ ժողովրդական մը՝ կը քննադատուի Հօրը կողմէ, յեղափոխական փորձարաններ որդեգրած ըլլալուն պատճառով: Գորկիի «Պիլիպպոսի»էն մէջբերումներ բնութիւն՝ Մայիսիցին կը յատկանշէ յեղափոխութեան կոչը իբրեւ «անպատասխանատու»: Ան կը փաստարկէ, որ քաղաքական միջին եզրերու Հետեւողականութիւնը եւ մասնագէտներուն կողմէ ի գործ դրուած Հիմնական աշխատեալները կրթեան յաղթահարել Ռուսիոյ ճարտարարւեստական յետմնացութիւնը:

«Տրամաբանութեան տէր մարդ մը չի կրնար յեղափոխութեան համաձայն ըլլալ, որովհետեւ յեղափոխութիւնը կ'ենթադրէ երկարաժամանակ եւ անմիտ կործանում: Առաջին հերթին, յեղափոխութիւնը, որեւէ՛ յեղափոխութիւն, չի նորագոյն երկիրը, այլ զայն հիմնադրական կը կործանէ երկար ժամանակաշրջանով:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅՈՒՆԵՆՅԻՆ

Եւ որքան աւելի արճաճեց, որքան աւելի երկարաժամանակ ըլլայ անիկա. որքան աւելի ժողովուրդը տուրք տայ անոր, ա՛յնքան աւելի ծառայականութիւններ կան, որ այդ յեղափոխութիւնը ՄԵՄ անուանուի»:

«Յոյս յոյսի դէմ» (Hope against Hope) իր Հասարիւն մէջ՝ Նատուտա Մանտելիթամ կը քաջատրէ յեղափոխութեան երկարաժամանակ շրջանին տիրող սարսափներուն դէմ դիմադրականութեան պակասը, իբրեւ փաստ բերելով յեղափոխութեան շուրջ Հիւսուած առասպելը, զոր իրենց մտքերուն ունէին արժանատիան մտաւորականները:

«Մտաւորականութեան նուաճման արդիւնք բաժինը կը խաղաղութիւնը՝ թէ սարսափի եւ բարբարոսութեան միջոցաւ (թէեւ Աստուած գիտէ. թէ որքան շատ տեղ գտած էին այդ երկուքը), այլ մա՛նուաճակ «Յեղափոխութիւն» բառին պատմաբանով, որմէ ոչ ոք կ'ուզէր հրաժարիլ: Ատիկա բառ մըն է, որուն դիմաց ամբողջ ազգեր տեղի տուած են, իսկ ատար զօրութիւնը այնքան ուժեղ է, որ մարդ կը զարմանայ տեսնելով, որ մեր զեկապարները տակաւին պէտք կը տեսնեն բանութեանը»:

բու եւ մտնապատիժներու գործադրութեանց :

Այստեղ է հարցին էութիւնը, երբ վարչակարգին օրէնսդրութիւնը կը հիմնուի, անպատ հարեւանցիօրէն, յեղափոխութեան ընկալման վրայ իրրիւ հարթութիւն համայնավար Իւթոփիային : Կուսակցութիւնը ծայրայեղօրէն զգայուն է այս կէտին մէջ (եւ միշտ այ այդպէս եղած է) : Ատիկա, ի հարկէ, հիմնուած է Մարքսիստ, պատմութեան վրայ, որ հաւատաւոր ձեւով մը հաւատքի կատարելագործումը կ'ընդունի նախապայման ճշմարտանքի իրագործման : Այստեղ է սուստաբիկ զտղտփարարանութեանց հակակշռի մեքենականութեան ներքին օրինաւորութիւնը, որ կը ներմուծուի նաև ընկերվարական իրապաշտութեան վարդապետութիւնը գրականութեան մէջ : Ամէն ինչ, որ հարցականի կ'ենթարկէ մարքսեան զպատմութեան օրէնքներն աւարտէրը, միաժամանակ կասկածանքի կ'ենթարկէ ո՛չ միայն ընկերվարական իրապաշտութեան գաղափարարանութիւնը, այլև յեղափոխութեան առասպելը (անոր զուգընթաց Իւթոփիային հետա-

նկարը) եւ, նոյնի բանիւ իբ ժամանակ-ցութիւնը կը բերէ վարչակարգի օրինաւորութեան մաշումին : Բա՛ն մը, որ առնուազն երեսպաշտ ծառայութիւն կը պահանջէ խորհրդային գաղափարարանութեան պատմական կարեւորութեանց եւ հաւասարեցումներուն հանդէպ :

Յրուշիւի զգաղտնի ճտնէնք առջին նման հաւատարացումներէ փոքր հետացում մը նշմարելի է : Ատիկա ցոյցած է գրականութեան մէջ, որ համայնավար գաղափարարանութեան ուրիշ ուղղակիօրէն եւ հանդամանօրէն մարտահրաւէրի կը կանչուէր վերեւ յիշուած շորս գրողներուն կողմէ : Յատկապէս Փասթերնաք եւ Մուսկեֆիցին ուղղակի նախադրականորէն եղան պատմութեան մէջ մարքսեան հայեցակէտին դէմ : Փասթերնաք կ'ակնարկէ տարր «Տոբոր փիլիսոփայի մէջ իբրև ամուսնալի ժաղրակամ գոյատոււմը», զոր պէտք չէ լրբութեամբ նկատի առնել, իսկ Մուսկեֆիցին «Օգոստոս 14-ին մէջ, իբ կարգին, իբ Հերոսներէն մէկուն ըսել կուտայ, որ զպատմութիւնը չի զնկաւարութիւն տրամաբանութեամբ», սրովիտեւ անիկա ամուսնաբանական է :

(Շար.)

ԼԷՈՓՈՒՓ ԼԱՊԷՑ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

Ֆ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ժ Ի Ի Լ Ս Ի Ի Փ Է Բ Վ Ի Է Լ (1884-1960)

Ժ Ի Ի Լ Ս Ի Ի Փ Է Բ Վ Ի Է Լ, որ Փօլ Ֆորի մահէն ետք ընտրուեցաւ Բանաստեղծներու իշխան, ծնած է 1884ին, Մոնթէվիտէօ, Աւրուգուէյի մայրաքաղաքը: Իր ծնողքին հետ կը դառնայ Ֆրանսա, ուր կ'աւարտէ երկրորդական իր ուսումը: Ծնողքին մահէն ետք՝ կը վերագտնայ Մոնթէվիտէօ, իր հօրնորոք մօտ: Երբ կը պայթի Համաշխարհային երկրորդ պատերազմը՝ Սիւփերփիէլ կը գտնուի Աւրուգուէյ, Աւնէր երկու հպատակութիւն, Փրանսական եւ ուրուգուէյական, եւ իր կեանքին տեւողութեան հանդիսացաւ հողեկան կապ ծր իր երկու հայրենիքներուն միջեւ:

Պատերազմէն ետք հաստատուեցաւ Փարիզ, ուր շարունակեց իր գրական գործունէութիւնը, որ սկսած էր շատ կանուխէն, գոյլժի նստարաններուն վրայ, 16 տարեկան հասակին, երբ կը հրատարակէր բանաստեղծական իր անդրանիկ հաւաքածոն՝ «Անցեալի մշուշներ»:

Ժ Ի Ի Լ Ս Ի Ի Փ Է Բ Վ Ի Է Լ մեռաւ 17 Մայիս 1960ին:

Թէեւ ան արտագրած է զանազան սեւերու պատկանող գրական արժէքաւոր գործեր, ինչպէս Թատերգութիւն եւ վէպ, սակայն իր լուսագոյն ըստեղծագործութիւնները կը համարուին բանաստեղծութիւնները:

Իր գլխաւոր գործերէն յիշենք՝ «Անցեալի մշուշներ» (1900), «Առազատամաւերու պէս» (1910), «Տխուր հիւստրով բանաստեղծութիւններ» (1919), «Քարափներ» (1922), «Ձգողական ուժեր» (1925), «Անմեղ քիւպարտը» (1930), «Աշխարհի առասպելը» (1938), «Երկիմէ եւ երկիր» (1942), «Ռոփէոս» (1946), «Մոռացկատ յիշողութիւն» (1949), «Ծնունդներ» (1951), «Ողբերգական մարմինը» (1959):

Վերի հակիրճ կենսագրութենէն երեւան կու գայ, որ Սիւփերփիէլ աշխարհի մեծ որբն է. որբ՝ իր ծնողքէն, եւ որբ՝ իր հայրենիքէն: Այս վերջին հանդամանքը կրնայ շատ սիրելի դարձնել զայն մեղի՝ հայերու, որ կը գտնուինք հողեկան նոյն կայութեան մէջ, այսինքն՝ ստիպուած ենք ծառայել երկու հայրենիքներու:

Ս/ւփէրվիէլի աղերուն մէջ զգալի է բացակայութեան քեմամ, որ ի-
րեն փնտռել էու սայ անծանօթ ներկայութիւններ, եւ խորիսի մը, որուն
վրայ կ'ամբաստնէ իր թափառական նաւը:

Ս/ւփէրվիէլ էրբեք չէ ուզած բանաստեղծութիւններ գրել խորհուրդի
մասնադէտներուն համար, ան հաւատարիմ մնացած է անմիջականութեան
եւ պարզութեան, ինչպէս իր գծրախա հայրենակիցը եւ գրչիցրայրը՝ Ժիւլ
Լաֆորէ: Սակայն այդ անմիջականութիւնն ու պարզութիւնը հարուստ են
ե՛ւ զգացումով, ե՛ւ խորհուրդով: Գրական շարժումներէն առած է այն բա-
նէրը միայն, որոնք կը յարմարէին իր ապշանդին եւ կ'ազատագրէին իր
ներշնչումն ու արտայայտութիւնը:

Ս/ւփէրվիէլ կը խուզարկէ անդունդները՝ երեւան հանելու համար
հոն թաքնուած խորհրդաւոր գոյութիւնները: Կարգալէ հաջ բանաստեղծին
«Ձգտողական ուժեր» հատորը, Ռեյնէր Մարիա Ռիլքէ, ոտնոր կը գրէր Հեսե-
կայր. «Դո՛ւմ՝ անդունդներուն վրայ կը ստեղծես տեւական ճամբայ մը, որ
սկիզբ եւ վերջ չունի: Դո՛ւմ՝ կամուրջներ կը մետես անցրպետիմ մէջ, եւ
այդ կամուրջին կամարները կենդանի են եւ մերդաշնակ»:

Ս/ւփէրվիէլ կը խուզարկէ ժամանակին դազանիքները, անկէ ստեղ-
ծելու համար տակիքներ, երազներ եւ զգացումներ, որոնք կը շէնցեն տիե-
զերական բացակայութեան երեւութական պարսպը եւ կը հազորդուին Մա-
հէն եւ ժամանակէն անդին գանուող միակ իբրականութեան, որուն յաճախ
կը արուի Առտուած անունը:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

Օր մը երկրագունտը պիտի բլլայ
Թաւալող կոյր միջոց մը,
Որ պիտի նոյնացնէ գիշերն ու ցերեկը:
Անտառներու հսկայ երկինքին տակ
Ան պիտի չաւննայ լեռներ
Եւ ոչ իսկ ձորակ մը:

Աշխարհի բոլոր տուներէն
Պիտի մնայ պատշգամ մը միայն,
Եւ մարդկային տիեզերքէն՝
Առանց ձեղունի տխրութիւն մը:

Անտառին եզած վայրէն
Պիտի բարձրանայ թռչունի երգ մը,
Որուն տեղը ա՛յ ո՛ք պիտի գողտ,
Ո՛չ մախրոնորէ, ո՛չ ալ սիրէ,
Բացի Աստուծմէ, որ գայն մտիկ ընելով
Պիտի ըսէ՝ «Եկեա՛նիկ մըն է»:

ՄՈՌԱՅԿՈՏ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Բայց այսֆան մտացումով՝ ինչպե՞ս ստեղծել վարդ մը :
Այսֆան մեկնումներով՝ ինչպե՞ս կազմել վերադարձ մը :
Փախչող հազար թռչուններէն մէկ հատ իսկ այիտի չթռաի
Եւ այսֆան մթուփին չի կրնար կեղծել ցերեկը :

Լսէ՛. ինձի մտեցումը այդ խեղճ այտը ,
Առանց վախի արձակէ սրտիդ թծւերը
Եւ թող որ շուփին մէջ հեծէ մեր յիշողութիւնը ,
Մեզի վերադարձնելով գործօն գոյներու աշխարհը :

Կազմիմ կը վերածուի ծառի մը , եւ շուփերը՝ դաշտի .
Եւ անա այդ լինը մեր բացուած աչքերուն տարիւ ,
Թո՛ղ մինչեւ հորիզոն երկրագունտը յիշէ ,
Պի թո՛ղ վերածնի՛՝ անկէ վտարուածներուն համար :

Յիշողութի՛ւն՝ մո՛ւթ քոյր , գոթ կը տեսնեմ դէմս ,
Այնքան՝ քրքան կ'արտօնէ անհետացող պատկեր մը :



ԱՆՇԱՆՈՒԹ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Քեզի համար կը ծնի ձուկ մը , որ կը սկսի դառնալ
Անմիջապէս խորունկ ալիքի մը մթութեան մէջ ,
Քեզի համար կը ծնի աստղ մը , վերը , գլխուդ վրայ ,
Եւ կը փորձէ երգել , բայց չի կրնար ընել աւելիմ ,
Քան գիշերային իր քոյրերը՝ համր աստղերը :

Քեզի համար կը ծնի թռչուն մը հասուն տարիքով ,
Քոչչուել վրայ , եւ կը պահէ իր անցեալը սրտին մէջ ,
Որովհետեւ գայն պատմելու համար ունի իր ճիշը միայն :
Կր թռչի անտառներուն վրայ , կ'ընտրէ ճիւղ մը
Եւ կը թռչի անոր վրայ . կարծէ՛ք միւսներուն պէս է :

Քեզի համար կը ծնի քարեկամ մը եւ կը սկսի ինք փնտռել ,
Ան այիտի չճանչնայ քու անունդ եւ ո՛չ ալ աչքերդ ,
Բայց պէտք է որ ան յուզուի ուրիշներուն պէս
Եւ սրտին մէջ ստեղծէ տարօրինակ բարախումներ ,
Որ այիտի գան այն օրերէն , գաբս չէ ապրած :

Եւ դո՛ւմ , ի՞նչ կ'ընես , ո՛վ խռովայոյց դէմք ,
Ազգուած այդ անցորդներէն , անասուններէն , թռչուններէն ,
Դո՛ւմ՝ որ կը մտախոզուիս , դո՛ւմ՝ որ լարեր կը սպասես :
«Եթէ օր մը համդիպիմ իմ հետաւոր քարեկամներէս մէկուն ,
Պիտի ճանչնա՞մ գինի՛՝ պատճառած վիշտիս համար» :

Ներդառութի՛ւն ձեզի համար , ներդառութի՛ւն անոնց համար ,
Լուսքեան համար եւ անխոհեմ բռնորուն համար ,
Անծանօթ շրթումքներէն արտասանուած նախազատութիւններուն համար ,
Որոնք ինք կը հարուածեն հեռուէն , կորուած գնդակներու պէս
Եւ ներդառութի՛ւն այն ճակատներուն համար , որոնք մտացկոտ կը թուին :

Փիէն-ՌՂՎԵՐՏԻ (1889-1960)

Երբ 1924ին լոյս տեսաւ գերիրապաշտ առաջին մամիֆիստը, Անտոէ Պրըթոնի շուրջ խմբուած երիտասարդ բանաստեղծները Փիէն Ռըվերտին հռչակեցին ապրող մեծագոյն բանաստեղծը, թէ եւ տն իր գործօն մասնակցութիւնը չընդունէր բանաստեղծական այդ շարժումին:

Փիէն Ռըվերտի ձեռք է հարուային Գրանտա, Նարպոն քաղաքը: Եւտասով իր մէջ կը զգայ բանաստեղծական կոչումը ու կը մեկնի Փարիզ, ուր կը տիրէր գրական ու գեղարուեստական երունի կեանք մը:

Մոնմարթրի բարձունքներուն վրայ կը հանդիպի գրական ավան կարտ շրջանակներու, բայց խորքին մէջ Ռըվերտի կը նախընտրէ իր սենեակին առանձնութիւնը: 1927ին, մզուած կրօնական պահանջքէ մը՝ կը քաշուի Սուլեմի հռչակաւոր վանքը, ուր կը մնայ ժամանակ մը:

Անկէ ետք կեանքը կը նոյնանայ գործին հետ: Կը մեռնի Փարիզ, 1960ին:

Փիէն Ռըվերտի բանաստեղծական հատորներէն յիշենք՝ «Արձակ բանաստեղծութիւններ» (1915), «Ջուտան յուսամուտ» (1916), «Քննացած կիտառ» (1919), «Նկարուած աստղեր» (1921), «Մեծ բնութիւն» (1926), «Հովուի ազգիւրները» (1929), «Յամախ» (1945), «Երգ մեռելներու համար» (1948):

Ռըվերտի կ'երգէ մարդ արարածին առանձնութիւնը տիեզերքին մէջ: Բանաստեղծութիւնը իրեն համար միջոց մըն է՝ մաքրագործելու համար իր անձը եւ զինք շրջապատող աշխարհը: Կ'ուզէ ձերբազատուիլ բնազանցական երկշտութիւնէն եւ գրահոռի մաքրութեամբ եւ առանձնութեամբ:

«Արուեստը, — կ'ըսէ, — կը փնտռէ մտանաւոր իրականութիւն մը. եթէ հասնի, կը նայնանայ անոր, այսինքն՝ ժամանակին, եւ կը դառնայ յաւիտեանակամ:

«Բանաստեղծը պէտք է խուսափի ենթակայական իրականութենէն, որ կրնայ վաղուան անիրականութիւնը դառնայ:

«Բանաստեղծին համար կարեւորը յստակօրէն արտայայտիլն է իր ներաշխարհին մէջ գտնուող անծանօթը, գազանիքը, որ իր միակ սեփականութիւնը եւ միակ եարանութիւնն է»:

ԳՈՐՈՎ

Միտաւ կը սրբփէ իր թելերով միայն,
Եւ եւ բանտս նայն հեռաւորութեան վրայ ենք:
Հարիզանին ետեւը կորսուած, ո՛վ բարեկամներս,
Զեր թախում կեանքը չէ որ կ'ունկնդրեմ:
Կայ երկնակամարի ծալքերուն տակ փաթթուած ժամանակը,
Եւ կան անցեալի աննշմար յիշատակները:
Կը բաւէ, որ բարեկամս դէպի ձեզ սուրացող հովը,
Որ պիտի շոյէ ձեր դէմքերը:
Գոցելի դուռը իրիկուան մըմուտքներուն առջեւ,

Եւ քննուայ անձրեւին տակ, որ կը խեղդէ միջոցը,
 Առանց մտածելու մեկնումին,
 Առանց երբեք գիրար տեսնելու՝
 Բարեկամներ, բանտուած օտոռոյցին մէջ,
 Սիրոյս ցօլերը, որոնք կը սահին ճայլերուն տակ,
 Պամածռուփուններ արեւի այլերուն մէջ, որոնք կը մարին
 Անպերու աւելի յատակ վարագոյրին ետեւը:
 Ճակատագիրս շողուած վախերով եւ սուտերով,
 Այն բոլորը, զորս մուսայ այգաբացի յոյսին մէջ,
 Այն՝ ինչ որ յանձնեցի իմ ձեռքերուս խոհեմութեան,
 Հազիւ կառուցուած աւ խորտակուած երազներ,
 Անսկիզբ ծրագիրներու գեղեցկագոյն տերակները,
 Որոնք կը տասանորդեն մեզ ժամանակի այիճներուն տակ:
 Անք քուսներու երկայնքին ցցուած գլուխներ
 Գինովցած են բաց հողերու բոյրերով,
 Ջապուած հավաւն եռանդին տակ...
 Չունիմ բաւական լոյս,
 Բաւական մօրթ, բաւական արիւն.
 Մահը կը քերէ ճակատս
 Եւ նոյն նիւթը
 Կը ծանրանայ քաջութեանս շուրջ, իրիկուան մօտ,
 Բայց զարթօնքը աւելի պայծառ էր միշտ իր պատրանքներուն
 Բոցին մէջ:



Վ Ե Բ Ա Յ Ա Մ Մ Ա Ր Կ Ի Մ Ը

Գիշերը, մշուշին եւ անձրեւին մէջէն, ան կը պտըտցնէ իր տանի տուռե-
 րը եւ այն բաները, որոնք դառնացուցած են զինք:
 Առաջին հանդիպումին կը դադայ — քիւր ապաստանի յուսահատու-
 թեանէն:
 Ամբոխ մը կը պլտայ հավաւն մէջ, որ կը շարչարէ ճիւղերը, եւ եր-
 կինքին Տէրը իրեն կը հետեւի սարսափելի նայաւածքով մը:
 Անուամատախտակ մը կը ճանչէ՝ — վախը: Դուռ մը կը շարժի եւ վե-
 րի փեղկը կը շաչէ պատին դէմ. կը վազէ, եւ այն քերերը, որոնք կը տա-
 նէին սեւ հրեշտակը, կը լքեն զինք:
 Եւ յետոյ, անվերջ փապուղիներու՝ գիշերուան ամայացած դաշտե-
 բու, սեւ սահմաններու մէջ, որոնք կը քախի միտքը, անսկնկալ ճայլներ
 կ'անցնին միջնարմերը, անկայուն գազափարները կը դանդաղեն, մահուան
 կասկածելի գանգերը կը զօղանքեն:

ՓԱԹՐԻՍ ՏԸ ԼԱ ԹՈՒՐ ՏԻՒ ՓԷՆ

Փաթրիս աբ լա Թուր աիւ Փէն ծնած է Փարիզ, 1911ին: Ինչպէս ցոյց կու տայ անուանը, ան զաւակն է Հին եւ ազնուական ընտանիքի մը, որուն անունը կը կորսուի անցեալի մշտնջերուն մէջ: Երկրորդական ուսումը Հապիւ աւարտած՝ Փաթրիս կը մեկնի Սուրանիւ Նաւանգի պապենական դղեակը եւ կ'ապրի Հոն, բնութեան խաղաղ միջավայրին մէջ:

Հաղուազէպ այցելութիւններ կու տայ իր բարեկամներուն կամ Հրատարակիչներուն՝ գիրքի մը Հրատարակութեան տոթիւ: Այս մեկուսացած կեանքը ունեցած է իր անդրադարձները բանաստեղծին գրականութեան եւ ներշնչումին վրայ, ա՛յն իմաստով, որ ան գրեթէ չէ ազդուած ժամանակակից գեղարուեստական յեղաշրջումներէն եւ շարժումներէն:

Մանկութեան տարիները Հապիւ բուրած՝ Փաթրիս կը դառնայ Ծառոթ անուն մը շնորհիւ Միւփէրփիէլի, որ չի խնայեր իր քաջալերանքները այս խոստմտալից պատանիին: Ան պատերազմը տեսաւ պատերազմական գերիի մը ճամբարի վշաթելերէն:

Հաղիւ մերտադարձած ազատ կեանքին, ան դարձեալ կը քաշուի Սուրանիւ Նաւանգի իր խաղաղ դղեակը եւ բնութեան ու անհունին դէմ յանդիման կը նուիրուի բանաստեղծութեան: «Գիտցի՛ր որ, — կը գրէր բարեկամի մը, — կը քնակիմ կզգի մը, կզգի մը ա՛յնքան խորերդաւոր, որ օտարականները կ'անգիտանան անոր գոյութիւնը»:

Փաթրիս աբ լա Թուր աիւ Փէն մշտն է իր արագորութեան մէջ, թէեւ իր Հատորներուն ծաւալը բաւական պատկանելի եղած է:

Իր գործերէն յիշե՛ք՝ «Սեպտեմբրի մանուկները» (1931), «Ուրախութեան որոնումը» (1933), «Մաղմուտներ» (1945), «Մեծախաղ» (1946), «Բանաստեղծութեան գիրքը» (1948), «Նրկորդ խաղը» (1959), «Վերջալույսի փոքրիկ քաղաք» (1963):

Փաթրիս տիեզերքը կը դիտէ քրիստոնեայի աչքերով: Ան մեզ կը Հրատարակի տիեզերական թատերգութեան մը, որ ոչ մէկ կապ ունի այն աշխարհին հետ, ուր կ'ապրինք:

«Եթէ տիեզերքը պտտակտում է, — կ'ըսէ բանաստեղծը, — այս կացութեամ միակ պատասխանատուն մարդն է, որ ինքզինքը կը գերազանց միւսներէն եւ կ'ուզէ ըլլալ միակ դիմապատարը»:

Բանաստեղծը գիտէ սակայն, որ մարդը պէտք է գերակատար ըլլայ աշխարհին առջեւ, իսկ երկրորդ Հանդրուանին՝ իր մէրքը ցուցադրէ Աստուծոյ առջեւ: Մարդը իր կատարելագործութիւնը կը գտնէ այն ատեն, երբ կարենայ լեզու գտնել ինք իրեն, աշխարհին եւ Աստուծոյ հետ:

Այդ երեք Հանդրուանով ճամբան կը գտնուի միայն բանաստեղծին կողմէ, որ գիտէ վերլուծել աշխարհի խորհրդանշանները եւ մուտք գործել երեւոյթներէն անդին՝ մինչեւ անգնականին գաղտնիքները:

Մարդը գերասան մըն է, իսկ փիլեւին թեման՝ իր փրկութիւնը:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Բալար այն երկիրները, որոնք առասպել չունին,
Դատապարտուած են մեռնելու ցուրտէն:

Հոգիները հեռու, կը տարածուին ամայքներ
Եսափրութեամ մեռած արեւին տակ,

Այգաբացին՝ ճախնախուտներու քմբիրէն
 Կը բարձրանամ շաւանդազի եսկայ գանգուածներ,
 Զորս բանաստեղծները կը գործածեն,
 Ստեղծելու համար հոգեկամ անորոշութիւնը եւ վախը:

Պէտք է շնչել, երբ անօմբ բարձրանան
 եւ բմբաշխնել այդ անծանօթ սարսուռը,
 Զոր կարելի է գգալ երբեմն երազներու մէջ,
 Ընդհնամարտած դրախտներու մէջ:
 Միջակները միայն, ստրկացածները
 Պիտի չկարենան հասկնալ անոր դառնութիւնը,
 Անոնք՝ կարտուած մշուշին մէջ՝ չեն լսեր
 Հալածուած թռչուններուն վայրագ ճիչը...

Դո՛ւն՝ սակայն պիտի գիտնես, որ ցուրտը չէ
 Երևունդ տուօզը այսպիսի ճիչի մը, որ այս ժամանակ
 Դուրս գործալի է, քան քու սարսուռը:
 Դուք գիտես ներքին չերմաութիւնները,
 Այն ըզձանձները, որոնք կ'այրեն մինչեւ գալարում...
 եւ պիտի ըսես, որ անհնգի այս ճիչը
 Կամչն է գագանի մը, որ կ'ուզէ բզկտել...



ՀՕՐՄ ՕՐԱՏԵՏՐԻՆ ՎՐԱՅ

Այստեղէն է, որ պէտք էր անցնիլ դուռը, որովհետեւ անկէտ գոցուած էր: Ուզեցի՞նք խորտակել գայն, բայց անհկեա պաշտպանուած էր շատ մը արգելիներով: Փորձեցի՞նք անցնիլ անոր վրայէն, ծանրութիւնը յիշեցուց, որ հոգին ազատ չէր:

Մտադրեցի՞նք ակամել գայն. հսկայ գետեր կը հոսէին անոր տակէն. բայց այդ գետերուն վրայ կեանքը հակառակ էր լռսին:

Կարելի չէ յառաջանալ դուրսէն. միայն ներսինը կրնայ ծակել երկաթէ կամ խիտ միսէ դուռը եւ ինքզինքը կը գտնէ միւս կողմը: Ես՝ իմ ներքին անձին մեղսակիցը, կը ձուլուեմ մարմինս եւ ձայնս այս ապուր լուսեթեան վրայ, զոր կարելի չէ դադրեցնել: Ես՝ որ պիտի չուզէի թռչունները վերածել մտքերու, այլ մտքերը վերածել շահէններու եւ երաշտահաւերու:

Ցերեկի չվերածելու համար գիշերը, մէկ կողմ ձգեմք արեւին տաղուկալի յիշատակը:

Ո՞վ ըսաւ, որ ես կը պատկանիմ ցերեկային ցեղի մը, ո՞վ ըսաւ, որ ես տւելի մօտ եմ ճայերու, քան բուսակներու:

Մարտն են այն հրաբուխները, որոնք վարդագոյն կզգին երբ ձուլուցնուին ծովուն վրայ. պէտք է ռաբիշներ ստեղծուին աչքերուս ցնցեմիին վրայ:

Սրբ անոնք ծանրաբեռնուին մթութեամբ այն ատեն պիտի կատարուին խաւտացուած գործողութիւնները:

Լուսինը փոքրամալու վրայ է. երբեմն դէպի ձմեռը այնքան բնակաւնութեամբ՝ որքան դէպի հին գարունները,

Հասնելու համար ծովու բոցավառումին:



Զիս մի՛ լիքեր, և վ՛ մարդկային հայր, միջաստղային անջրպետներու գիշերին,
 'իսև գիս հեռու պահեցիր զիրերու եւ քաղաքներու մթնալուրտէն, շեմոգի-
 սանալու համար յուսահատութիւնս,
 եւ հիմա կը հրամայես, որ կառուցանեմ ամբողջ ժամանակովս,
 կարճատեւ աստղեր վառողներու եւ մութ մշտնադիմեր ձիւղարողներու մէջ,
 Պատասխան մը մարդէն Աստուծոյ՝ քսաներորդ հարիւրամեակին համար,
 Խաւարին խոստացուած լոյսին տաքիւ:



ՍԱՂՄՈՍ ԺԶ.

Տէ՛ր, կան արարածներ, որոնք խաւարի կ'այլափոխեն արարչու-
 քիւնը, որոնք կը հիւսն չարին գովէր:

Անոնք երջանկութիւն կը զգան՝ կասկածներ արթնցնելով եւ փնացնե-
 լով յայտը — անոնք յաւակնութիւն ունին կարգ մը գեղեցկութիւններու, ո-
 րոնք ահաբիլ են:

Անոնք ունին անբերրի բարձրամտակներու իմաստութիւնը. մարդ-
 կային ամբողջ սերունդներ տան դարձուցիմ մեծութիւնը:

Անոնք ազնուութիւնը կը շիտքեն իշխանական յուսահատութեան հետ,
 եւ ճշմարտութիւնը՝ իրենց փորձիչներուն փորձարկութեան մէջ:

Կարծէք իմաստութիւնը կայանար շեղումներու ճանաչման մէջ: Կար-
 ծէք դատելու համար անոնք չափանիշ կը գործածեն ունակութիւնը:

Եւ կը դժուարանամ ներում ինդրելու անոնց համար: Անոնք աւելի
 լաւ են տեսնեն զիշերը, քան ցերեկը, եւ աւելի դիւրաւ կը գտնեն իրենց ճամ-
 բան խաւարին մէջ:

Գիշեր գիշերէ ետք, կը հասնին մինչեւ դժոխք, որ խաւարին անշարժ
 մէկ մասն է:

Փիլիթի ԺԱՆ ԺՈՒՎ

«Իժմախոս փրանսայի մեծագոյն բանաստեղծը» կ'անուանէ գայն Ժիւլ
 Միւփէրվիէլ: Փիլէո Ժան Ժուվի Համար այդ դժբախտութիւնը ունի խորունկ
 իմաստ մը, որ կը կազմէ իր ներշնչումին ենթահողը:

Փիլէո Ժան Ժուվ ծնած է Հիւսիսային Ֆրանսայի Արբաս քաղաքը: Եր-
 կար տարիներ՝ ան ունեցած է վատ առողջութիւն մը եւ իր միտքարութիւնը
 դուռն է երաժշտութեան մէջ: 1909ին կը հաստատուի Փարիզ, ուր կը հիմնէ
 գրական պարբերաթերթ մը: Կը բարեկամանայ Ռոմէն Ռոլանի Հետ եւ կ'աշ-
 ցելէ Իտալիա, Աւստրիա եւ Զուիցերիա, ուր կ'ապաստանի Ֆրանսայի դը-
 րաւումէն ետք:

Գրականութեան մէջ մուտք կը գործէ վէպով, բայց Համբաւի կը տի-
 բանայ 1933ին միայն, երբ կը հրատարակէ «Արիւն քրտինէ» բանաստեղծա-
 կան հատորը: Պատերազմը առիթ կը դառնայ, որ ան աւելի մօտէն զգայ
 մարդկային ողբերգութիւնը:

Փիլէո Ժան Ժուվի բանաստեղծական զիխաւոր երկերն են՝ «Կորսուած
 դրախտը» (1929), «Հարսանիք» (1931), «Արիւն քրտինէ» (1933), «Նրկմա-

յին միւր» (1937), «Սուրբերու գիշերուամ գաւիթը» (1941), «Փռոճ» (1942), «Փարիզի կոյսը» (1944), «Էնգու» (1952), «Քնարերգական» (1956), «Մե- լոտրամ» (1957), «Աղջամաղջ» (1965):

Փիլէս ժան ժուվ առանձնութեան եւ անդիջողութեան բանաստեղծն է եւ անոր ներշնչումն ու տաղանդը ունին Ալեն-ձոն Փերսի արուեստին հպարտութիւնն ու վեհութիւնը:

Սկզբնական շրջանին, ժուվ հետեւած է Վերնաբնի եւ Մեթերլինկի բայելուսն: 1924ին, սակայն, կը դիմէ ուրիշ ազգիւրներու եւ կ'որոշէ պեղել «նեկաշխարհը այդ սարսափելի արարածին, որ յամառութեամբ դուրս եկած է սեւ կաւէն եւ արհեստ արգանդէն»:

Բանաստեղծին գլխաւոր քեման կը բխի բնագոյնի ուժերու, սեռոյն մասնաւոր մղումի եւ հողեկան պահանջներու յաւիտենական պայքարէն: Այս պայքարը պիտի տեւէ ա'յնքան, որքան մարդկութիւնը, եւ անօգուտ է դարձան ժը առաջարկել այդ տարերային բախումներուն: Բանաստեղծին սոսաքելութիւնը պէտք է վկայ ըլլայ եւ մարգարէանայ անխուսափելի աղէտը:

Եւ որովհետեւ Փիլէս ժան ժուվի ներշնչումը կը բխի քրիստոնէական ազգիւրներէն, աշխարհի պարսպութիւնը լեցնելու համար՝ ան կը դիմէ աստուածաշնչական պատկերներու եւ իրարու կը հակադրէ Մահը եւ Յարութիւնը, Ահոբայիփսի ասպետները, Քրիստոսը եւ Նեոը, Խաւար Գիշերը եւ Գիտակցութիւնը, որուն կու տայ Սէր անունը: Բնութեան մէջ երեւան կը հանէ խորհրդանշաններ. — Մահ, Փոթորիկ, Արիւն եւ Քրտինք:

ժուվ դիւրամասշտի բանաստեղծ ժը չէ, բայց ան եղած է ամբողջ օրունդի ժը առաջնորդը՝ անծանօթի փապուղինէն ներս:

ԼԻՍՊԷ

Ղամուսիւններ մեզ մայրեցուցին մանկութեան օրերուն,
Արդեօք հոյն արիւնէ՞ն ծնած էինք:
Հրաշքներ պատահեցան եւ մե՞ք վահիցանք անոցմէ,
Կարմիր արիւնէ եւ արցունքէ վերմակներուն մօտ:

Նայմ արիւմէն էինք, երբ հանգիպեցայ խարսեաշ մագերուդ,
Նայմ արգունքը լացած էինք վանդակներու մէջ
Եւ գաղտնի սենեակներուն մէջ, ի՞նչ զաւարտութիւններ
Մեզ մերկացուցին, ա'յնքան՝ որքան մեր մտքերը:

Ո՞վ մահ, կը յսմ տարօրինակ ճայներ,
Ո՞վ կեանքի եւ քիչ մը շէկ, ծռած ազդրով,
Կեանքանի աշքերդ ինձի կ'ըսեն (կարմիր քաւիչ)
Բամ մը, որ մոյճիակ համեարները չեն կրնար երեւակայել:

ԻՆՉՈՒ ԳԱՏԵԼ

Ինչո՞ւ դատել գեղեցկութիւնը՝ մաքուր, անմաքուր,
Երբ ան ազատ է եւ կը սխիւ սէրը: Ի՞նչ արժէք ունին
Նոյնացած սեւ բաճակներուն գրօները,
Առհաւակամ խղճահարութեան մը. ուրուական, արեան ճապաղիք:

Այնքան տառապած եմ: Թո՛ղ ամբարտաւամ երիտասարդութիւնդ,
Եթէ քաղցր է, կը յանձնուի եւ կը պատասխանէ,
Օրհնեսա՛յ ըլլայ, եւ թո՛ղ անոր թշուառութիւնը կամ առատածեռութիւնը
Հեռացնէ մահը ձեռքով մը, որ գրեթէ կոյս է:

Խորհրդապաշտական եւ մութ բնութիւնդ, Քոչունդ,
Որ կ'արեամարիէ գէւեհիդ վրայ յամեցող վիշտդ,
Անդունդներու այդ բնակիչը, ջանա՛ որ ամ գեղեցիկ ըլլայ
Հակառակ սարկացումներուն, անխոհե՛մ կոյս:

Ձգէ՛ անոր այն թարմութիւնը, գոր գիտէ կամ կ'անգիտանայ,
Տիեզերական եռանդը, ուրկէ կը ծնի ազբիւրը,
Մեղքի եւ էութեան արարած, գոր կ'սեկեցօ՞ծէ
Լճուած խիզնի մութ ցալ մը:

Երիտասարդութիւնդ թարմ բոյրն է գիշերներուն մէջ,
Վայրագ հոսով եւ սակայն տնայր: Պո՛ւ
Քու բոյրդ կրնար բուսել գառնութիւնը իր հոսով՝
Բացուած եւ առանց ամօթխածութեան մերկայութենէս դարս:

Թեթեւ ստիճիդ, որուն վրայ կը ծանրեանայ առանձին ձեռք մը,
Կը ստիպէ արեւը, որ բռնաբարէ ճակատագրական վարագոյրը,
Եւ ժամանակը, որ զիս կը պահէ անկամք եւ անվազորգայն
Անդամներուդ վրայ՝ յիշողութիւն է եւ երաժշտութիւն:

Սեւ աչքերը մութ լիճեր են, գորս կը յուզէ սէրը,
Մանրանալով կոպերուդ սեւցած ու թեթեւ աստղափերում վրայ,
Ցունական գէւեհի մը կեդրոնը- եւ սիրտը կ'արգահատի,
Որովհետեւ այնքան ծանր ճայտածք մը կը թափէ բնութեանդ վրայ:

Մի՛ կշտամբեր երիտասարդութիւնդ, անբարայակա՞ն բրտութիւն,
Եւ հալածուած քաղցրութիւն եւ զգլխիչ բարութիւն,
Պահէ՛՞ գեղեցկութիւններուդ գանգրահեր գանձը
Բալալին լուսանցներուն գէւ, երկարատեւ մանկութեան:

Որքան կը սիրես սակայն, խորունկ աչքերդ գոցելով,
Ուր կ'ապրի երջանիկ ու մեզական մէջքդ,
Իզակամ ազբիւր, գորհուրելի եւ խորունկ յատակներով,
Ձգէ որ իմ սարիճիս սիրեմ քու առասպելական անասունդ:

Աչքերու մէկ փայլին մէջ,
Այս չէ՞ արդեօք նոյն ինքն յաւիտենականութիւնը:
Այս չէ՞ արդեօք ամբողջութիւնը անտանձ,
Յաւիտենականութիւնը խելայեղօրէն քանկագին:

ԱՆՆԵՏԱՑԱԿ ԱՐԵՒՆԵՐԸ

Անհետացած արեւները յաւիտեանկան բառեր են,
 Որուն կըր մախադասութիւնը ռւնի աշդ ձեւը. վերացում
 Երաժշտական երկրին, կանաչութեամ, ռնկիմ,
 Ամէնէն հագուագիւտ պատշգամին կախուած արեւին,
 Արտավայրին, ուր ցրուած են սառուցային ժայռեր:
 Ռ՛վ հեռուար գեղեցկութիւն, գերագոյն ժամուած երազ
 Այնամային կատաղի խարոյկ մը կը ծելաւորուէր
 Զորերուն մէջ, բանշարեղէններու տակէմ:
 Զառիթափը կը սիրաբանէր շերմութեամ հետ,
 Փայտէ խրճիթները կը շարշարէին լոյսը
 Եւ ազնուութիւնը մեռած էր շագանկի ծառերու վրայ:
 Միկնկուտ ատեն կը զգայինք յոյսիմ կորուստը՝
 Մեր խելագար ըզձանճներուն ձգողութեան պատճառով:

ՓԻՆՈՒ ԷՄՄԱՆՆԻԻԷԼ

Բուն անունով Նոէլ Մաթիէօ՝ Փիէո Էմմանիւէլ, ծնած է Հարաւային Փրանսայի Պիլոն նահանգը, Փիլիպիններու լեռներու ստորոտը: 23 տարեկան էր, երբ պայթեցաւ Համաշխարհային Երկրորդ պատերազմը, որուն Էմմանիւէլ մասնակցեցաւ Նախ իբր զինուոր եւ յետոյ իբր ընդդիմադիր եւ թափախուող: Իր անունը առաջին անգամ երեւցաւ «Պատգամներ» պարբերաթիւթին մէջ, 1940ին, որ կը խմբագրուէր մասանհերու մթնօթեան մէջ:

Փիէո Էմմանիւէլ զրուածան տարիները ապրեցաւ մասունակ սպաննալիքին տակ, բայց չլռեց երբեք: Ան Հանդիսացաւ իր սերունդին Ռեմպոն: Պատերազմէն ետք շարունակեց մնալ Նոյն դիրքին վրայ եւ գէպքերէն ներշնչուելով գրեց յուրանականութեան Համար:

1968ին մուտք գործեց Փրանսական Ակադեմիային ներս:

Փիէո Էմմանիւէլ Հեղինակն է Հետեւեալ Հատորներուն՝ «Եզերներգներ» (1940), «Զայրոյթի օր» (1941), «Բանաստեղծը եւ իր Քրիստոսը» (1945), «Որփէականք» (1947), «Սողում» (1948), «Բարէլ» (1952), «Անտարածագիրք» (1961), «Նար ծնունդը» (1964):

Հատորներուն վերնագիրներէն կարելի է գուշակել Էմմանիւէլի ներշնչումին աղբիւրը: Ինչպէս իր միւս գրչեղբայրները՝ Ժուլ կամ Քէյրուլ, ան գէպքերը կը տեսնէ վերէն, Աւետարանի բարձունքներէն:

Սակայն իր նախնարած թեմաները կը կոչուին հաղորդակցութիւն եւ աւանանութիւն: Իր պատանութեան եւ երիտասարդութեան տարիներուն իսկ Էմմանիւէլ եղած է մենակեաց մը: Այդ օրերուն ան կը գրէր Հետեւեալը. «Առանձնութիւնը մեծ քաջութիւն է, որ մարդ արարածին կու տայ քուական օժ իմօնիրմով զոնանալու համար»:

Սակայն պատերազմի փորձառութիւնը իրեն ցոյց տուաւ, որ անկարելի է մինակ ապրիլ մարդ եղբայրներուն միջեւ: Ժուլի «Արիւն քրտինք» հատորին ընթերցումը իրեն ցոյց տուաւ իրաւ ըսնաստեղծութեան ճամբան:

Իր առաջին աղբերուն մէջ զգայի է Հիւկոյի եւ Ռեմպոյի ազդեցութիւնը, բառերու եւ պատկերներու շաղկապ մը, որ երբեմն կը հասնէ հետադարձութեան:

Մարդ մը կ'իջնէր մահուան գառիթափն ի վար
 Գիշերով, եւ հոգիին անպատմելի օարտուար
 Կը հագորդէր ամբողջ խաւարին հետ
 Վերջալուսային իր քաղցր գիտութիւնը:
 Հին աշխարհին շրջագիծը կը մեռնէր ամտեսանելի այիֆներով
 Եւ անցեալը կ'ընդարմանար գալիֆին մէջ:

Բայց ան միշտ ստփի էր տալաֆարին վրայ՝
 Մութ գառիվարով անխոստովանելի վաղօցի մը մէջ:
 Հոգը միշտ թոյն կարծրութիւնը ունէր ոտքերուն տակ,
 Եւ ստփերը ճոյնֆան անգութ էին հողին հանդէպ:

Այս դուռը, որ անվերջ կ'երթնուէր տարիներէ ի վեր,
 Կին մը կը կանգնի անոր հետը յախտեանս,
 Պնայած, ձեռքերը յօշոտուած ստիմֆներուն վրայ,
 Բզկտուած ամպերու սեւ մացառներէն:
 Անոր մարմինը թափանցիկ է երազին եւ միտքը
 Կը բնակի մեղմ բարձունքներու վրայ: Ան մութ է
 Կամ կապոյտ, նայած տեղորոշեան հեռաւորութեան:

Ո՛չ ոչ գիտէ մերկ օդին գաղտնի վերքը,
 Ո՛չ ալ սիրտը անձկութեան նրկար միջանցֆներու ծայրը,
 Ուրիշ Ուրփէսս մը, անտ՝ հուս գայ:
 Այդ կինը կ'անէանայ
 Անմիջապէս, որ ոտքը կոխէ անոր անտեսանելի ստուերին վրայ:
 Ան կը վերածուի մեռելի մը բերնին, մահուան կանչին...:



Բ Ա Ք Է Լ

Երբ խորշակը կը փչէ Արեւելէն, երբ ժողովուրդները կը փչեն անապատէն,
 Երբ արիւնք կը շաչէ ձողերուն վրայ, վատ է այն մարդը,
 Որ իր նիգակին ծայրը չունի պատառ մը իր արիւնէն:
 Առուարձանը կը գրեհէ մակըթացութեան հետ, քաղաքը կը պարէ նաւակի
 մը պէս.
 Եւ եմ քաղաքը գայրայթէն կշտացած ամպի նմանօր քաղվութեան առջեւէն:
 — Գիտեմ, որ այս ժողովուրդին արիւնը գրչակներուն իբր մելան պիտի
 ծառայէ...

Միշտ ճոյն սուտը, միշտ ճոյն գոհը պատարագուած,
 Այն ապագային, որ պիտի չճանչնայ ուրիշ գոհեր...
 Նայն հռետորդները տարբեր տարագներու տակ
 Ունէ Պատրի մը քահանաները, կամ գալիֆ մարդուն վարդապետները,
 Իրենք իրենց նախընտրած ժողովուրդներուն գոհաբերութիւնը,
 Իրենց ամբարտաւանութեան քիթին միացնելով անոր միտքը,
 Արիւնէ խանձող մը, կոճղին վրայ, իրենց գահին առջեւ:

(Շար. 6 եւ մնացեալը յաջորդ թիւով) Ն. ՉԱՐՈՒՏԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

ՌՈՒՏՈՂՅ ԻԱԶԱՏՐԵԱՆ

Յարութիւն նպաստան, որ ստեղծագործական էջերով ծանօթ է զճազինքի ընթերցողներուն, ուր է նաև շարժանկարային եւ նկարչական մշակոյթի մը: Եւրժանկարային ասպարէզին հայտնի հեղաներն Սերգէյ Փարսեանովի (Քիւ Վ) մասին գրած, ինչպէս նաև նկարչութեան մարզին մէջ Ռուտով Քաշատրեանի յայտնութիւնը աւետարանական կարևորութիւնը քաւարտ շաբաթով մը կ'երաշխուարեն այդ արուեստներուն առնչութեամբ իր ամբարտ ծանօթութիւններուն ստիւտնութիւնը:

Յ. Նպաստան խոստացած է զճազինքի մէջ պարբերաբար ստորագրել նկարչական գրանիկներ՝ Հայաստանի Քէ Սփիւղի ունեւաստաններուն մասին:

Ռուտով Քաշատրեանի նկարչական նկարները մեզ արժանազան էն իր կողմէ եւ լայն կը տեսնեն ստալին սեպտ:

Յօսքը 25 տարուան նկարչական վաստակի մը արժանաներով սնած, բնորոշ առանձնախատկութիւններ դասած ու վարպետացած՝ Հայաստանի ամէնէն ազդանդաւոր նկարիչներէն մէկուն մասին է, — Ռուտով Քաշատրեան:

Ռուտով Քաշատրեանի մօտ հայ նկարչութեան աւանդականին զարգացումը հասած է ժամանակակից մտածելակերպին ու զգացողութեան եւ իր նկարչութիւնը հասցուցած միջազգայինի մակարդակին: Միջազգային՝ ա՛յն իմաստով, որ

իր սեր, խորքը եւ վարպետութիւնը ըլլալով բացարձակապէս հայկական, ըլլալով հարազատ շարունակութիւն մը Հովնաթանեանի ու անոր դպրոցին էնկերիան վարպետութեան, պիտի կարենան հետաքրքրութիւն ստեղծել սեւէ ազդուութեան տէր մարդու մօտ, իրրեւ արուեստի նոր խօսք եւ զգացողութիւն:

Հայ դասականները, որոնք կայմեցին թիֆլիսեան մեր նկարչութեան առանցքը, յանձին Հովնաթանեանի, կարծես կամուրջ մը պէտք է նկատել մանրանկարիչ-



ԳԻՇՈՐ ԵՒ ՅԵՐԵՎ

digitised by A.R.A.R.@



ՀԱՄԲՈՅՐ

ներէն ետք մինչեւ մեր օրերու ժամանակաշրջանը:

Եւրոպան ունեցաւ ճիւղթոն, յետոյ՝ վերածնունդը, յետոյ՝ էնիլը, յետոյ՝ ուժանթիֆները եւ, վերջապէս, նորերը — առանձին փայլով ինքնայատուկ նկարիչներ:

Հայ նկարչութիւնը ունեցաւ մանրանկարչութիւնն ու թիֆլիսը միայն: Մընացեալը, մեր կարծիքով, չի համապատասխաներ քաղաքակիրթ ազգի մը արւեստին իւրայատուկ զարգացման:

Այսօր թերեւս մեր վերածնունդն է.

վերածնունդ, որ կը լրացնէ բաց մնացած շրջանները, կը լեցնէ զանոնք եւ ենթապիտակեցական շրջանցումով մը կը հասցնէ մեր նկարչութիւնը արուեստի այսօրուան արժեւորութեան (norme):

Այս ընթացքին մէջ եւ այս տրամադրութեամբ, մեր նկարչութիւնը վերջին հարիւր տարուան ընթացքին կը հաշուէ քանի մը հայ դէմքեր միայն՝ Հայաստանի մէջ կամ անկէ դուրս (Սուրէնեան, Բաշինջաղեան, Կոմեան, Սարեան, Կորջի, Օրաքեան եւ Քոչար), որոնք հողեկան հարազատ կապ ունին մեր նկարչական

պատմութեան հետ: Ունինք այնքան ազանդաւոր ուրիշ նկարիչներ, վաստակաւոր, բայց անոնք աւարտի են ու կապ չենք տեսնիք անոնց ու մանրանկարիչներուն, անոնց ու Հովնաթանեանին, անոնց ու Կոմիտասին միջև, սրբան աչ անոնց հետաքրքրութեան ու վրձիններուն առար-

կայ եղած ըլլան հայ հողը, լեռն ու եկեղեցին:

Մեր նկարչութիւնը, իր սեական բազմազանութեամբ՝ աչտոք կ'ապրի վերածնունդ մը: Ունի կշռոյթի ընդհանրութիւն մը, որ կը ներդաշնակուի մեր արևեստի պատմութեան մէջ ըլլուր լինած



զագաթներուն հետ՝ մանրանկարիչ ըլլան անոնք, օտար հողի վրայ քրտնած խաչքարի վարպետ, զորզագործ թէ եկեղեցիի գմբէթ կառուցող:

Ուստոյ՞ Քաշապետն այս վերանընունդին կարևորագոյն դէմքերէն է:

Իր Յաքիւր-Աորթը չի սանձանափակ-

ւիր եւ չի շրջանակուիր ընկերվարական կամ զրամատիրական հասկացողութեամբ: Յառաջդիմական կամ անկուճալին պիտակներով:

Իր դէմքերը, ժարդերը, ժայրերն ու որդիները, աչքերն ու աղջիկները, այս կամ այն աչքերն ու ժայրերը չեն, ընկեր-



ՔՐԻՍՏՈՍԻ ՔԼՈՒՆԸ




ԿՆՆԸ

Վարական ժպտացող մայրեր կամ դրամա-
տիկական տխուր աչքեր, այլ պարզապէս
մայրեր, աչքեր ու որովհնէր:

Ոճի այնպիսի՝ նուրբ վարպետութիւն
մը կայ Ռուսոյ՞ Թաշատրեանի գործե-
րուն մէջ, ուր կրնաս ձեռն եւ կնոջ մեծ-

digitised by

A.R.A.R.®



ՔՈՒՉԳ

րուն ու գիծերուն մէջ՝ կերպարի մը անսովորականութիւնները անսեն, որ կապ չունի կնոջ կամ ձիուն հետ: Իսկ կերպարը ինքնին ժարմին չունի, տեսութիւն մըն է, յուզող մթնոլորտ մը, վերացական կապ մը քու եւ գիծերուն միջեւ, որ վերնագիր չունի: Քրիստոսի գլուխին մէջ կրնա անսեն կտոր մը ձի, կտոր մը Քրիստոս, կտոր մը Հայկական բարեպաշտութիւն, կտոր մը Նարեկացի եւ արուեստի վարպետութիւն, որ առեւալ զործը Քրիստոսի գլուխը ըլլալէ կը զազրեցնէ եւ չի թելադրեր նոր վերնագիր: Այն է, ինչ որ կը զգաս ու կը մտածես:

Արդէն մեր նկարչութեան ամէնէն կարեւոր կէտը այն է, որ չունի բովանդակութեան կէտագրութիւն: Գեղեցկութիւն մըն է, որ գիտողին հետ կը օտեղծէ բովանդակութիւն մը: Օրինակ, մանրանկարիչներուն մօտ Աւետարանի Դիպալարը (սիւմէ) կը զազրի անտարանական ըլլալէ եւ իւրաքանչիւր Քրիստոս կ'ունենայ տարբեր ձեւ, տարբեր աչք ու տարբեր իմաստ:

Պաշտօնեանի մօտ կարեւորը մարդկայինն է: Իր գիծերը իրենց մէջ ներդրած են այդ զգացողութիւնը իւրայատուկ ոճով՝ ինչ ալ ներկայացնեն անոնք իբրեւ գծագրութիւն: Վերջին Հալուով՝ արուեստին կը հասնին, երբ գոյններուն ու գիծին շունչ տալ գիտես եւ կենդանութիւն:

ՌուսոյՖ Պաշտօնեանի գիծերուն մէջ ներամփոփ պոռթկում մը կայ, որ ըստ երեւոյթին հանդիսա է եւ գիծերու ներքութեան մէջ վարպետօրէն զսպում: Բայց որ դարձեալ կը յորդի շրջանակէն դուրս, կը վարակէ քեզ եւ գործերը կը դարձնէ յուզումով յագեցած:

Կասկած չկայ, որ անոր նկարչական մտածելակերպը, այսպէս ըսուած՝ մշակոյթով յագեցած է: Այս հանգամանքը շատ յանախ բանագրօսիկ ու շինծու կը դարձնէ տուեալ գործը: Բայց հոս այդպէս չէ, հետեւեալ իմաստով. —

ՆՅՔ գիտենք գործերը շարքերով, խումբ-խումբ, ապա կը անսենք մտածելակերպի ազնուացումը՝ զգացումի ու մտաւորական գիծ մը, որ կ'ընդգրկէ շորս հինգ, երբեմն տասը գործ՝ բովանդակութիւն մը, որ կ'ամբողջանայ քանի մը նրա կարենքու գիրար ամբողջացող, գիրար գերազանցել փորձող ուժով: Հոս է Պաշտօնեանի մտաւորականութիւնը (intellectualité): Մէկ միտքը ստեղծած է քանի մը գործ՝ ենթադրաբար զիբար յրաբացեալ: Ուրեմն, շրջանի մը մտածումները՝ նոյն շրջանի նկարիչներուն մէջ ընդհանուր են կարծես: Ատիկա տպաւորութիւնս է:

Այս իմաստով Պաշտօնեանի մօտ յենք փնտեր մարդու ազատութեան, գեղեցկութեան զգացում եւ այլևայլ ազնիւ ապրումներու գրեւորումներ, այլ պարզապէս կը փնտռենք մարդը, գեղեցիկը, տղիքը եւ կեանքի բազադրաբար եւ անոնց առեւալ շրջանին ըրած վերացական ազդեցութիւնը նկարիչին վրայ:

Ահաւասիկ փունջ մը իր կրափիճներէն: Շարքը (քարի վրայ, 10 տպաքանակով) 10 Հատ է, որոնցմէ միայն եօթն ունիք մեր արամագրութեան տակ: Տասրե միասին դիտած՝ գիպալարի այդքան այլազանութեամբ հանդերձ, կը միամուշուխ իրենց խորքով ու իմաստով ու ատիկա այն պատճառով, որ բոլորը միասին կը ներկայացնեն միեւրու շարք մը, միեւրու վազ մը թերեւ, իսկ առանձին-առանձին՝ մէկը Քրիստոս է, միւսը Ռ. Պաշտօնեանը, միւսը Թոխչի է, միւսը օրն է, գիշերն ու ցերեկը, միւսը իր կիներն է եւ, վերջին Հալուով, ենթադրաբար տակնուկալ եւ զուտ մտաւորական կապ մը կայ կնոջ, իր, Քրիստոսին, օրուան, հոգեկան թոխչիներուն եւ միեւրու պէս վազվզող ամէնօրեայ մարդոց միջեւ...

Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ

Կ Վ Մ Ա Ր Ն Ե Ր

Ա Ն Կ Ա Տ Ա Ր Հ Ա Մ Ա Հ Ա Ի Ա Ք՝

Բ Ա Ր Ո Յ Ա Ի Օ Ս Ն Ե Ր Ո Ի

Ե Ի Մ Ո Լ Ո Ր Ե Ա Լ Մ Տ Ք Ե Ր Ո Ի...

«Սովետական գրականություն» ամսագրի ընթացիկ տարուան Փետրուարի համարին մէջ, «Էջեր Դանիէլ Վարուժանի կենսագրութիւնից» խորագրին տակ՝ Գէորգ Մաղոյեան կը պատմէ 1912էն ետք Պոլսոյ մէջ ապրած հեթանոս քուրմին կեանքը, ծանրանալով յատկապէս ուսուցչական ասպարէզին մէջ անոր ապրած ծանր տագնապներուն վրայ, մենատիրական բաւականին լայն խորձակներու տէր եւ իր հանգամանքը եռանդուն կիրքով մը տեսաբար շահագործած կաթողիկէ համայնքի կաթողիկոս-պատրիարք Քերպեանի մոլեգին հրահրումներով:

Մաղոյեանի այդ յօդուածը կը բովանդակէ այնպիսի՝ շահեկան մանրամասնութիւններ, որոնք ծանօթ չեն լայն զանգուածներուն եւ անպայման նըկատի պէտք է առնուին, երբ հարկ ըլլայ վերակազմել «մրրկավարս ու հրաշուի» քերթողին լրիւ կենսագրութիւնը:

Այս էջին մէջ մեզ առանձնապէս շահագրգռող Վարուժանի անձին եւ ուսուցչական գործունէութեան դէմ սարքուած քուտեան գրոհը չէ այնքան որբան «Հեթանոս երգեր»ուն առիթով պաշտօնագուրկ նոյն կաթողիկոս-պատրիարքին եւ անոր համախոհներով կազմուած տգիտութեան ջոխրին վերաբերումը, որ քայքայիչ կիրքերու հետեւանք մշտութեան ցայտուն նմոյշ մը չէ միայն, այլեւ յայտնութիւններէ ահաբեկող խաւարամիտները բնութագրող վճռական օրինակ մը:

Ահաւասիկ «կաթողիկէ արձագանգ»ի էջերէն դուրս բերուած այդ «հիստորիկ յօդուած»էն քանի մը հատուած յիմարութիւն.

«Հոյս տեսաւ Վարուժանի «Հեթանոս երգեր»ը: «Բիւզանդիան»ը այն ներկայացրեց Հիացական խօսքերով. «Մայրէ ի ծայր ներդաշնակութիւն, շնորհ, գիւտ աւ ճկարագեղ վրձինի մը ամբողջ հրաշալիէք, որոմք կը թովեն, կը յափշտակեն, կը խանդավառեն քոյրը քնքերցողները: «Հեթանոս երգեր»ը մեր քերթողական գրականութեան ամէնէն հզօր արտայայտութիւններէն մին է, եւ տաղանդաւոր հեղինակը ջերմապէս շնորհաւորելի է հայ գրակառութեան նուիրած իր այս թանկագին գանձին համար»:

«Կաթողիկէ արձագանգ»ին դուր չեկաւ, որ հայ գրական հրապարակը ծափ դժափի հարկանեց, փառաբանեց, երկկոյթներ, ասուլիսներ սարքեց ի պատիւ Հեղինակի: Նրան յատկապէս դրզուեց «Մեծմուսլի արշալար» կաթողիկական թերթի յօդուածը, ուր նոյնպէս բարձր գնահատական էր տրուած Վարուժանի գործին: Եւ անա շարաթաթերթի «Իւլաֆեր աւ սկզբունքներ» բաժնուով «Աղէտալի գիրք մը» վերնագրի տակ խմբագիր Թերզիպաշեանը արպեկ իր հայկոյալից յօդուածը, ուր ի միջի այլոց գրում էր. «Աղէտալի գիրք

մըն է, այս, որ վերջերս լայս տեսաւ հայ հրապարակի վրայ: Ո՛հ, հայ հրապարակը, եզրուած գրեթէ միշտ յռոխ տպագրութիւններով, աննկարագիր, աննկարաւե՛ք, շահամոլ, անխիղճ մարդոց ձեռքը մատնուած հայ գրական հրապարակը, այսինքն հայ մանկտիմ՝ յայս ազգի, հայ ընտանիքը, հայ սիրտը, հայ միտքը, հայ ազգը, մատնուած ամբարշտակաւորութեան, կրօնաւոր, վատասերման, անկրօնութեան, անհիտումի, հայ ձեռքերը կը մատնուակեն այդ թուեալից բաժակը, ու ազգասէր կը յորջորջուին... վա՛յ մեզ:

«Ուրեմն այս տեսակ գիրք մը հրատարակուեցաւ վերջերս: Գրքին անունն է «Հանրաստեղծները» (վերնագիրը միտումնաւոր կերպով է աղաւազուած. Գ. Մ.), հեղինակն է Դանիէլ Վարուժան, որ տրտմագին կ'ողբայ իր Աստծուն կորուստը, վերագրելով զայն անպիտան ու անկրօն գիրքերու ընթերցումին:

Խո՞տն գիրքեր, մեծ գիրքեր...
Կ'անհիծեմ բաբունօրէն բուրբիզ...

«Օ՛, ի՞նչ հարկ մար մը անլցնել անիծուած գիրքերուն վրայ, որոնց պատճառով կուլայ... Ինչո՞ւ այդ համայնացիներ գիրքերու թիւն անլցնել եւ իր մահը սփռել համաճարակ անփոյթ անգթութեամբ...»:

«Այդ գիրքը ընդհանուր բարոյականի երեսը նետուած հեզմութեան ասի մը ցեխ է. իւր հիմք կտալով անհաստեղծութեան ու յուսահատութեան գաշտիմ վրայ բուսած թուեալից եւ հրապարիչ ծագիկներ կը պարունակէ. ծագիկներ՝ մաշակաւոր տպագրութեամբ, հուժկու բանաստեղծութեան, կանխամտածուած պէտքիտեանց, զանազանեալ ոճի, հմայիչ երանգներու, չափաւորութեան, արուեստական այն ամէն բանի, որ կարող է յանկուցանել անգոյշ երիտասարդութիւնը, գրեցնել, մեղցնել. ոսկեգօծ եւ գոհորագար դաշայն մըն է: Քանի մը արժէքաւոր կտորներու քով՝ լիտարուս ցանուած են այնպիսի եւ այնքան յայտնի անբարոյական, ետին աստիճանի ամբարշտակաւ կտորներ, որ մեզ չպիտի կարենամք ընել մէջքերումներ:

«...Անշուշտ մարդասպան է այդպիսի հեղինակ մը, եւ իր ընթերցողն, ու մտնուած իր գասակը այնպիսի հեղինակի մը յանձնող հայր մը՝ անխիղճ եւ ամենակայր մարդասպաններ:

«Ազէտ մըն է, ռնիր մըն է այս գիրքը»:

Մեծ գործերը անբարոյականութեամբ պիտակող, կանոնք «թունալից բաժակ», «աղէտ» համարող ու մեծ գործեր արարչագործող մեծերը խաչակրութեան ենթարկող աղէտահար արարածները կարմանալիօրէն միշտ անպակաս եղած են կենսաբն մէջ եւ, աւելի՛ կարմանալի երեսոյթ, յիմարութեան պատճառներէ բողոքովին զուրկ մարդերն ալ յաճախ մաս կապած են նոր ընազաւաններ նուաճած հականերուն դէմ սարքած զաճաճներու զրոհին:

Յարգանք պարտադրող հայրենի մտաւորականներէն Հելտոյ Ռշտունի, Սիամանթոյն Նուիրած իր ծաւալուն մենագրութեան մէջ, անդրադառնալով այդ հիւանդութեան՝ կը գրէ.

«Հայ բանաստեղծների նորագոյն սերունդը, մասնաւորապէս մեծերը՝ Սիամանթոն, Վարուժանը, Մեծարենցը, Տէրեանը, Քէջէհանը, Ժողովրդի առաւել առաջադիմական մասի, քաղաքաբնակ երիտասարդութեան, նոր մշակութականութեան, ուսանողութեան արածադրութիւնների արտայայտիչներէն: Նրանց նորարական շարժումը, իբրեւ գրական զարգացման բարձր արտայայտութիւն, ըմբռնում էին ոչ բոլորը: Նրանց հասելից դժուարութեամբ էր Հասնում յատկապէս հին արժէքների չափանիշով կազմաւորուած սերնդի»

ճաշակը: Այդ է պատճառը, որ նրանց ժուտքը գրականութիւն շատերի կողմից բնդունուել է սուիմնորոմ: Ժխտական վերաբերմունքի հանդիպել են բոլորն էլ: Անհասկանալի, անբնական եւ ծիծաղելի են թուացել Մեծարեցի եւ Տէրեանի բանաստեղծական մտածողութեան արտասովոր նորութիւնն ու ձևւոր: Այ մի արժէք չեն գտել Մեծարեցի «Միաժամ»-ի եւ «Նոր տաղեր»-ի մէջ: «Ռեկտոր երգեր» են կոչել Տէրեանի սքանչելի գործերը: Վարուժանի «Ընթացումս Երգեր»-ի մէջ տեսել են միայն «կիրք եւ սուփանք», նրա «Կապուց»-ը բնութագրել են իբրեւ «թանձրապաշտութիւն», «բերթողին եւ նրա հետեւորդներին»՝ «հեթանոսական գանձ երգիչներ»:

«Հեթանոս երգեր»ուն մէջ միայն «կիրք ու տոփանք» եւ նման թանձրութիւններ տեսած նրբամիտ բարոյախօսներէն ոմանք ուղղակիօրէն ճանչնալու համար՝ արտագրենք նաեւ Վարուժանի մէկ կենսագրին՝ Դերենիկ Ճիպլեճեանի հետեւեալ էջը. —

«Եր քանի մը իրապաշտ էջերը չհասկցուեցան: Մարդիկ բառերը սկզբան մեկնել՝ փոխանակ անոնց ետին պահուած գեղեցկութիւնը փնտռելու: «Բեկարութեան» մէջ հրատարակուած իր «Ո՛ր լալագ է ն, որ յետոյ զԸնթացումս երգեր ուն մաս կաղմեց, — հրաւիրեց մայնասունը:

«Շիրմանգագէ Թիֆլիսի շնորհգոն»ին մէջ տպուած յօդուածով մը պոռնկագիր անուանեց այդ գեղեցիկ քերթուածը ստորագրողը:

«Վարուժան շատ ազդուած էր այդ առդերէն: Այ այնքան անոր համար, որ տաղանդաւոր վիպասան մը չէր կրցեր ճանչնալ այդ իրապաշտ քերթուածին մէջ պահուած գեղեցկութիւնը, այլ որովհետեւ արհամարհանք մը կը գտնէր հայ գրողի մը կողմէ ուրիշ գրողի մը հանդէպ: Ու արդարեւ, Շիրմանգագէ իր յօդուածին մէջ «Մի ոմն Դանիէլ Վարուժան» բառերով սուրբեր էր «Ո՛ր լալագ է» չեղինակը, իբրեւ թէ Վարուժան երէկուան սկսնակը ըլլար, բոլորովին անծանօթ մը, կամ ամէն արժէքէ զուրկ:

«Բացատրեցին իրեն կովկասը ճանչցողները, թէ սահմանէն անդին առհասարակ ծանօթ չեն արեւմտահայ գրականութեան ու ղէճքերուն, թէ՛ անոնց համար Պարոնեանը միայն կայ իբրեւ արեւմտահայ գրագէտ, թէ՛ Շիրմանգագէն ընդհանրապէս չի կարողար ուրիշ հայ չեղինակներ:

« — Մե՛ղք, — կ'ըսէր Վարուժան, — մենք իրենց ամէնէն աննշան գրողն իսկ գիտենք:

«Ուրիշ անգամ մը, «Իօսք խառնողներ» լուր բերին իրեն, թէ Աւետիք Իսահակեանն ալ պոռնկագրութիւն կը նկատէ իր իրապաշտ քերթուածներէն մէկ բանին: Աւելի ծանր եկաւ իրեն այդ վէրքը, որովհետեւ բանաստեղծէ մը կու գար: Թաճախ կ'ակնարկէր այդ վէրքին»:

«Հեթանոս երգեր»ուն դէմ խոժոռած վերի խոժոռները սովորական անկեր չեն. հանրային կարծիքին մէջ կը գտնուին մտաւորական մակարդակի մը վրայ, կաթողիկոս-պատրիարք եղած են, գրագէտ, բանաստեղծ, բայց որ չկրցան ընկալել իրենց տիրացուական բարոյականը վիրատրոյ բառերով մարդկայնական խորունկ թրթիւնը յայտնագործած սրբակենցաղ բանաստեղծին ոգին, ու ատիկա արմատական այն պատճառով անշուշտ, որ անոնց համար «Սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ» հոլովելու սովորոյթին մէջ սահմանափակուած էր կեանքին իմացումը, արուեստը՝ «Պատուի համար»-ի մակարդակով նախնական բարոյախօսութեան մը հետ շփոթուած խեղճուկակ հասկացողութիւն էր, բանաստեղծութիւնը՝ «Սիրեցի, եարս տարան»-ի պէս ողբալի յղացում-հեռացում մը:

Ասոնք՝ այսպէս:

Ինչպէ՛ս զնահատել հապա յորովայնէ բանաստեղծ եւ նրբին արուեստագետ Վահան Տէրեանի ելոյթը, որ առաւելաբար Վարուժանը նկատի ունենալով, կը յատարարէր.

«Քումանենանի մի «Փարվանան» ես չեմ փոխի պոլսահայ յանկարծօրէն հեթանոսացած պոետների արտադրութեանց հետ»:

Այս առնչութեամբ ատլիի սպչեցուցիչը Չարենցի հետեւեալ կտանցանքն է.

«...Ռուսահայ այս վարժապետ ինտելիկենտի արեակից եզրայրը Պոլսում այն ժամանակ Հրատարակում էր «Նաւասարդ»ը, որի զեկաւարները, նայիրեան վարժապետազգեստ շուրժեր ու ասպետներ, զրէի մի մոզական շարժումով վերադարձնել էին մզտում «Հեթանոսական ժամանակները», այսինքն՝ ճորտատիրական կարգերում փթթած ցոփութիւնը, շուսյաութիւնը եւ այլասերում հանձոյթը: Նրանք այս բոլորը, ի հարկէ, թողարկում էին եւրոպական սիմֆոնիզից ու զեկազանակց փոխ վերցրած զանազան սնամէջ «խորհուրդներով» ու «բնաստներով» եւ նայիրեան ազգային արեանակից վերցրած միջերով ու առասպելներով: Նրանք քնարերգում էին «Հանձոյթը, ուժը եւ տառապանքը»: — Գանացի հոյանի մարմիններ եւ սազմական կորով: «Հայ ցեղի սազմական կորովը», որ իբր շաւի է դարերում՝ հզօր ու անյաղթ: Նրանք երազում էին վերադարձած տեսնել հայկական Ֆեոդալական միջնադարը՝ իր լեզվեզական արքաներով եւ աստուածներով: Եւ կարծում էին, թէ նախակարապետներն են հայկական նոր Ոսկեդարի, նորագոյն Ռենեսանսի, երբ դարերի մոխիրից, աւերից ու աւարից ելնելով նոր թռիչք է ստանում նայիրեան հանձարը:

Համճարդ հայկեան, Ուասարդեան
սա տօներուն արեւալառ,
— Ա՛յ վերածնէ՛ փլատակներէդ
եւ փտագոչ բճարդ ա՛ռ: —

«Նաւասարդեան սա տօներուն արեւալառ»... Գիտէ՞ք այս երբ էր զրուում, ընթերցող... 1914 թուականին: Երբ օդում բուրում էր վառօդը, եւ օրը ցերեկով պայթուցիկ նիւթեր էին կուտակւում ամբողջ տաճկահայ ժողովրդի գլխին... Լա՛ւ «Նաւասարդեան տօներ» էին եւ ի՛նչ շարեւալառ ու փտագոչ»... Իրօք որ «Հեթանոսական» վակիտանայիա էր, որ ապրում էր հայ ազգայնական մտաւորականութիւնն այդ օրերին: Այդ մտաւորականութեան «բնական կազմակերպութիւնը» — «Հայ մարտական կուտակցութիւնը», ճիշդ որ «Հեթանոսական անփութութեամբ ասպետական Տրագի Հրթիռներ էր վառում յիշեալ պայթուցիկ նիւթերի շուրջը, մինչեւ որ նրանք բռնկուեցին եւ արեանիցդ արին ամբողջ տաճկահայ ժողովուրդը՝ «Հեթանոս» մտաւորականութեան ստուար մասի հետ միասին...»

Չարենց մեծ էր ու չէր կրնար պարագայական փոքրոգութիւններու ծիրին մէջ մնալ, ու Վարուժանի մասին գրեց.
Նրա ձայնը ելնում էր կարծես ժայռերում փորած ջրհորից
Եւ մաքուր, եւ ջինջ էր այնքան, ինչպէս ցօղը՝ դաշտերում:
Չարենց այսպէս քանց իր մեղքը: Միսնե՛րը սակայն...

ՇԱՀՆՈՒՐԻ ՊԱՐԱՆՈՎ...

Եթէ չենք սխալի, հայրենի մեր գրողներուն վաթսուներկան թուականներուն միայն թոյլատրուեցաւ անդրադառնալ, որ Սփիւռքի մէջ կայ Շահան Շահնուր անունով գրագէտ մը եւ կարելի է պարբերաբար խօսիլ անոր գրականութեան ու գաղափարներուն մասին:

Ս. Եղաւ այդպէս: Առանձին յօդուածներու թէ Սփիւռքի գրականութեան վերաբերող այս կամ այն գրութեան մէջ սկսան խօսիլ Շահնուրի մասին, որ անշուշտ, զիրեն համարում էր կոմունիստներին մօտ կանգնած, կոմունիստօրէն մտածող մարդ:

Շահնուրը իբրեւ այդ, իբրեւ զկոմունիստօրէն մտածող մարդ՝ Հայաստանի ընթերցողներուն ներկայացնող նոյն յօդուածագիրը, հանդուցեալ Հրաչիայ Գրիգորեան, շարունակելով «Սովետական Հայաստանի մասին նրա դիրքորոշումը» բացայայտել, կը գրէր.

«Ինչ ճշմարտացի ասանց երգիչ» վկայում նա հարեւանցի կերպով խօսում էր Սովետական հայրենիքի մասին՝ «Մենք ալ հայրենիք մը ունինք. պէտք է պատրաստ կենանք ինչ երթալու: Զբաղեցէք անով. պէտք է որ ճահիճները չորցնենք, պէտք է որ ջրանցքները բանանք...»:

«Նախանցքին ծանօթ ընթերցողները դիտեն հարկաւ, որ այս խօսքերը արտասանուած են նահանջողներուն ու նահանջականութեան դէմ ամբողջ հասակով ցցուած վէպին ամէնէն կենդանի հերոսներէն Լօխումի բերնով, զոր հայրենի մեր յօդուածագիրները, ամբողջ ասանքինը տարիներէ ի վեր, վատառողջ գաստիարակութեամբ սնած Հր. Գրիգորեաններէն մինչեւ յարաբերաբար ամբողջ դատողութեան տէր աղաքը՝ ներկայացուցին ու կը ներկայացնեն բաղբոսիկն ազնաւորած նկարագրով մը:

«Սովետական գրականութիւն» ամսագրի 1960 Յունիսի թիւին մէջ, Հր. Գրիգորեան կը գրէր Լօխումի մասին.

«Ինչքան յազիչ է հեղինակի ստեղծած Լօխումի կերպարը, որը ամբողջովիմ ազնուութեան մարմնացում է, երիտասարդ, որ ձգտում է իր ուժերը ծառայեցնել իւր հայրենիքի բարգաւաճմանը, որի համար այդ օտար միջավայրը հեղձուցիչ է ու անտանելի, սակայն նա էլ, զուրկ որսիւ է պայծառ հեռանկարից, ի վերջոյ ընկնում է այդ նոյն սկեպսիսի գիրկը, վարակոււմ ծայրայեղ յուսահատութեան ախտով՝ նախ տարոււմ է հարբեցողութեամբ, ապա օպիումով եւ ի վերջոյ խեղճանում, որովհետեւ այլեւ չի կարող գոյնալ ապրել»:

Լօխումը ի վերջոյ այդ կացութեան մասնողը ներքին ախտ մըն էր արդեօք, թէ արտաքին պատճառները որոշիչ դեր ունեցան անոր քայքայման մէջ:

Չմոռնանք զիչ առաջուան խօսքը, Լօխումի պոռթկուն ոտաւը վատաւերողներուն երեսն ի վեր.

«Մենք ալ հայրենիք մը ունինք. պէտք է պատրաստ կենանք հոմ երթալու: Զբաղիմք անով. պէտք է որ ճահիճները չորցնենք, պէտք է ջրանցքները բանանք»:

Կը նշանակէ, թէ պայծառ հեռանկար ունէ՛ր Լօխում, ունէ՛ր նոյնիսկ իր «Տայրը», Շահնուրը սովետականացնելու առիթ ընծայող կողմնորոշում մը, որուն դէմ գառա վճարեցնող ուժեր, շկամներ միայն, նոյնի նքն սովետները, անոնց երկաթեայ սրտերը, երկաթէ վարագոյրները: Անոնց յուսահատական վերաբերումէն ետքն էր, որ Լօխում յանձնեց ինքզինք յուսահատներու միջթարութեան, հաշիւին, գինովութեան, կամաւոր քայքայումին: Այս մասին՝ աւելի ուշ: Նախ՝ ամբողջացնենք Լօխումը սովետականացնող կամ ըստ ինքեան ոգորմելի գործօնի մը վերածող հայրենի գրողներուն կամայականութեանց ցուցակը:

Հր. Գրիգորեանէն երեք տարի ետք, Ստ. Թովչեան կը գրէր «Սովետական գրակառուցիւն» ամսագրի 1963ի Օգոստոսի թիւին մէջ.

«Նաեւանցը սկսած էր պատմութեամբ, եւ նորութիւն չէր, որ մի Լօխում իր հայրենիքում ցրանցեմք կառուցելու երազները պիտի կնկէր հաշիւով ու հոգեբուժարանով»:

Ի՞նչ կը նշանակէ ճերմութիւն չէր: Լօխումի ճակատի՞ն կնքուած էր նման վառնան մը, թէ այդ վիճակին մատնեցին զինք իր երազներին բախող արտաքին ազդակները, ընդ որս եւ Հայաստան երթալու անոր բաղձանքը արգելող սովետական սահմանադրութիւնը:

Ահաւասիկ երրորդ կարծիք մը, այս անգամ «Գործուն» ամսագրի այս տարուան Մարտի թիւին մէջ, ստորագրուած Գառնիկ Գալստեանի կողմէ.

«2ի կարելի նաեւ պահանջել, որ Շահնուրը յստակ կողմնորոշում տար սփիւնփռեցողութեան: Ինքնին Բիշ քան չէր արուեստի ուժով նաեւանցը մտահանելը սփիւնփռեցող կեանքի առաջին տարիներին: Այնուամենայնիւ, հերքումներին մէկը՝ Լօխումը հասկանում է, որ Սփիւնփին յանձնարարելի դիպատմութեւ նոր հայրենիքի՝ հորիդային Հայաստանի ուղին է»:

Ճիշդ է, որ Լօխում կը ձգտէր իր ուժերը նուիրել ճակատներէ բարգաւաճմանը, ճիշդ է, որ Շահնուր անոր անձին մէջէն կը շնչէր ներգաղթի հրամայականը, բայց ճիշդ չէ այդ տրամադրութիւններուն մէջ հեղինակին թէ իր հերոսին մէջ զիտուեցնուող մտածող մարդքը անհնէլ, «ճորճըր» դային Հայաստանի ուղին» բռնած ըլլալու իրողութիւններ վերագրել անոնց, ասիկա ուղղակի՛ չարափոխութիւն է, ընթերցողին անտեղեկութիւնը շահնուրին կամ հասկացողութիւնը արհամարհել է, որովհետեւ Լօխում սովետական կամ խորհրդային բաներէն անկախ ստացնալներ ապրող անձ էր պարզապէս, ներկայացուցիչը նահանջականութեան հակառակ շարժումին, բռնկումին, ամէն զնով հայրենիք վերադառնալու ցանկութեամբ տոչորող ա՛յն խաւին, որուն ապրումներուն, պարտաւորութիւններուն, առնելիք քայլերուն մասին ամէնէն՛ առաջ ու հանգամանաւոր շնչտով մը անդրադարձաւ Գալստեանութեան վերին մարմնի պաշտօնաթերթ «Երօշակ»ը, իր 1925 Օգոստոսի (թիւ 2) խմբագրականին մէջ, գրելով.

«Այս միջոցին մենք չունենէ՛ք աւելի ստիպողական, եթէ կ'ուզէ՛ք աւելի պրոլետարական խնդիր, քան համախմբումը հայածական ու ցիրուցան թագմութիւնների, արանց 90 առ հարիւրը աշխատաւորներ եմ, գիւղացիներ, արհեստաւորներ ու բանուորներ: Ամբողջ երիտասարդութիւնը կը ծիւրի հոգեպէս ու ֆիզիքապէս օտար փոքրու վրայ: Ինչ որ կը սպառի արտասահմանի մէջ, կորուստ մըն է ամբողջ աշխատաւորութեան համար, երկրի՛ն հասար: Նրանմի պարտքն է հասկնալ այս ճշմարտութիւնը եւ հասկցնել զայն ո՛ր որ պէտք է, եւ անոր համեմատ լարել իր ուժերը, միեւնոյն ասեմ պատասխանատուութեան երաւիրելով գաղութները»:

Նման ապրումներու, մտածումներու, նման քայլեր առնելու պատ-

բառաբանությունները ներկայացրին էր Շահնուբի ստեղծած Լօխու-
մբ, որ ուրիշներու պէս, Հայրենակարօտ աստեղծակ Հազարաւորներու պէս՝
բախեցաւ սովետական չկամութեան, Խորհրդային Հայաստանի ապիկարու-
թեան («Մեմֆ ամենայն հայոց կառավարութիւն չեմէ»), Հայ մարդուն ար-
ժէքն ու ճակատագիրը արհամարհող քաղաքական ահաւոր Հայրեններու:
Այսպէս՝

«Ստեղծակ զնսպանատուն է գացիր Լօխում, պանանդիւով, որ Հա-
յաստան երթալու համար իրեն անցագիր տան: Մերծիր են: Ըսեր է թէ
կ'ազէ իր հայրենիքը ասորի: մերծիր են: Ըսեր է թէ կ'ազէ նահիճներու
չորացումին եւ ջրանցքներու բացումին համար իր թագուկները տանի: մեր-
ծիր են: Ըսեր է նոյնիսկ թէ կ'ազէ Արարատը տեսնի ու շնչի գայն. նորէն
մերծիր են»:

Անտեսել Լօխումի այս արամադրութիւնները եւ բռնի, թէ ան զուրկ
էր «այայծաւ հեռանկարից», ըսել, թէ չիր հայրենիքում ջրանցքներ կառու-
ցեալու երազները ճակատագրականօրէն «պիտի կնկէր իր շնչով ու հոգեբու-
ժարանով», եւ սակայն՝ անոր քայքայման պատճառը տեսնել միայն օտար
միջամտարին եւ խառնուածքային կամակորութեան մէջ, կը նշանակէ պար-
զապէս անարդար ըլլալ ու նկրտիլ դիտումնաւոր մտացութեան տալ իր
միակ յոյսը, յոյսերուն վերջինը ոչնչացուցած սովետական քարտրութիւ-
նը («մերծիր են»), Հոգեպէս ու Փիզիքապէս Հիւժող արարագիր Հայութիւնը
իր բախտին ձգելու ոչ-հայրենական խորհրդային կեցումները:

Եթէ «քննադատական ուսելից» ըսուածը նշանակութիւն ունի, ապա
ուրեմն պիտի ընդունինք, որ Հայրենակարօտ, Հայրենիքին իր բազուկները
խոստացող Լօխումին հանդէպ ցուցաբերած սովետական վերաբերումին
(«մերծիր են») ընդմէջէն՝ Շահնուբ սուր քննադատութեան կ'ենթարկէր
նոյնի՛նքն սովետականը, զայն նկատելով մեր հիւժումին, քայքայումին,
նահանջին գլխաւոր պատասխանատուներէն մէկը, ըսինք արդէն ինչո՛ւ, իր
չկամութեամբ, ապիկարութեամբ, ով դիտէ ուրիշ ի՛նչ պատահաներով, Հա-
չիւններով...:

Վէպի մը հերոսը քնութագրելու ատեն պարտաւոր ենք Հաշուի ատեն
անոր ապրումներն ու փորձառութիւնները, այլապէս կարելի չէ գերծ մնալ
կողմնակալութեան, կուսակցամոլութեան եւ Հաշուախնդրութեան անարբիլի
արատներէն, որոնք Հայաստանի մամուլին մէջ մուծուեցան Հանդուցեալ
Հր. Գրիգորեաններու կողմէ եւ լաւ կ'ըլլայ, որ հանդուցեալ քարքերու
մաս կազմեն նաեւ անոնց կիրարկած երկարամեայ կուրութիւնները, չարդե-
գրաւին նորերուն կողմէ, նորերը մեղք են, պատրանքներ կապուած են նա-
րերուն:

Դիտել ատենք, որ միայն սոսկական անձերը չեն, որ Շահնուբը «Սովե-
տականին» հետ կապելու անհեթեթութիւններ դուրս տուին, այլ նաեւ պաշ-
տօնական օրդանները, որոնց մէկուն, «Սովետական գրականութիւն» ամ-
սագրի 1963 թիւ 8ին մէջ խմբագրութեան կողմէ պաշտօնապէս զրուեցաւ:

«Երկարատու հիւանդութիւնը չի ընկնիլ Շահնուբին. հազիւ ապա-
հիմուած՝ նա չեմօրէն կապուել է իր ժողովրդի եւ հայրենիքի՝ Սովետա-
կան Հայաստանի հետ, որի առաջադիմութեան, քարգաւառման ֆլամարիտ
հաւատացեալն է»:

Ըսինք արդէն, որ Շահնուբ սովետականին եւ անոր կապուած որեւէ
«առաջադիմութեան» հանդէպ Հաւատացեալի որեւէ՛ կեցումներ չունէր, թող
կրկնէ ի՛նքը, այս անգամ Վահագն Դաւթեանի մէկ քննադատութեան ըրած
իր արձագանդին մէջ:

«Ան (Վահագն Դաւթեանը) զիս կը դատաւարուէր այժմ ամբաստանութեամբ, քէ Հայաստանի ներկայ վերելքը, որ ներկայ ժամանակներու նուաճում է, չեմ յիշած եւ ոչ ալ ներքողած եմ 35 տարի առաջ: Արդարեւ, չեմ ներքողած, ինչպէս որ չեմ գովեր, այսօր, Վահագն Դաւթեանի բանաստեղծական տաղանդը: Կարելի չէ գովել այն՝ որ գոյութիւն չունի»:

Վահագն Դաւթեանի ստղանդը ուրանալու պարագան ուրիշ խնդիր է, եւ նիւթ՝ Շահնուրի մէկ գերազնահատուածին հետ կազմուելիք բազդաաւանական պատկ գրութեան մը:

Իսկ նարցը միւսն է հիմա, «Հաւատացեալ» Շահնուրի ոչ-Հաւատացեալի պնդումը:

«Արդարեւ, չեմ ներքողած», *եւ յետոյ՝ պատճառարանութիւնը:*

«Կարելի չէ գովել այն՝ որ գոյութիւն չունի»:

Միշտ այսպէս եղած է Շահնուր: «Նախանք»-ն ու «Յարալէզներու դաւանանք»-ն չափազանց հատրէն ետք մանաւանդ, երբ գլխիվայր նետուեցաւ Հրապարակագրութեան մէջ, ուրացաւ ո՛չ միայն «Մովհանական Հայաստան»-ի անուրանալի նուաճումները, այլեւ առհասարակ Հայրենիքին համար վաստակած կամ Հայրենական տարերջով գրուած բոլոր գործօններն ու գործերը: Այդ մոլուցքը օրգանական էր իր մէջ եւ կը բխէր իր էութիւնը «Հիմարտապէս ընտելացրող հետեւեալ կեցուածքէն, արտայայտութենէն»:

«Այն երկիրը, ուր կը բուսին մեր իմաստութեան անուները, այն երկիրը մեր ծայրեմիջը կ'ըլլայ: Իմ հայրենիքս Տրանսսան է»:

Ազրուսներու, կեցուածքներու, արտայայտութիւններու այդ ամբողջէն մեկնելով էր, որ խռովեցաւ Շահնուրի գրական ընկերներէն ընտելացողները, Վազգէն Շուշանեան եւ գրեց «Իմ Հայրենիքս Տրանսսան է» գոշոզ եւ օտարածուցութիւնը դրօշի վերածած օտարածուցի կենսագրափէլը, բնորոշ խորագրի մը տակ՝ «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորք»:

Շուշանեանի այդ գործին մեռագիրը Հայաստան կը գանուի այժմ: Դժուար է գուշակել լրջին դալու անոր բախար: Առայժմ բաւարարուինք ուրեմն Շահնուրի «Հայաստանասիրութեան» մասին Շուշանեանի տղայակից վկայութիւններէն, սպուած՝ «Նայիրի» շարաթաթերթի 1955ի թիւերուն մէջ:

Շահնուրի «Հայրենասիրութիւնը» շատ ջուր վերցնող խնդիր մըն է եւ կարելի չէ այդ սպրուստին կապակցութեամբ անոր պարանով լրհոր իջնել: Հող պարտաւոր են զգոյշ ըլլալ ի՛ մասնաւորի Հայրենի մեր կարճատուն գրիչները:

ՎԱԶԳԷՆ ՀՈՒՇԱՆՆԵԱՆ

Օ Ր Ա Գ Ի Ր

4 ՓԵՏՐՈՒԱՐ 1941

Քանի մը տարի առաջ, Հ. Հահնուրի հետ վերջին հանդիպումներէս մէկուն ընթացքին, Լիւշաէնպուրկի պարտէպին նստարաններուն մէկուն վրայ,— խօսակցութիւն մը նոյն նիւթին շուրջ:

«Հագիւ բոքերը բուժուած» սկսած էր ցոյց տալ ոսկրային հիւժախտի առաջին նշանները: Տարրական խոհեմութիւնը կը պահանջէր, որ հետեւաբ Փարիզէն,— այս դաժան բաղաբէն, որ անյազ մոզոքի մը պէս կը խմէ մեզմէ լաւագոյններուն արիւնը: Մեղմօրէն կը ջանայի ըսել իրեն առիկա: Ու յետոյ վախճան մը պէտք էր ունենա՛ր թէ ոչ՝ մեր պանդխտութիւնը այս երկրին մէջ:

Ապրիլի զս.դ.ջ, անուշ յետմիջօրէ մըն էր: Պարտէպին բոլոր անկիւններէն կը բարձրանար զարնան երգը:

— Ինչո՞ւ մեր ոսկորները ձգել այս երկրին մէջ, որ որպէս ազգային փոքրամասնութիւն ոչ մէկ ապագայ ունինք: Գէտք է որ ուշ կամ կանուխ վերադառնանք մեր երկիրը...

Իր սուր, բարակ դէմքը դարձուց ինձ:

— Մեր երկիրը,— յարեց անբմբռնելի շեշտով մը:

— Վստահ եմ, որ եթէ զիմում ընես կ'ընդունինք քեզ: Ու կեանքի այս բոլոր սպառիչ հոգերէն կ'ազատես: Երբեք կուսակցական չես եղած, հետեւաբար «խոտելի անցեալ» չունիս: Վստահաբար, երբայէ վերջ, կրնաս երջանիկ լլլալ, ընտելանալ՝ երկրի մթնոլորտին, զունքեզ հարապատ զգալ ժողովուրդին հետ...

Չոր, կամակոր վճռակամութեամբ մը ընդմիջեց զիս.

— Երբե՞ք,— ըսաւ ցուրտ հաստատակամութեամբ:

Ապշուրեամբ նայեցայ երեսին:

— Ես ես խորապէս, անզառնալիորէն արեւմտահայ եմ,— անելցուցի վայրացած.— բայց ի վերջոյ ազգը վեր է մեր հաստածական նախասիրութիւններէն: Ու Հայաստանը մեր միակ երկիրն է, մեր ապագան: Ուշ կամ կանուխ պէտք է, որ վերադառնանք...

— Երբե՞ք.— կրկնեց նոյն յամառութեամբ:

Ու ինձ թուեցաւ, թէ կրնար ոտքը գետին վարնել վայրոյթէն, շփացած մանուկի մը պէս, որ յանդիմանութեան կ'արժանանայ:

20 ՓԵՏՐՈՒԱՐ 1941

... Կարելի՞ է միթէ երեակայել Հահնուր մը երեւանի մէջ: Մէկը՝ որ Սկիւտարի նախապատերազմեան հայութենէն զուրս ուրիշ ժողովուրդ չի ճանչնար, ինչպէ՞ս կրնայ սիրել այն առողջ ու շէնշող երիտասարդութիւնը, որ հայկական գիւղերէն կ'իջնէ Երեւան, իր պտարթ թոքերով, որ բացի մեր լեռներուն հովերէն ուրիշ օդ չեն շնչած: Հահնուր կրնայ՝ միթէ անոնց խօսիլ Փօլ Պուրժէէն, որ Ֆրանսայի մէջ իսկ լոկ բրածոյ մըն է եւ Հարլ Մորասէն, որուն գիւկին վրայ պիտի չուզէին իսկ միպել մեր երկրին տղաքը: Այս պատճառաւ է, որ Հահնուրներն ու իր նմանները երբեմիցէ չեն ենթադրել իսկ, թէ մեկնումի բաղցր ժամը կրնայ հնչել: Ու անզուսպային ներզաղթի հեռանկարը լոկ մտահոգութիւն կը պատճառէ իրենց:

ՎԱԶԳԷՆ ՀՈՒՇԱՆՆԵԱՆ

Բանաստեղծական իր սենյակ ստեղծելն էնա, Արթուր
Ալիբեկյան սենյակ մանրամասն էր ապրիցու յատկապէս
Փրանսական գրականութեան մեծերուն էնա, մանրա-
մասնաբար ու սիրով պայմանաւոր թարգմանչական աշխարհ
էջեր փոխադրելով մեր գրականութեան Այդ մանրամասն
զինն էր ներքին Աֆոյիներէն ճիշտներքս անունին սակ էա-
տընտիր փունջ մը ընթերցողին ընծայելու փաստը:

Վերջերս, Վեպետական գրականութիւն (Յոյսաւա)
ամսագրին մէջ, Վեպետական ֆրանսական դասական գրա-
կանութեան անունին սակ՝ Ալիբեկյան ներկայացուց թարգ-
մանչական ստեղծելու նժուշներ, սանտան՝ ժե. գորէն
մինչև ներկայ գորուն սկիզբը Փրանսական գրականու-
թեան մէջ յայտնուած մեծանուն բանաստեղծներէն:

Ալիբեկյան ընտրած այդ կտորներէն շատերը թարգման-
ւած են սակէ սակ, բայց զատական զորները, վերջապա-
րակաւելու իրենց յարմին էնա՝ իջ թուի, թէ վերթարգ-
մանուելու յախտ մըն ու սակին, եւ շուտ որ սակին, որով
էնուն այդ հանգամանքը, թարգմանչական արուեստին ա-
որնթեր՝ իջ յայտնուած էնա սակու լեզուին ներառու-
րութիւնները:



ԱՐԹԱՐՄ ԱԼԻԲԵԿՅԱՆ

Մեկնելով այդ երկու գտնուածներէն, երկը ընդգրկներու էնա՝ Հետագայ էջերուն
էս ստեղծարար բանաստեղծներու կողմէ կատարուած սենյակ թարգմանութիւնները:

Արթուր Բեկարձի Վեպետականներուն երբորդ թարգմանիչը, զուտը, չկրցած ստու-
ղել:

ԶԿՆԿՈՒԼԸ

Յաճախ նաւաստիներ, գուարնութեան համար,
Զկնկուլ են բռնոււմ՝ ծովային մեծ թռչում,
Որ, նամրի յայլ ընկեր, հետեւում է խաւար
Վիհի յայն երայտով սահող նաւի ուզում:

Բայց հագիւ են նրան դնում կամրջակին,
Կապոյտի այդ արքան՝ խալնուտ ու ձախաւեր,
Կախում է ոգորմուկ թեւերն իր անագին
Ու էարշ տալիս կողքին, ինչպէս ներմակ թիւր:

Դեռ քիչ առաջ չէնաղ ուղեւորն այս նախրում
Ի՞նչ տխրեց է հիմա, ծիծաղելի, ճղճիւմ.
Մէկը ծխամորձով իր կտուցն է գրգռում,
Իսկ միւսը, կազալով, հեզնում թեւատ խեղճին:

Բանաստեղծն է նման անպերի իշխանին,
Որ հագմն է քամահրում եւ նետը թունալի.
Ախարական՝ երկրում, սոյլ ու հայհուչ չորս դին,
Թեւերն իր սիտանեան չեն թողնում, որ քայլի:

Թարգմ. Արթուր Ալիբեկյան

CHARLES BAUDELAIRE

L'ALBATROS

Souvent, pour s'amuser, les hommes d'équipage
 Prennent des albatros, vastes oiseaux des mers,
 Qui suivent, indolents compagnons de voyage,
 Le navire glissant sur les gouffres amers.

A peine les ont-ils déposés sur les planches,
 Que ces rois de l'azur, maladroits et honteux,
 Laisent piteusement leurs grandes ailes blanches
 Comme des avirons traîner à côté d'eux.

Ce voyageur aillé, comme il est gauche et veule!
 Lui, naguère si beau, qu'il est comique et laid!
 L'un agace son bec avec un brûle-gueule,
 L'autre mime, en boitant, l'infirme qui volait!

Le poète est semblable au prince des nuées
 Qui hante la tempête et se rit de l'archer;
 Exilé sur le sol au milieu des huées,
 Ses ailes de géant l'empêchent de marcher.

ԱԼԳԱՅՐՈՍԸ

Նաւաստիները յամախ իբր գրօսանք կը բռնեն
 Ալպաթրոսներ՝ ծովերու թռչունն այդ մեծ ու շքեղ,
 Որոնք կուգան, ուղեկից ընկերներու պէս մէկտեղ
 Շագնեալին հետ սահող դառն անդնդոց վրայէն:

Սակայն հազիւ թէ դրուած տախտակներուն վրայ գետնի,
 Այդ կապույտի արքաներն՝ ամօթահար, աննարակ՝
 Կեղծուկ մը վար կը ձգեն թեւերնին յայն ու ներմակ,
 Ձերթ ճովերճէն քաշշուող, ջուրը ալող գոյգ մը թի:

Այս ուղեւորն օդաչու ի՞նչ ճախրիկ է ու անկամ.
 Ան քիչ մ'առաջ ա՛յնքան վեհ, ինչպէ՛ս սրգեղ է հիմա.
 Մին ծխամորճ մը խըրել կըտուցիմ մէջ կը ջանայ,
 Կը կազայ միւսն հեզին պէս, որ կը թռէ՛ր յարածամ:

Կը նմանի բանաստեղծն այս իշխանին ամպերու՝
 Որ փոթորիկին մէջ կ'երթայ եւ է նետին անտարբեր.
 Ահարական հողին վրայ՝ ուրկէ կ'ելլեն հայտաւորներ,
 Անոր թեւերն հսկայի զինք կ'արգիլեն քայլու:

Թարգմ. վ. Թեւէեան

ARTHUR RIMBAUD

VOYELLES

A noir, E blanc, I rouge, U vert, O bleu: voyelles,
Je dirai quelque jour vos naissances latentes:
A, noir corset velu des mouches éclatantes
Qui bombinent autour des puanteurs cruelles,

Golfes d'ombre; E, candeurs des vapeurs et des tentes,
Lances des glaciers fiers, rois blancs, frissons d'ombelles;
L pourpres, sang craché, rire des lèvres belles
Dans la colère ou les ivresses pénitentes;

U, cycles, vibrations divins des mers virides,
Paix des pâtes semés d'animaux, paix des rides
Que l'alchimie imprime aux grands fronts studieux;

O, suprême Clairon plein des strideurs étranges,
Silences traversés des Mondes et des Anges:
— O L'Oméga, rayon violet de Ses Yeux!

ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐ

*Պրանսերէն ձայնաւոր տառերու անդ գրուած են
հայերէն համապատասխաններ: Ը՛ - ի փոխարէն:
Քերթուածին ներգաշնակութիւնն ու կշռոյթը պա-
հելու համար, հայերէն ձայնաւորները պէտք է կար-
գալ իրենց ձայներով միայն եւ ոչ թէ անուններով:
Այսպէս — Ա.Ի.Ը. եւ ոչ թէ Այբ, Ինի, Ըթ:*

Ա սեւ, է ձիւն, Ի շէկ, Ը մորթ, Օ խած, ձայներ,
Պիտի օր մը պատմեմ ես ձեր ծնունդը բախում:
Ա՛ սեւ ձրկակ խրոխ բոցափայլ մանճերում
Բզգացող գարշաբեանց շուրթը՝ խորշ մբաստուեր .

Է՛ անբիծ գոյարշի, քոչմոց վարմ, ճիգակուող
Ամեհի սառնայեւ, յիմջ արքայ, ու սարսուռ .
Ի՛ ծիրանի, արիւն, ու ծիծաղ շրթներու
Ազուր, պիրկ՝ ցատումէ կամ գոջումէ՝ գիմով .

Ը՛ շրջան, քրքրացում, կամայափայլ ովկիան,
Առտավայր անգորր, ուր կ'արածին հօտեր,
Անդորր՝ ուսումնարեկ մակատներու խոհում .

Օ՛ գերագոյն Շեփոր, հնչիւն տարօրինակ,
Լուսբիւն, գոր կ'ակօսեն Աստղեր ու Հրեշտակք՝
Օմեղա մեղեսիկ, Օ՛ շողմ Իր Այգերուն:

Թարգմ. Ս. Մահակեան

ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐԸ

Ա-ն սել է, Ե-ն՝ սպիտակ, Ի-ն կարմիր է, Ու-ն՝ կանաչ,
Օ-ն՝ կապույտ է: Ո՛վ տանե՛ր, ձեր ծնունդը կը պեղեմ:
Ա-ն՝ սել, փրշոտ սեղմիրան, բիր ճանճերի բոցալանջ,
Որ բզզում են գարշահոտ ազտեղուքեան շուրջ դժխեմ:

Ե-ն՝ վրանի ու մէզի մաքրութիւն, հե՛ղ բազաւոր,
Սառցադաշտի սէզ տէգեր, հովանոցի մեղմ ալիք.
Ի-ն՝ գղջացեալ արբեցման կամ գայրոյթի մէջ բռնար
Գրքիչ չճնաղ շրթների, փոխած արեան ճապաղիք:

Ու-ն՝ կանաչացած ծովերի վեմ բրթիւ ու ծփահէ.
Հալուական կեանք մարգերի, կնիռների անդորրանք,
Որ ալիւմին է ցանուս հակառակներն իմաստուն:

Օ-ն՝ վեհ Շեփոր, ուր ճռտան գոյութիւններ կան վայրի,
Հրեշտակներ ու Աստղեր այցելած խոր լռութիւն՝
Օ-ն՝ օմեգան, երկնագոյն ճառագայթն Ի՛ր աչքերի:

Թարգմ. Արաւհամ Ալիքեան

ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐ

Ա սել, է ներմակ, Ի կարմիր. Իւ կանաչ, Օ կապույտ. ճայնաւորներ
Պիտի յայտնեմ օր մը ձեր կայուն ծնունդը.
Ա, գունեղ ճաններու մազոտ սել իրան
Որոնք կը բզզան դաժան գարշահոտութիւններու շուրջ .

Շուքերու ծովածոց. է, վրաններու եւ շոգիներու անարատութիւն,
Հպարտ սառցակույտերու նիզակներ, ներմակ թագաւորներ, անպիտաններու
սարսուռ .

Ի, ծիրանագոյն, թքնուած ալիւն, գեղեցիկ շրթումներու ծիծաղ
Բարկութեան կամ խղճահարող արբեցութիւններու մէջ:

Իւ, շրջանակներ, խաժ ծովերու աստուածային բրթոսցումներ,
Կենդանիներով ցանուած արօտատեղիներու խաղաղութիւն, կնիռներու
խաղաղութիւն

Ձոր քիմիագիտութիւնը կը կնիքէ ժրջան մեծ հակասներուն,

Օ, գերադոյն Փռզ, յորդագեղ տարօրէն զիլ ճայներով,
Աշխարհներու եւ հրեշտակներու խաչաչեւուած լռութիւններ.
Օ Օմեկան, Իր Աչքերուն մանիշակագոյն ճառագայթ:

.

PAUL VERLAINE

CHANSON D'AUTOMNE

Ա Շ Ն Ա Ն Ե Ր Գ

Les sanglots longs
Des violons
De l'automne
Blessent mon cœur
D'une langueur
Monotone.

Tout suffocant
Et blême, quand
Sonne l'heure,
Je me souviens
Des jours anciens
Et je pleure;

Et je m'en vais
Au vent mauvais
Qui m'emporte
Deçà, delà
Pareil à la
Feuille morte.

•

Հեծֆերն երկար
Ջութակներուն
Աշնաթով
Կը խոցեն սիրուն
Իմ միայր
Թախիծով...

Եւ շնչասպառ
Տժգոյն երբոր
Հնչէ ժամ,
Կը յիշեմ հին
Օրերն անցեալ
Եւ կու լամ:

Այսպէս կ'երթամ
Ես տարուբեր
Չար հովէն,
Տերեւին պէս
Որ թարշումած
է արդէն...

Թարգմ. Ա. Երկաթ

Հեծֆերն անհուն
Ջութակներուն
Աշնայիմ
Կը խոցեն զիս
Տալով սրտիս
Թալուկնին:

Եւ շնչահատ
Համակ գունատ՝
Երբ գայ ժամ,
Կը յիշեմ ես
Իմ հին օրերս
Ու կու լամ:

Ես կ'երթամ յար,
Ուր հովեր չար
Ջիս տանին,
Հոս հոն՝ նրման
Գոս. անկենդան
Տերեւին

Թարգմ. Զ. Ասատուր

•

Աշնաթայիմ
Ջութակ ու վին
Հեծելով,
Սիրտս եմ խոցում
Նայն կսկծուն
Թալուկով:

Երբ ժամն է խուլ
Հնչում, ես թռչլ
Ու տժգոյն,
Հին օրերն եմ
Յիշում ու մեղմ
Հեկեկում:

Եւ գնում եմ
Չար հողմի դէմ,
Որ ինձ յար
Քշում է հեզ
Տերեւի պէս
Դալկահար:

Թարգմ. Արտահամ Ալիքեան
A.R.A.R.©

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ՝

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՍԵՐՄԱՑԱՆՆԵՐԸ

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)

•

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

(Վ.Է.Պ)

•

Ա. ԳԱՐԱՂԷՔԵԱՆ

ԱՆՎԵՐՋԱԿԵՏ ՃԱՄՐՈՐԳՈՒԹԻՒՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 20 ՏՈՒԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، أدبية وفنية عالية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك فزانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

•

ԽՐԱԳԻՐ
Գ. ՍՆԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban